



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

50

187  
2887

XVI m.

152

Ն Ո Ւ Ա Ք Ք

*Միտում էի*

Հ. ՂԵՒՈՆԴԵԱՅ Մ. ԱԼԻՇԱՆԵԱՆ

ՄԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ



ՎԵՆԵՏԻԿ

Ի Ս Ո Ւ Բ Բ Ղ Ա Չ Ա Ր

ՌՅԻ - 1858

ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈՅ

ՄԱՆՈՒԿ ՊԷՅԻ

ՍՏՈՒԱԾԱՏԵԱՆ

ՀԱՅՐՈՒՆԻ

Փ Ա Ռ Ա Յ

Հ Ա Ր Ա Ն Յ Հ Ա Յ Ո Յ

Մ Ե Ն Ա Յ Ք Ա Ջ Ա Յ Լ Ա Ի Ա Յ

Ի Յ Ո Յ Մ

Հ Օ Ր Ա Մ Ո Յ Ն Ն Ո Յ Ի Ն Ո Ր Դ Ի Ո Յ

Ի Յ Ո Ի Շ

Ի Մ Ո Յ Ս Ի Բ Ե Լ Ե Ա Յ

Ն Ո Ի Ե Բ



Ի Բ Ա Մ Բ Ի Ո Ն Հ Ա Յ Կ Ա Ջ Ն Ի

**Բ**ամբխոնն փառադոչ յաւիտենիցն հըսկայա-  
ղանց ,

Յարփիսակիղըն յաղեղնարցան ի ընդաւատ  
մարդկան գրոհի ,

Ի մարըն արանց քաջաղեղանց անձնագեղիցն եւ  
հերապանձ ,

Յամենազանն յերանախան յատուածապարգ  
ծայցն աշխարհի՝

Փռնէնցայ ի բարձր ի հայկարան ,

ՅԱզատ լերանցըն յարոււան .

Ի լռանկառ խորանդընդոց

Մեծամոռացն ամանակի

Կոչել ըզփառա Մեծայ հայոց ,

Զհայրենին սէր կոչել նախի՝ :

Արփիացի՛ր արփիդ հոգեաց, բորբոքեալ զսիրտ իմ  
սիրակայծ .

Կարկառ զմտօին ծայր ի Բամբիոն՝ ի քո եւ յի-  
մբա Հայկազնի,

Որ առաջին զոր լռակիր լոկ յերկինս զերգ՝ յեր-  
կրէ հընչեաց,

Եւ հովիտք Այրարատայ դանչեցին զճածուկս  
երկնի .

Մըշտերդ սարուցն հոյբ ատեալ դու-  
լգրանչացան ի վայր զանխոււ,

Ի վայր՝ որ նախ քան զամեն վայրս

Չաստուածութիւն քո թարգմանեաց,

Եւ արձագանգք դեռածինք յայրս

Հատին զերկինս յառուց Մասեայ :

Ամենատիւն նմանեալ հոգւոյն՝ ելէր բամբիոն  
յերկիր Հայոց

Չհամատարածսն վարելով սինեզերաց լըռու-  
թիւնս .

Անդ հրաշալին ըզհոգեղէն շունչն յիւրակերան  
արկ հոյց ծոց .

Եւ մարդ շնչեաց, սիրեաց ըզշունչ, եւ սիրեաց  
զերգ, սիրեաց հնչմունս .

Յայնժամ ետեղծ զբամբիոնն պանծ

Չաւագոքնար հանուրց աղանց,

Չոր Յարեթայն զարմն եռանդուն

Ըգբռամբ ածեալ ընդ նախն երկրի,

Ետանդեցոյ ըզհայկազուն

Չանդրանկագեղն ազգ, զազգ արի :

Արհաւիրք եւ մահարձանք ոչ արդեւուն զՀայկա-  
զն սիրա,

Արհամարհեալ ըզկախարչաւ շրմի՛ յայտե՛ ծուխ  
ծիրանի .

Հզորագոյն հորթթեւիք սրացաւ եւ ել կաց ան-  
խրլիրա .

Միրելեքն սիրացան, հարան ոտիքն ըզդո-  
զանի .

Դարբ բորբին զյիշատական

Յաստուածութիւն խառնի համբաւն .

Հովանանս նրմա երկինք,

Ինքն հովանի երկրին իւրոյ .

Եւ գերեզմանքն սուրբ բաղինք

Հայրենական ստեղանց սիրոյ :

Ո՛վ եռափայլ եռախորհուրդ կարմիր-կանաչ-կա-  
պոյտ Հայոց,

Իբոքք հայրենի յէջն ատեալ դու զծալ ի ծալ  
ճոցոյդ պարզուած՝

Մինչ ի ծովէն յաւիտեանից ժամանակ նոր դեռ  
բանայր ծոց,

Այն ինչ երկնից հարթեալ Հաստջն հրաման  
զերկիր լաստեաց .

Ի զիլ գառով բանայր ճակատ

Միջակառոյց սարն այն ազատ՝

Չոր Արարատ կոչեաց աշխարհ,

Հայկազն ասաց Աղաս Մասիք .

Անդ փրտեաց տէր ըզգրօշուդ վաս

Եւ տաւաղեաց շուրջ ըզմարդկի :

Անդ հովանոց Ազանոց, անդ սուն Կոյի, ոստանն  
Հայկայ՝

Զոր քաջութեամբ բազկի, մլտացն ուշով զար-  
մին սեփականեաց .

Ամենահաշտ աջօք յերկրի դիտեաց Աստուած  
զայն վայր միայն .

Նրմա միայնոյ զնախանձերն քնարաց զբամբու-  
նըն նըւերեաց .

Բան ըզՊատնայ եւ զՄիտնի

Անյաղթ բամբին ինձ Հայկազնի .

Ի քէն ծընան երգք հայրենի ,

Բեւ մարդեցան ժայռ ու ախտայնի .

Շնորհք յաւերան բնութեան նախնի

Երբ դու լսելի արարեր ձայն :

Ի բամբ եւ բոմբ երկնադաշնակ սրասյարոյց բամբ-  
նանդ Հայկայ՝

Գուպարեցան Մասիբ Կովկազք, արկին ի ձորս  
ըզսնք Տիտան .

Ընդ չորք հովնմա վարդեալ վաղեաց յաղթողն  
Արամ յԱրմաւրայ .

Զլիճն անարի սայլթուցանէր յառին Մասեաց  
չեակըն Տիգրան .

Թափեալ զոբին սահմանքն Հայոց

Յաղատութեան բնդարձակ ծոց .

Խալց մեղու խաղան հոսանք ,

Ծերք սարարին , սընդին արուսրք ,

Գեղեցկանան նաղէն կուսանք ,

Եւ բողբոջէն մանկութիւնք նորք : . . .

Պընդեաց Բամբինն Հայկազնի . տիրահրաւեր ձայն  
է առ քեզ .

Շախնդ ըզլթայց եւ հեծութիւն ըզքեզ կարգայ  
'նդդէմ՝ գոռոյնն՝

Որ տապալեալ զաթոս ազանց բարձրացոյց  
զբաճ իւր երկնադէզ ,

Եփրատ Տիգրիս զպտուանդանաւն սրղէս սը-  
կունդք քըծնեալ սուղին .

Օտարաձայն ըբթուներ հարկւր

Աղերապառք առ խուլ ունին իւր .

Պատգամաբերք եւ սրասարաքք

Ծաղայց ծովու ու անապատի

Եւ ի խորոց երկրէ նուերակք

Զբաւեն ի յաշտ սեզըն սըբալի .

Ազգք եւ աստուածք առ հասարակ տապալեցան  
ցիր առաթուր ,

Լէրինք սարտեան , ամիտփեցան անապատք ,  
ծով հետի հատառ .

Փոքրը մեւ եւս փոքրը մեւ եւս հրդեհեցցին  
եւ օգք յահուր ,

Եւ ասպատակ Բաբելոնի հարցի ննդ հիւսիս ,  
սպանցէ զհարառ .

Ճակատեցի եւ ընդ աստեզ ,

Կարգայցէ զՏէր ինքն յապարէս .

Ահա խորան Տեանն հարառ սուրբ ,

հարառ ի հող պերձն այն տաճար .

Աճառք մայրցից ծախին ժանտ սուրբ ,

Եմուտ Միտն ի սուգ խաւար .



Հասան սաղմոսք Սաղեմայ, բլուրք Բեթեղայ ոչ  
եւս կայթեն .

Գուշակ քո Տեր, գուշակ քո սուրբ որ ընթեւ  
նոյր ըզհանգերձեալ՝

Հող ի դրօւն ընդ Զայլամարս երթայ կոծով յո  
եւ վարեն ,

Եւ ի ցրուէն Իսրայելի չքիտե յ՞՞ր Զոխ խառնել  
ըւքայլս .

Յահանց Գովզան մինչ ի Տափնաս  
Լալեայ գերեաց ճապաղեալ դաս .

ՅՆփրատ սղտոր յուռեաց գիսակ  
Սաղմոսարանք ճօճան ի դուր .

Անկեալ կոխին զէնք եւ դասակք . . .  
Եւ դու Տեր, ցերք կայցես դու լուռ :

Օ՞ն անդր երկնից զօրութիւնք, առէք զիմ զէն աս  
առածանալ ,

Նիգակակից յերկրէ զհիւտին ձեզ յարուսցէ  
աղցն հերասպանձ . . .

Փռնչեանց բամբինըդ փառաբոջ, Պատուէր  
յինէն սուր Ասքանալ ,

Զիշխանս եւ գունդս Արարատայ, զամէն զար  
թն տուն Հայկազանց

Ե՛րթ Հայն նիգակ, երթ ի Բաբել  
Ըզլեգն հարոււլ, զՅահոր թափել\* .

\* ԽՈՐՈՆ. Ա. Ին. « Վ կայե եւ Երեմիա մարգարե ի բանս  
,, եւր (ԾԱ. 27.) Տրաւիրելով ընդդէմ Բաբելոնի ի պատե  
,, բազմ. Հրաման սուր ասէ Այրարատեան թագաւորու  
,, թեանն եւ Ասքանազեան փոլին , , :

Եւ դու Բամբինըդ Հայկազնի  
Երթ օղնական առ Երեմի ,

Հար, լուսեց զոգբ Սիոնի ,  
Կանգնեա զպարիսպս Սաղեմի :

Բոլորեալ յարմուռ ու ի հիւս հանգնեայ երթ արդ  
բամբինս Հայոց ,

Զարթն զուրուս յաբեթածին եւ զսեմականն  
արշակունեաց .

Ի բաղուանէ ի բազաւան բարձրացն զցորձ քաջ  
արանց քոց ,

Հարան հէնք հիւտի , հոյլք Հոսիւնց , Արեայ  
եւ Անարեաց .

Երգեսցէ Վրոյր պերճ վկայասան  
ԶԱյրաբաջն \* հօրն իւր օղնական ,

ԶԱլանազնեայն զըսարիկ ծաւի ,  
ԶՎ Կապաղունս տապաստ կայթիւ ,

ԶՏորք եւ Տրդատ ի դու կուռի ,  
ԶԱպեա , զՄամուռն դոզդէ բամբինս :

Բամբինս Հայոց, բամբինս աննահ, օճան աղանց  
ու երկնից անգամ ,

ԹՈՒՄ. ԱՐՄԲ. Ա. « Կիւրոս առնուր զԲաբելոն եւ արձակե  
,, զգերինս Հրէից ընդդէմ նորա զօրածոյնով եղեալ . . . ազգ  
,, բարբարոս խուժագուժ . . . (Տեղբան առարքէ օժանդակ  
,, Կիւրոսի 40000 արս, ողբ) տուեալ պատերազմ . . . ամսու  
,, բեայ մի ժամանակ, յորում ոչ սակաւ քաջութիւն նա  
,, Հատակութեան ցուցեալ զօրացն Հայոց . . . եւ զօրդինս  
,, Իսրայելի առեալ գնացին յաշխարհն իւրեանց մինչ ի  
,, սուրբ քաղաքն Երուսաղէմ , , :

\* Միբատ բիւրատեան , պարպաղեալ Արատախի Ի , հօր  
Վյուրի :

Բզմէ լուսթիւնք եւ մուացօնք, եւ դարք դան-  
դաղք եւ ահափետ . . .

Սթափեանց, փորնչեանց, սուր զգատուէր Տեանն,  
եւ Հայուծիւն հսկայանդամ

Եռանդն ի սիրտ եւ ի բազուկ, երգ ի բերան՝  
զիմեացէ զհետ .

Ոստիցէ բաղք ի կաս Հայկին  
Ընդ լուսածիր հետս Յարգբողին .

Եւ ծանիցէ յապուշ աշխարհ  
Թէ միշտ հսկեն փառք հայրենի .

Վերապընայ եւ սիրտ խոնարհ  
Ի գովնչ Բամբուանդ իմ Հայկազնի :

1850

ՀԱՐՍՆԵՐԳ

ԱՌԱԳԱՍՏԻ ՆԱԽԱԾՆՈՂԱՅՆ

ՅԵԴԵՍՆ ԳՐԳԱՐԱՆԻ ՈՐ Ի ՀԱՅՔ

Յանոյշ գրբգարանն ի բնագաւառն Հայաստա-  
նեաց՝

Բարձրացլնր փանդեանն անխտակիր տարիկց  
բարոյ,

Բարձրացլնր յազատ սահմանն ի թիւս ազատն  
հոգւոյ :

Ո՛վ մըշտապաշտօն սարկոււազու՛նք սիրոյ ւ՛եր-  
գոց

Բաժիշտ զուարթու՛նք, օժանդակեցէք ինձ ի  
նուագե՛լ

Չատուածահրատն որ յանձեռագործ առա-  
գաստին

Սըրտացուցանէր ըզնախահաւս ազգի մարդկան՝  
Ըջիւրասկիզբն տղասպտանս կուսից կենակցաց,

Յանոյշ գրբգարանն ի բնագաւառն Հայաստա-  
նեաց .

Մինչեւ անիծից եւ յորձանայ գերիւնալ զերկիր,  
Մինչեւ սերմնաբոյս ինչ՝ այլ համայն աստուա-

ծասակո՛ծ .

Տարփանք մահացուաց եւ անմահից ժամն եւ  
տեղին :

Օ՛ն անդր ի բաց ընդերկրաբարչ տարփից հեթեթանք ,

Քաւ մեզ ոսկի քնար , քաւ մեզ կապարձք Աստուծոյն .

Մի՛ յանարատս՝ արատաւոր անկանի կարծիս :  
Եւ մի՛ յանմահից սէր՝ մահացու հըլի արուեստ :  
Երգինակամար գօտի տէրուեստն կայցէ յԱլէն  
Փանեղեոն հարսանեաց նախաստեղծիցն զուգակցաց .

Ի լայնալիճ՝ն հրալար հաղար ճաճանջ հրեշտակաց

Յարդարեացն աղիս աղու սիրոյն նորնծայ :  
Ըզսերն Աղամայ եւ զԱւային երգեսցուք սէր .  
Օ՛ն երգեսցուք զանմահ եւ ըլկոյս սիրոյն հանդէս՝

Որ խանդակաթեացն ըզսիր ծնողացըս մարդկութեան

Յանոյժ գրրգարանն ի բնագաւառն Հայաստանեայց :

Զի՛ դու հիահրաշ գրախտապատիկդ երեկոթեայ ,

Յորում յախտանցն Տէր մըտեալ ի խոհս խոհից

Զարարչատիպն հաստել հնարիւր օրէնս զուգութեան ,

Եւ զիգութիւն ի բանականս հաղորդել բնութիւն .

Յանոյժ ի թմբիւր ըզպատակերան իւր հանգուցեալ՝

Խրամատ ընդ կող՝ ալջիկ կողմէր զԱւայն անհրման

Ըզփարելի եւ հրաշագեղ քան զամէն կուսան :  
Ինքն Բարձրեայն ըղնախհարսանիսն հանդերձէր ,

Յայն երկասիրեալ քան հրաշակերտս ի վեցօրեայս .

Ուրտածաւալ երկիր տաճար հրամայեցաւ ,  
Եւ հարմարան՝ ականակիտ քառալէան հովիտ .  
Խորան կապուտակ երկնախորանն համարած ,  
Եւ ջահալըցք ըզպիտակարանն ստողակաճառ :  
Ինքն փեսաւէր գայր անդրանկան իւր Աղամայ ,  
Եւ հարմարածու՝ հրեշտակս յըլկէր աննըման կուսին : .

Տէր երանէր որպէս արեգակն յամպոց բիրուց  
Եւ հրեշտակքն ըզհեա տիպ ճաճանջից լուսահիւսեակ .

Բերիւր տէր ի փառս յոսկեգագաթն Այրարատեան ,

Եւ աջք յակնարկին՝ շուրջ խմբէին զօրք իւր զուարթունք .

Տէր ակնարկէր լուսահոսօք բրբօք յաւերժիւք ,  
Եւ բաժնաբ զիւրեանցն յարգարկին սիրահընչեակս՝

Որովք երգեցին զօրն յորում թոհ ըզկոյս բըլխեայ :

Օ՛ն երգեսցուք ըզսէր անմահից կուսից զուգից  
Յանոյժ գրրգարանն ի բնագաւառն Հայաստանեայց :

Այն ինչ բարձեալ զուարթնոց ըզկոյսն կողահա-  
տիկ՝

Ի նախազգած սընդէլ հրաշից զոգին դեռաբոյս ,  
Ու ի ցողածին ճեմեցուցանել մարգ վարդավառ ,  
Մինչ նա դեռ ափէնալ սըրտաբախիկ շնչած ըփիկ  
Իբր աղանեակ թեւադողոջ մօր բընկան  
անձկոտ ,

Աչկունս ամէր շուրջ քաղցուենիս ընդ ծիրն ե-  
դեմական

Ընդ վայրն անձանթ՝ յանձանթէ եկեալ  
վայրէ .

Միւր զովագին անկեալ զԱդամաւ քըշէր ըզբուն՝  
Ի վարդայտտակ զարեւանդին յորում հանգէր ,  
Յակնախրտիղն յամենեւանն յատուածատունկ  
վայր

Յաւերթից յեռեալ յամենաբոյրն համասարա-  
մաց ,

Բարից վըտակաց մանուածաւալ յորդորելով ,  
Թեկն ի թիկին թըփինախտ մըրտենապատիկ ,  
Ի սըրսկապան հովանոցաձեւ առաքաստի

Չերկայնավարսն ի մէջ ունելով զուռին ճապուկ :  
Յանըրձոց հեզոց վերագարձեալ յարթնութիւն  
լուրջ՝

Մինչ այն ինչ դեռ ընդ վերացեան հիանայր  
տեսիլ

Եւ ընդ բացատիկ կողիցըն դէսը՝ միտք ի վարան ,  
Դրդամբ սրտիւ զարեգակնալիւր աչքն ամբար-  
ձեալ՝

Ընդ բացլըփիկն ընդ ժապաւէն ոստոյն ուռե-  
նեայ

Փայլակնանըման յեղակարծուրն դիտէր լըս .  
Հապա նդմիլեալ ըզհովանոցեակըն վարասաւոր՝  
Ի կողաբոյսն աչքն բերելւր ի կին անգրանիկ ,  
ՅԵւայն կուսանակ ի գեղաղէշն ի գլխովին ,  
Յանոյշ գըրգարանն ի բնագաւառն Հայաստա-  
նեայց .

Չետես մահացու չետես անմահ նրանն նըմին  
Խառնուրն շնորհաց , անմեղութեան եւ փափ-  
կութեան :

Յոստոյն ի քիչ հարթչեալ Եւայ՝ զԱդամ տե-  
սանէր ,

ՉԱդամ նախափալք արութեան , հայր հասա-  
րակաց .

Երկայրանչիւր համակնարկիք յիրար դիպէին ,  
Հանդոյցք հրամանուածք կաշկանդէին զոգինս  
անդէն :

Իսկ հայրն մարդկան աստուածաշունչ սրտեալ  
բոցով

Աւ հովանոցաւ հանգըտոցին կայր ոտնառեալ ,  
Եւ հրաշացեալ սիւշ յորիորդն զարմանազան՝  
Չայս առաջին գուշակաւոր արձակէր բարբառ .  
Յանոյշ գըրգարանն ի բնագաւառն Հայաստա-  
նեայց .

« Սա՛ւ ասիկ ոսկր յիմոց ոսկերաց , մարմին մար-  
մնոյս ,

- » Սա կոչեսցի եղայր՝ զի յառնէս իւրմէ եղեւ .
- » Սա ինձ կենակից ի յաւիտեանս ամանակի .
- » Սովմբ զուգեալ արձակեսց՝ ի մէնջ ազգ մարդ-  
կութեան .
- » Եւ որք առ ի մէնջ սերեալ՝ թողցեն այնուհետեւ .

- » Ուստր ըզհայր եւ մայր, եւ երթիցէ զեղառն ըզհետ .
- » Չատուցեալ զըստեր ի ծնողաց զառն ըզլինի գնացցէ .
- » Երկոցուն եկեալ յիրեար՝ լիցին մարմին մի :
- » Այս բանք եւ դաշինք ընդ Աստուծոյ եւ Ա դամայ » :

Չայս անդր առ զբանգւոջ դարեւանդին վարդեւորի

Կառուցեալ ճառեր արտակացու մարդն առաջին Յանոյշ զըրգարանն ի բնագաւառն Հայաստանեայց ,

Գաստք իւր յերկինս , աչք յօրիորդն զարմահազան .

Եւ շունչն հրահատ սըրտացուցանէր զօրիորդն այն .

Եւ հրեշտակք ի հրաշքս լինէին , եւ Աւեհն հաւ ճէր :

Իսկ յիւրն հեղեալ զեղեալ ի սիրտ աւիւն նախազգած՝

Եւ կեանքս նոր յանձին ըզգացեալ ոստէր ի դուրս

Ընդ վարսաշարժն հովանոց՝ առ կոյսըն դեղաւ վարս ,

Ծըրլիս մարդէլով որսէս ուսան ի բնութենէ : Բազուկ յիրար կարկատէին չեւ յիրար ժամանք .

Ընդ խինդ եւ սէր տարուբերեալք մերթ մօտ մատչէին ,

Մերթ հրաշացեալք՝ արնիկալք կային զինչ վարդաւ շուշան :

Համայն չքքնաղք ամենեւինք իրերասպառաճք : Չեռն ի ձեռն հըպեալ Հայեցան , ոչ ինչ ոչ տեսին .

Ատուած ի միտս , ինքեանք միայն ի բնութեան . . .

Ո՛վ առաջնումըն գըրկածութեան անսխտ սըրտից ,

Ո՛վ առաջնոցն համբուրածին շորժագեղ շըրթանց ,

Եւ սիրայնոց աջացըն սըրբոց շուրջ խայտանայ Հեսազօտիցն անմեղունակ դեղցն անարխեղձ՝

Ում աստուածաշուքըն շնորհք անկեալ կայր հովանի ,

Հրանլութիցն անգամ տեսոյ զարմանս ակնահաւճոյ ,

Յորժամ կուծոյ ուլանն ի վեր առմամբ գողար Եւայ՝

Չուրահատակ ըզկենակիցն իւր դտանէր Ագամ .

Եւ զառ ի դլիսոյն համասխիւս հող հող դեղձանեակ

Տրոհեալ մատամբ յայս կոյս եւ յայն բարձրիկ ճակատուն՝

Վխուածս ամէր շուշանավառ համբուրից դետին :

Ընդ մեղուակն աչկունս սըշնոյր առատ քան զարուսեակն ,

Ընդ զուարթաճօճ՝ կարակնակամօր յունիցն հիւստած ,

Եւ ընդ ելեւէջ մանրիկ ծաղաւ յողջոյն ի դէմն :  
 Յոյց ոչ ընդհատ եւ կոյսն Եւս յԱբամ սիրա-  
 նայր .  
 Ի նոյն զարմանա ի նոյն ըզբօսանա զոյգ ըմբօ-  
 նեայք :  
 Լըջեալք ըզձիցն առաջնաճաշակ անմեղութեամբ  
 Արձակէին շուրթն ի բարբառ, գարշապարս ի  
 խաղ .  
 Յեռեալ ըզգիտիկիկ բազուկ կուսին ի Թեւն  
 հաստոյր՝  
 Աւ անմահուղէչն ծառ ընթացք անոյր Աբամ,  
 Զաստուածադիրն ուսուցանելով պատուէր կե-  
 նաց ,  
 Գաստիարակէր ըզքիմքն ի միրգն ամենահամ .  
 Եւ յոսս գեղանի համախառնեալ զընտիրս  
 ծաղկանց .  
 Շըրջաբերէր զվարսանազիկ զլստիւ եւ ժամօեր .  
 Շիկն անուշակ յաւելով զիմացն զբոլեւէաց :  
 Ըզգնալի առեալ ի հեշտաճեմ զրախտին շաւեղ՝  
 Նըշանակէր զիշխանութեան իւրոյ ձիւ սահմանս  
 Յանոյշ գըրգարանն ի բնագաւառն Հայաստա-  
 նեայց ,  
 Եւ ըզբնութիւնըս կենդանեաց իւրոցն հնա-  
 զանդից ,  
 Զամհհադոյնս ի սպաս կոչելով հեղոյն տիկնոջ .  
 Գահաւորակ ըզբլաձեւ փիղըն վեթխարի ,  
 Ապապատանիկ՝ զահհեղամուռնչ զառիւծն հերա-  
 սանծ ,  
 Եւ անգրուվար ըզերխընջախորտս ձին ճա-  
 խրասլաց ,

Հովանեակ՝ արծուին վարազաթեւ արեւադէտ .  
 Յառաջընթացիկք՝ հաւուց երամք գեղափե-  
 սուրք .  
 Վարողք քաղցրաձայնք՝ բարձրարընակ ճանճ-  
 կէն ճրնճուղք ,  
 Եւ հետեւակք՝ սիրամարքք , փասեանք եւ  
 զբախտահաւք ,  
 Եւ կապուտակ մրկանանց լըճաց մակոյկք պար-  
 զեալք՝  
 Ձիւնիայլ պորից զուգառագաստ Թիկանց պալ-  
 պաջուք .  
 Եւ շուրջ քրծնատուք՝ գառինք , սրկունդք եւ  
 աղանեակք .  
 Որովք հորդան տըւեալ եւ շըրջան առեալ հա-  
 կիրճ ,  
 Գամ մի մատնանիշ եւ գիտութեան չարին ի  
 ծառ .  
 Թիկնադարձոյց ճեւընթացիկ կըրթէր ի փա-  
 խուտս .  
 Յանուն չարի եւ մահու խուն մի քըստմուտալ  
 Եւայ՝  
 Յերկնապարզիկն հուպ ընդ հուպ դառնայր ի  
 զուարթութիւն .  
 Եւ զուգաճեմք ի գարեւանդ դառնային վարդից ,  
 Ըզկենդանեացն արձակելով ջոկս յիւրուրոյն  
 կայս :  
 Իսկ մինչ երկնապար իշխանականըն տըւընջեան  
 յատուքն արգիւնեքք համառօտեալ զըր վեցե-  
 րիբ

Հրավարութիւք զըսպեալ ծամիւք սահիւք ընդ ա-  
րեւմուսս՝  
Վիզան ճաճանչիցն ի բլուրս, ճապաղ լս-  
տուերցն ի ձորս,  
Խաղաղըն բնութիւն խաղաղագոյն կըրթեր ի  
պահ՝  
Գլէր խարտեաչ մահիկն յոսկեգագաթն Այ-  
բարտայ  
Տարածանելովքօղ գիշերույ նրբաթաղանթ,  
Սեաւ ընդ կապուտայ անկեալ բեհեզ ընդ ծիրա-  
նույ՝  
Ընդ որ բեկբեկեալ լուսակարկաջ բուլիցն է-  
րամբ՝  
Յիւրաքանչիւր պատշրգամաց փայլ փայլ վայ-  
րակնեալք  
Նարմանագուկ ջուրց յորբան՝ լուսոյ պիռէին  
գէսք,  
Յանոյչ գըրգարանն ի բնագաւառն Հայաստա-  
նեայց ՝  
Ի լերանց հովտաց յանասուածիր ծմակաց մար-  
գաց  
Յարուցեալ հընչէր սիւգ գիշերույ հեզամընչիկ  
Չեղեմականն անկանելով օդով սիրայնով՝  
Մըրմընջէին մանրակոտոր արեակք մեղմաշարժք՝  
Ուս յուս կըբեալ եւ կանգնէին սուրակք փափ-  
կամէջք  
Հեզանայր սօսիւն սաղարթաշարժ ծառաստա-  
նին,  
Հեզանայր խընկոց խոնաւածեւ բուրմունս ընդ  
օդ,

Հեզանայր եւ ձայն հեշտախօս հաւուն գիշե-  
րայնոյ  
Յարձագանդաց վիճաց գէլ գէլ հօրովմամբն յե-  
գեմ՝  
Հառաջանս սիրոյ համատարածն ոգեալ բնու-  
թեան՝  
Հեռուստ հեծէր ձայն սահանաց յանձաւաց խո-  
րոց ՝  
Հանդարտիկ էր ժամն, հըծճանք մեզմիկք,  
լուութիւն ակորժ՝  
Հանդէր երկիր, հանդէր երկինք, համայն ինչ  
հանդէր ՝  
Եւ շատացեալ վեցօրեկէքն հրաշակերտութեամբք  
Ի յաւերժականն եւ Տէր ճեպեր ի խոր հան-  
գիտս՝  
Հանգուցանել ըզձեզ կամեցեալ նախ սով Եր-  
կեակք,  
Որք յանդէտս առ սեամն տիրայարդար առա-  
գաստիդ,  
Մինդ ի միւսոյդ յեցեալ ի յուս՝ կայլք հրաշա-  
ցեալք  
Ընդ աստեղատանց շողող կաճառս, ընդ լոռիսս  
յահուր՝  
Մինչեւ բարձրացեալ խարտեաչ մահիկն ցրույր  
ի գէմքդ,  
Եւ անձայնս շուրջ ճեմեցուցաներ ծառոց պատ-  
կերս  
Յանոյչ գըրգարանն ի բնագաւառն Հայաստա-  
նեայց ՝

Յայնժամ ի բարձանց յոսկեգագաթն Այրարա-  
տայ

Հրահոսօք Բարձրեալն ազգեալ բըբօք ի զօրս  
հրաբունս՝

Նախհարամնեաց հրամանն անէր սեռիս մարդ-  
կութեան .

Իբր ի շինէ ծուխ ծայրակարմիր հողմնածածան՝  
Վէրացեալ շարժիւր բոլոր բանակն երգայար-  
գար ,

Անտեսարար շըրջապատելով զՎարդից բըրբով .  
Գայր յառաջէր գիշերապահիկ զուարթնեակ  
քնքոյշ

Կենսածիրն ոստով հովահարեալ շուրջ զՆդե-  
մաւ .

Եւ յառագաստն հրաւիրելով զամուսկիբքն կոյս  
Յանոյշ գըրդարանն ի բնագաւառն Հայաստա-  
նեայց :

Մըտանէր Արամ ըզձեռանէն առեալ զԵւայ .

Եւ յորդալցս հեղով աստեղց փայլս ի շեփորոց՝  
Բնդ խորշնորշեայ սաղարթածեղուն հովանոցին  
Կային հիացեալք ընդ քըբմաւէան հանդըստա-  
րան՝

Բարձր եւ կակուղ թերթիւք ընդ կողերն ար-  
կեալ ուռեաւ ,

Իբրեւ սեղան սիրոյ նդ մէջ երկրի վերամբար-  
ձիկ :

Եւ մինչ այն ինչ փարէր ըզնոքօք քընոյն բաղձանս  
Ի հովածուկ բարամանց զուարթնոյն գիշերա-  
պահի ,

Սաւառնաթեւեալ յոսկեգագաթն Այրարատայ

Սմբատնայր գայր ամենատարածն Աստուածու-  
թիւն ,

Զինչ բուրդն եռահրաշ կանգնէր առ դուրս  
սրահպանին ,

Անձառական յայնեւ խորհուրդքս մերոց ծնու-  
ղաց :

Առեալ ըզգաստակ փափկիկ կուսին տայր յԱ-  
ղամոյն ,

Եւ զաջ իւրոյ գաստակերտին կըցեալ յԵւայն ,  
Ընձիւղ ի մէջ ի կենսածիր յեւելով ի ծառոյն ,  
Զանմահալայէն ուսուցանէր հանդէս սիրոյ ,  
Եւ կուսական զուգութիւն , անհաս ի մահա-  
ցուացս .

Եւ ամբարձեալ զաջն համատեղձ՝ օրհնէր եւ  
կնքէր

Կրկին փըջեալ ի դէմն նոցուն շունչ անմահու-  
թեան ,

Յորմէ շնչոյ կենդանութիւն խաղց ի մարդիկ ,

Եւ խաղայցէ ցորաւի երկիր իցէ նոցին տուն .

Եւ ցօղպէնս ըզնոքօք սխուեալ խանդալասանս՝  
Թողչր ըզվայրն եռանդնազին բոցոյն ի առչօր .

Եւ ծուխն բոսօր շամանդաղեալ եւ շողպէլ  
Ի սիրալէր սեղանոյն սլաց առ սլաց ցորացեալ

Րատեղնանայր երթայր կըցէր յաստղավարն եր-  
կին :

Իբրն Տէր ընդ ծուխն ընդ բոցն ընդ սէրն ելեալ  
նաղէր ,

Աչօքն հրահոսօք գիտելով դէմ ի հարսնա-  
րանն .

Եւ հօգեղէն իրմբին ըզսիրոյն հրամայէր զերկ  
3



Յանոյշ գրքդարանն ի ընագուստն Հայաստանեայց :

Յայնժամ Սերուբն ի սերովբէից սաւաննացեալ Հանդէս առնէր հրաթերթեան թեւոյն եւ յառաջէր ,

Ձտիեղերալուրն լարելով փանդեան հրաթել , Եւ վարդայնոյն արձանացեալ հանդէս դարակի՛ Երկնահեծան աղբախիւն ածէր դարնչեւն մեծ : Ի դռինչ փանդուանն՝ հըռչակէին երկինք եւ երկիր ,

Ու առհասարակ ընուծիւն ըզսէր մեծացուցանէր :

Երիբ չորիբ երաժըշտապետն հընչեաց ըզսէր , Եւ շունչն հոգեղէն ոչ հանդուրժէր խազալ սիրով :

Մինչեւ բոլորն համաձայնեալ պարու հրեղինաց՝ հազիւ բառնային զամենաբաւ անուն սիրոյն , Ի նոյն յարաշարժ սիրոյ ակնէն առեալ խրախոյս :

Ձի թէ չէր նորա զսէր ընդ ընուծեան հաշտարարեալ՝

Լափէղ ծախմամբ սա յոչեուծեանն ընկըրկէր վիհ :

Չիք առանց նորա սիրոյ ձայն , չիք կիրքս սիրոյ :

« Սէր » , բարձրաձայնեալ բուռն որոտայր փանդեռնահարն ,

Եւ Սէր կըրկնէին հոգիանիւծք միաբարբառ

Յանոյշ գրքդարանն ի ընագուստն Հայաստանեայց :

« Սէր , մեծ է սէր . ըն է՛ ամենայն որ էն՝ սիրով :

Եվենուրեք է սէր ու ի ընաւից թագուցեալ կայ . Ոչ գիտաց ըզնա երկինք , ոչ եկն ի յայտ երկրի . Հանուրց հուլից եղանուծեանց ի մի վայր գալց կայծ մ՛ ի կայծից ոչ թափեցեն ի սիրոյն հնոցէ . Իմաստուծիւն ըզհետ պընդեալ մինչեւ յաւիտեան

Ոչ ժամանեացէ սիրախաղաց գարշապարում : Ըստուերականք են ըզգալք . սէր միայն է կակ : Սէր , դու միայն ես եուծիւն , դու կեանք կենդանեաց :

Ձոր էն եւ զոր չէն՝ ի բախն ուռիս ո՛վ համիչխան ,

Միահեծան ըճակ վերբերիչ տիեղերաց : Ոչ է տեղի թարց քո , եւ չիք սահման անդրազոյն :

Եռագիտակն աստուածուծեան ինքնրդ է կոյան Եւ անչափին դու միայն ես չափ անչափական . Ի՛նն իչից յանհունն յաւերժական ամանակի Չահեղահարաշ զորուծիւնքն ի քեզ անդրուվալըն :

Մըշտախաղայր յընդարձակուծեան քումըդ ընուծեան ,

Ո՛վ ինքնաշարժ գահոյք , ո՛վ վարումն յաւետընթաց ,

Ո՛վ սէր ամենայնք , սէր գլխովին աստուածուծիւն :

Արարածոց չէին սկտք , քեւ չըզոյր ինչ սական , Եւ ոչ յաւելին ինչ քեզ գուճաբք եղականաց :

Քանզի ծածկեալքն յանձին ծոցոյդ ելին յայտ-  
նեպան՝

Յորժամ յուզեալ ըզմիսարազազ ծոյն յաւի-  
տեանց

Ի մըշտամուսյլն կարկառելով վըհն խորափն՝  
Որ ի սկըզբանէ նդ ոչէութեանն ուրբէլիբ,  
Ներգործականն սաստիպուցեր կամն հաճու-  
թեանց,

Եւ յանէից ըզտարր որսացար տիեզերաց •  
Չափ ընդմիջելով ի յանչափումն ամանակի  
Հրամայեցեր յարգիւն գալ քումըզ գիտակցու-  
թեան •

Յազգման կամացդ՝ անդէն ընդհանուր եղեւ որ  
կանս •

Ի յաւիտեանցն ծոցոյ խզեցաւ մեզ, ժամա-  
նակ՝

Չանդրանիկն էից թագեալ ի գլուխ ըզտյս սար-  
ժառ,

Չանսարադոյնն քօղոց ըզքեւ շուրջ ստտելոց :

Սէր, գու զհամածիրն հաստատութիւն թարթիւ-  
չափեալ՝

Մերմանեցեր իբրեւ մըղեզ զաշխարհս անարկս,  
Միում միում այլազան տալով կարգս եւ օ-  
րէնս

Եւ միահամուռ դաշնակելով ի մի կանոն,  
Չոր գու միայն գիտես, լրես, վարես եւ հա-  
ճիս •

Դու եւ ըզմեզ ի հոգւոյ քումէ արտակիտեր  
Բզմըշտեռանդն օրինակեալ հուր բնութեանդ ի

մեզ,

Եւ զանոնհակն գահովդ՝ օրհնից եղեր քա-  
րոցս :

Դու նախամեծար ի բազմաբիւր լուսաշխարհաց  
Բջճողազանդուածս արարեալ գունտ մարդն-  
կալուչ՝

Վէցիր կամացդ անհարկութեամբ հրաշալուն  
ստեղծեր •

Դու զձիր ծովու ածեր զերկրաւս այս գօտի  
շուրջառ,

Թուրատարր օգով ըզվերնային լըցեալ գաւառս,  
Եւ բուսական ծածկեալ զերեսն փառվուռն  
բնութեամբ •

Ի լերանց բարձանց մատուակեցեր կեանն  
ջրաբոյժ

Երկայնալիս յերակս երկրի խայտացուցեալ  
գետս :

Դու զհող բըբըբիր լըվիչ եղեր անդարամետաց  
Ամեհամունըն անդընդաշարժն հրանուա յորձա-

նաց,

Եւ զաւազ խեթկիչ աստատակացն ովկիսանու  
Վրնջանբժոյդ փըրփըրարաւ խաժից կոհա-  
կաց •

Չի զքոյդ պաշտեն գանդանուանդ հուր եւ ջուր  
վակժոյժք :

Ազ ի նիւթախառնն յառաջեալ կենդանու-  
թիւնս՝

Ձուրս զենոց Լուսուցեր ի ջրոյ եւ հողոյ  
Օգտխաղացս, ալբուրակրս, յամուրակրս,

Ի ձայնն, ի խաղն, ի կայանքն՝ ըզքեզ թարդ-  
մանելով :

Իսկ հուսկ այսբանեաց հրաշից եւ գլուխ նախա-  
առաջնոց՝

Բզպէրարուեստուն կառուցեր ըզմարդ ձեռա-  
կերտ ,

Ի տարերց հանուրց մանրակրտիս ձուլեալ մար-  
մին՝

Բզբոյակերպդ արտաբերչեցեր ի նա զհօգի ,  
Ձեզկնից եւ զերկրի առբերելով գեմբս կըրկին .  
Տուն փափկութեան ճարտարապետեալ նըմին  
զայս դրախտ ,

Ձըզիցն օճան ի նըմանէն իսկ հայթհայթեցեր  
Ձեզըն բանական , կոյս կողտակ , տիպք քոց  
չնորհաց .

Եւ ի սոցուն յառաջաբերեալ զաղբ նըմանեաց  
Բզհրաշալիս այժմ առագրես խորհուրդ զուգու-  
թեան .

Խորհուրդ քոց տարիկից՝ իւ յոչեկից ըզքնաւս  
հաստեր՝

Եւ քովին կընքեալ ըզսոս՝ ջով հաշտ ակնար-  
կես :

Ո՛վ սեր յաւերժ , որ աստ ծնանիս սերս յաւեր-  
ժատիպս ,

Ձահեղ զօրութիւնդ արգաւորեալ յարին Ա-  
դամ՝ ,

Բզփարեչի բնութեանդ բերումն ի կակուզն  
Եւս ,

Եւ յերկոսեան՝ զարգասաբեր կամայրդ փա-  
փագ :

Ո՛վ զուգութիւն աստուածագործ եւ աստուա-  
ծակերպ .

Լնծք երկեկի՝ միշտ երբեկին յառաջացուցիչք .  
Բոցոյ հրայնոյ նըմանեալք ընդ օդս արաման-  
տիկս .

Արկից հիւութեանց ընդ ծխածածան ծըփինս  
ծովուց .

Շըրթնաջուափն երկնից ոլորտից ըզծրիւ եր-  
կրաւ .

Երկուց ճաճանչից որք անկանին ըզցայգն ընդ  
այգ .

Ի նոյն ի նարոս զօդեալք անբաժ երանդ եւ  
բոյր :

Ո՛վ անմահութիւն անախտաբար մարմնախառ-  
նեալ .

Ո՛վ ամուսինք՝ ոչ ինչ սրակապք ի զուարթնոց  
կուսից .

Ո՛վ դուք հանգիստք բնութեան միակնաց , հաշ-  
տարանք կամաց ,

Երկաքանչիւր յերար վերբերեալք , լըմունք  
անձանց ,

Ընդ որոց չեք ինչ անգրապոյն . որք մեւս իցեք  
եւ .

Հոգի յաւերժ թափեալ ի ձեզ յառաջ խաղապե-  
Ռեստերք ծընցին յԱդամ նըման , զբատերք ի  
յԵւայն .

Ագամ իցե հայր , Եւս իցե մայր ընդհանուր :  
Երանի՛ք եղ ազգ մարդկան զայս ձեւ սկըզբնա-  
ւորեալ .

Երանի՛ վայրացն որ կան սեռիդ ընծայարան .  
Երանի՛ ձեզ ս՛վ նախք զուգահրաշ սկրակը-  
ցորդք ,

Որք ըզմեծատոհմին մարդկութեան նաւթճէք  
 ըզծար :  
 Ուրան լեր փեայ կոյս , ուրան լեր հարանու-  
 հիգ կոյս :  
 Քաղցրասցի՛ քուն , քաղցրասցի՛ն ձեզ անուրջք  
 երկինքնծայք :  
 Հանգստ սպաս հարեք սիրահանիդ լըրմունք եր-  
 կիւն .  
 Ե՛լ սէր երեւեայ ի յարարածս զոր գուն հաս-  
 տեր .  
 Համբուրեցէք օգիբ գիշերայ զգէնս Ազանայ ,  
 Շընչեմընք սողոխք ի հոգաւիս մեղքն Եւայ ,  
 Բուրեացեն ծաղկունք բուրմունս անոյշ յայս  
 հարանարան .  
 Հաւք արթնականք , արձակեցէք սիրոյ քայլոյ-  
 լիկ .  
 Խօսեցարուք սիրահարկաջ առուակք եւ ազ-  
 բէքք .  
 Հնչեցարուք լերանց արձագանգք ի վանդ սի-  
 րոյ .  
 Հրացարուք ի սէր խոժոռագեղ ապառաժուտք .  
 Բացուստ ի բաց հառաչեա՛ սիրով ծովդ ալե-  
 շատ .  
 Արևք առիւծունք սէր ի մորեայ մըրքնչեցէք .  
 Հընչէք մի՛ լուէք , օգբ համասփիւս սէր հըն-  
 չեցէք .  
 Բլակէր՝ երկինք , ըզսէր՝ երկիր , ըզսէր օվ բնու-  
 թիւն ,  
 Համայն հաստուածք հընչեցէք ի սպառ ըզՍէր ,  
 Սէր , Սէր . . . » :

Եւ սէր հըրգեհեալ բոցածըխեր զաննիւթն հա-  
 գադ .  
 Արկեալ զուսով զերգոյն լայնալիճ՝ Սերուբըն  
 սօս  
 Ընդ սրբաակցացն առ սօս Յաւերժին խոնջեալ  
 գընիւր  
 Յանոյշ գըրգարանն ի բնագաւառն Հայաստա-  
 նեայց :  
 Եւ սոհ՛ գիշերոյն լըրուցանէր զօր վեցերորդ :  
 Խակ անժամանակն Աստուած ժըմոնեալ ընդ գով  
 սիրոյն ,  
 Եւ հաճեցեալ ընդ արարան համայն՝ զի բարի  
 էր ,  
 « Օրհնեալք , սոհ , եւ աճեցեալ բազմացարուք ,  
 Եւ եղիցի սէր աստուածութեան մերոյ ընդ  
 ձեղ » :  
 Եւ հրահասօքն ակնարկեալ բըբօքն առ հասա-  
 բակ՝  
 Գերովիկահանս հեղոյր տարափս սիրաթաթաւ .  
 Եւ համօրէն բնութեան արբեցեալ եւ ուռձա-  
 նայր :  
 Եւ աւարտ հրայլոյն ըզհարսանիս մարգոյն դնե-  
 լով  
 Յանոյշ գըրգարանն ի բնագաւառն Հայաստա-  
 նեայց ,  
 Ըզհոյլք դասուցըն վերնակառից ստեալ ի թեւս՝  
 Վէրասլանայր ի ծայրս ծըխոյ առաքաստին ,  
 Երկին քան զերկին ամբառնայր յարս անմուտս  
 յեկց ,

Եւ յանրակիզբն յանմէջն յանվերջն հանգչէր  
 յանհուն սէր :

Հեծեաց երկինք , թրընդաց երկիր , յուգուց հանին  
 վիհք ,

Եւ համօրէն դրըրդեցան աղկը օրեղերաց  
 Զարարչագործըն վերօրհնելով զանմահըն սէր :  
 Յօրհնին սիրոյն ճարնչեալ սարսեաց սրբակապա-  
 նըն սուրբ ,

Բացին աչկունս ծիրանեփայլս սիրնքունքն ա-  
 մուք ,

Օրհնեցին ըզՏէր՝ որ շնչէ դբուն եւ սէր ի  
 մարդ ,

Եւ զերկուքումք ծանրացեալ աչս ի նոյն փակե-  
 ցին

Ըզնաղաղականս ըսպառել սրահս յանդորր ամ-  
 բիծ :

Եւ լոյս լուսնի զհասարակաւ փարէր զիշերով .

Եւ իարտեալ մահիկն յառագաստին կայր ի  
 գլմբէթ .

Եւ նրաղէր ձայնն հառուն ի ծառոյն կենաց .

Եւ հաղ ընդ հաղ հառաչէր հեղեղն հեռուսս  
 վայրաց ,

Եւ հաղիւ հրծծիւն մեղմոյ օդոյ գրբդէր զայ-  
 երս .

Եւ հանգչէր բնութիւն համատարած յանդորր  
 ի խոր .

Եւ գիշերասպահ ճեմէր զուարթնեակն յանձայնն  
 յԱգին

Կենատուին բարամամք հով ամելով շուրջա-  
 նակի .

Եւ քաղցրն քուն որորայր յանձնինչ լարս ըս-  
 սուերաց .

Եւ էր հանգիտոք եւ սէր կատարեալ անմահ  
 մարդկանն

Յանոյշ գրբդարանն ի բնագաւառն հայաստա-  
 նեայց :

Արդ լուեա եւ դու , հանգիւր ցածիր փանդեւն  
 հրաթել ,

Ե՛րթ ի ծառ կենաց , կախեաց ի սիւգ երկնա-  
 հընչակ ,

Ե՛րթ առ ստեղծուն հովանոցածեւն առագաստի  
 Ընդ որով նընջէն կուսան սիրոյ քուն կուսական ,  
 Կամ երթ յոսկեակ թեւս գիշերասպահ զուարթ-  
 նոյ գրախտին ,

Որ երգեցերդ առքատուերաւն ըզսերն անձառ  
 Զանմահակիզբն հեղինակաց աղգիս մարդ-  
 կութեան՝

Յանոյշ գրբդարանն ի բնագաւառն հայաստա-  
 նեայց :

ՊԱՐԴԱՐԱՆԻՐ

ԿԱՄ

Մ Ա Հ Ն Ա Բ Ե Լ Ի

Արին այգածին վարսադիտակ ծիրանեծայր  
 Հաղ մարդըրտայեւ յօղելով շուշանավարդ,  
 Յակննողիս շափեղջյ  
 Լցս կարկառեր Աբելայ •  
 Ճողճայր ճոխաճեմ արեգակն օսկեփրնջինկ •  
 Հուրջ առեալ շորայր շամանդազն օդասարինկ :

Ի բլուրբա վարդին սրտանեական ասոյգարարձ  
 Ճաճինջ եւ ծաղինկ հիւսասպակն ի հոգս հերայ  
 Արեւելեան դրանցն դեմ  
 Խոսայր խոսայր ընդ Եգեմ,  
 Թաթ ձիւնակերպին դընելով ընդ Վարդբլուր  
 Ընդ զարմինազան նազելով բոյրբա մաքուր :

Հօտ իւր ի հովիտ մակաղեալ Վարդաբլուրին  
 Ի մանուածաւալ մարգածիր ի յեղբ առուին,  
 Ծայրիւք աչաց սիրակաթ  
 Մարդէր գառինս անարաս •  
 Թուեղ առեալ սըրբաին ի յղջակեզն եւ ի ճենճեր  
 Ո՞ զանձն իմ՝ ասաց, Աստուած, ո՞ տայր քեզ  
 նրէր :

հրեշտակք են հանեալ, հրեշտակք՝ ըզմաղթանքն ի  
 վեր •

Երկնից թագաւորն հաճութեամբ ըււեալ ըզ  
 սեր •

Սանդարամեք են սրացեալ

Զաջ կայենի սրալինեալ : —

Վահ հայենի, ղեղբօրդ հասանես ըղբաղցր ա  
 բեւ . . .

Ահա եւ հօգեակըն կարծիր, եւ եւ թըռեալ :

Իսկ խուճապեալ սեր մայրենի որդւոյն ըզձիւք  
 հուր հագաթասպինա ընդ ոլորս ձայներ ան  
 ձուկ •

Չորք եւ մայրիք եւ հովնուիք

Լըւան սարտեան գողգօջուիք . . .

Կտեալ կայր կտեալ զարշապար Եւայի մօր  
 Աւ Վարդից բըրտով անդ կտեաւ սեր սըրտա  
 կտոր :

Երշանք են շարեալ ըզվարդիւ կարկրասհար  
 Սպիտակածըլի քօրք եւ ծնողք արեգալար •  
 Թեկն ի թիկին երկրասլըք  
 Բոսորակայն ի յաւելչ •

Ոչ մայրեաց միմունջ, ոչ ջուրց ծօրք, ոչ ճիկ  
 հաւկին ,

Աւս հառաքք հեղինք հըրդեհեալք յերս հագա  
 դին :

Այ, բացէք գաւանեակք, այ աստղունք ու ակն  
արեւու,

Աղամ եւ Եւա, բոլորահարսն Եմն եւ դու.

Այ Վարդգրբուր սուգ է զքեւ

Զուարթնոց մածեալ ի շուրջ թեւ....

Ո՛հ, որ ի Վարդոց Մարէլն քնարան երթայ

Յողոց ինձ հանցէ՝ նդ բոցեղէն սուրն Եղեմայ:

Ի ՆԱԽԱԳԱՀՆ ՄԱՍԻՍ

Մասիս, ո՛վ լեռան, Իմն փառօք ոււճալից •  
 Մասիս, երկնից զուգահալորդ քան երկրաւ •  
 Ո՞ր սըրտաբախ մասն ինձ սայի վերելից  
 Որ քո ազատ գագաթան բիժ չածէ բնաւ •  
 Գո՛յր ինձ ի նոյնդ յանկարծ թռուչել հրաշից սար,  
 Զանմահութիւն ծրծեւ զըլնոյդ հաւասար •  
 Ո՛վ դու Հայոց մեծաց արձան, հայր երկրի,  
 Եւ խանձարուքը համագոյլիցս սեռի:  
 Ո՛հ կենսաբուզիս, ո՛հ սիրունակդ ինձ Մասիս  
 Ալեւորեալդ յարծաթաճիւս բիւրեղեայ,  
 Որ յաւերժիւք յիշատակօքըդ նազիս  
 Զլերինս համայն գրելով մանկունս ասօրեայ,  
 Ըստաստօր զտերեւաշարժն Ոլիւմպոս,  
 Գարշապարիդ քծնող՝ թռուցիկ Պառնասոս,  
 Ուր երկրածինդ զից կառուցին օթարան,  
 Ի քեզ Աստուածն հանուրց ըզնախն կայան:  
 Փախերո՞ւք ցնորից մուսայք ի կըզիս,  
 Կաքաւաքայլ իսկուրհեայ մի ժողո՛հի պար  
 Յաղատավայր ի դարեանդս ի Մասիս  
 Սեթեւեթեալ ձրգել թեթեւ գարշապար •  
 Ճըշմարտութեան հիմանց մի սուտ անկցի օղ  
 Մի աստուածեանն ի սուուրակերպ սուցի քօղ •  
 Անբուն սիրոյն դուք երաժիշտք անդր ի վեր  
 Կառուցէք քնար յազատ Մասեայ սարն ի վեր:

Հանդիսարանն տեղեկաց նախաւուրց .

Մինչդեռ ըզնո՛ւնդն ակնարկու[թեանց] թերա-  
բամ

Իբր ի ծագաց անպարտիճն իւր արուց՝  
Նրկատէր Տէրն՝ ըզմեծ աշխարհս կիսակազմ՝,  
Չեռալ յուրէւ խուսըն տարերց վըհական  
Հասունանալ քոյից յանձնիւր ի պոյման .

Եւ վերացեալ արարչագործն հաճու[թեամբ]  
Ոլորտանայր ի ջեռուցիչ սիրոյն ամբ .

Արեգական շեւ էր բացեալ ասպարեզ  
Չեւ բընու[թեան] լուսազգեցիկ բացեալ ծոց .

Դու անդրանիկ ընդ բարս աղջից զիզագեզ  
Յարգանդ վըհին վակժոյժ առեալ թաւաբոց՝  
Երեւեցար ո՞վ գեղապանձ էրկիր սար .

Չորմէ հարեալ բուռն անմահից անհուն պար՝  
Որպէս ըզկաւ թուրձ ի հիւս ամեալ լայնար-  
ձակ

Բզմեծագիր տորբացուցին զայս դընտակ .

Իբր էրկիւր մրըրկուտ ի սոյր ջերմանդամ՝  
Յակնանակիտ մըխտալ բիւրեզ կարկաջուն  
Եւացուցեալ պատաստէ զխորս հեշտակամ՝  
Անդուսպ կոչոյ ստունկանելով հեծեւոյն ,  
Ի խրոխտապանձ քո պարանոցն ամեհի  
Չահեղն առեալ դանդանաւանդ աշխարհի՝  
Ի լայնալընձ վըհից արեայն անդընդոց  
Գաւակագեզ թափեր զերկիր ջըրակոճ .

Հերձեր բարձեր բարձրացուցեր ի վեր շեշտ  
Ստեղակի[թխար] վինահասակ նիւս բուրբ ,  
Եւ ահագին կարկաջանոք վետս ի վետ  
Անհուն սահանք իբր ասպօյժք մեծորուն

Ընդ բովանդակ անկերպարանը մարմին  
Դընդընչաձայն իջիւք թափեալ ի գետին՝  
Հունըս բացին գետոց աղբերց անտրեաց :  
Վ իշապապոտոյս սողակեմամբ յաւ ընդերաց :  
Դու որ զտիւրք ըզմերս տեսեր նախահայր ,  
Եւ յուս զերկրորդ բարձեր ըզմեր վերածնող ,  
Անշուշտ եւ յայնժամ դու էրկիր դրեցար  
ծայր ,

Մէջ անմահից եւ մահացուաց կէտ կոթող ,  
Մինչ շան[թեանդն] յանդընդոց թուռք արգան-  
դիդ

Ընդ ծըխաշունչ փողս որկերոյդ քարաքիթ՝  
Կարկաջուէտ ժայլքէկին դունդ դունդ կոհակ  
Յարահասան դըստերց Բասկոյ մայր դայեակ .

Երկինք ըզբեւ զտրուստալ թարմն արկին հիւս  
Գաւարաղուարձ իբրեւ շողարշ կուսական ,  
Եւ յանարեւն աւուր՝ ցուցար սկիւրոյս  
Կանաչ գրոշակ արեւեալ խոնաւ ընդ ասհման .

Չ ի հեղիկ սօք սաղար[թագեղք] ու կեւեկնք  
Ի սոյլ հողմոց յերեւելին նուրբ սըրկնդ .  
Քանի ամբիժ չուշան ժամուն այն շողայր  
Եւ մանուշակ սարկէշտ ի սորն իւր զախայր :

Իսկ մինչ ի գոգ բարձուն էրկնի յեղակարձ  
Գըլեալ գըրեալ թափանաւբար օգ կուտակ  
Բզհամօրէն ծըծեալ մոքուր լուսոյն բարձ՝  
Խետդ վերնոց կամուրաց արմի հերարձակ ,  
Չարչարուսոյն չուշանտիպոյն եհերձ ծոց  
Եւ յաշտիճան ծիրանեփառ գիրք ամբոց  
Վ արգակարմիր եհատ զմայլակըն գիտոց ,  
Քեզ՝ արեգակն այն նոր զնախկին փայլ ցուլոց .



Ըզպեան աստեղց ի գլուխ լեբանց արբայիդ  
 Ի նորութեան երկնից ու աւուրց տեսեալ  
 պերճ՝

Խուն մեզանչէր քաւդեայ յերկինս անբըթիթ,  
 Կամ Արամազն ի գեշերի լուսաղերջ  
 Համատարած հանդարտութեանն ի պահու  
 Ընդ հեղանազն յառեալ մահիկին լուսատու  
 Ընդ շքրջածու գըրգանս եղլերց բոցաթեւ,  
 Ծառոց ծաղկանց ցընցըղկերով ցօղ թեթեւ :

Ո՛հ, ս՛ յարգեացս եւ ինձ խուսել տայր զբաղ  
 մանց

Եւ Բիւրական բըլրոց ի ստուերս իջեալ լով՝  
 Սըրբովք ցնորիւք զոսս հարկանեւ մէջ ծաղ  
 կանց ,

Ի խարտիչուկըդ ցայգածին պիչ աչօք ,  
 Փողփողէնէջըդ պարող քերբք լուսագող  
 Որք զառաջին յօգս աննէին քայլափոխ՝  
 Զերկայնս հեղեալ լուսոյ գիսակս համատիրու  
 Մանուածաւալ ի նընջախառն ի յաղբիւր :  
 Բանքէ , գորս յայնժամ լռակիք , խնդք հովկաք  
 Ըզձից յինէն հրամանուած ձայնս եւ թրուչ .  
 Ոչ եւս անդ միտք յերկունս , այլ ծինք իսկա  
 սիթք

Ոչ մտղթերով դայեկուծիւն առ գըրիչ .  
 Ո՛հ , անդ ոգիդ էին ազատ քօ վայրբն , անդ ,  
 Եւ անթարգման ըզձից՝ ոչ համր էր բերանդ .  
 Նախանձաւոր քեզ ընդ Մասեսց արձագանդ՝  
 Յերկնից խորոց , ուր տենչք թրուչին՝ դայր քեդ  
 վանդ :

Ո՛հ , թէ դարուց նախնեաց իմ՝ լեալ էր զաւակ ,  
 Հաստչին ձեռաց մինչ ոչ ծածկեր գիծ յերկրի՝  
 Եւ օրհնութեանց շուրջ զեղջըր ցօղ երկնաուպք ,  
 Կամ ի կրկնուս նորակերտելն աշխարհի՝  
 Ում ապաւէն արձանանայր քայլափոյլ  
 Անգընդայալթ լեանն իմ՝ զահէղ վրէժ լուծեալ .  
 Յօր սխրացեալ եւ հայէի սերսազանծ  
 Զհանուրց փրկիչն՝ հովանի գօլ հայկազանց :

ՎՍՍԿՆ ԱԿՈՌԻՈՅ

Ի սառնահալ Սարարադեան ծործորոց  
 Վլրտակ վըճին ընդ Ակուուոյ խողայ ծոց .  
 Վէտ վէտ վիժեն ալիք խուն առ խուն ,  
 Մէտ մէտ մըրցեալ մըրխին մուն առ մուն :

Բնդ սար եւ բար հարեալ ժայլմբն ջինջ փրփուր  
 Եւ դարավալ սեղոյ տարախ բիւրաբիւր .  
 Հերձ հերձ առուք զոյգ զոյգ միանան  
 Հերկ հերկ յարտիցն ախոս ման ի ման :

Ի տորտաափ տապանակիրն լերին  
 Չորեքդիմի հայ հասակք կան յԱկուին .  
 Ըոյս ըոյս հոսն եւ կեանք ժամէ ժամ  
 Փոյլծ փոյլծ հասակք փոխին յամէ յամ :

Ծաղկունս տածէ մանկիկ մորձ զիւր նըմանեակ  
 Փափկիկ ափովն արբուցանէ ցուրտ ալեակ .  
 Թինդ թինդ առեալ կայտաւ բոյս առ բոյս ,  
 Խինդ խինդ շարժէ զաչկունս ըոյս առ ըոյս :

Եղբայրն աւաղ ի հուր ջեռեալ երկակի  
 Ըխըուցանէ դամանն ի զով վրտակի .  
 Հեւ հեւ փըջեալ յալեաց ծիր եւ ծիր  
 Թեւ թեւ հերձու դանոնայ ժիր եւ ժիր :

Մինչ հոյր նոցուն յանդասանին բրանալծոր  
 Ածուս գործէ արտորէկցն յորդոր .  
 Յորդ յորդ հոսն կոհակք յանդոյ յանդ  
 Կորդ կորդ դեռին փթթի սաս եւ սնդ :

Իսկ հինաւուրց հաւուն նըտեալ սո երկ  
 Դիտէ զհոսանս կենաց յալխն Ակուի .  
 Պիշ պիշ հայի նդ դոնդոլս սահ եւ սահ  
 Ելշ նիշ ճայնէ դողդոլս ա՛հ եւ ա՛հ :

Եւ ըղբատիցն հարեալ սրաչուն վըտանն այն  
 Յերասախ խառնի ու ի ծոց թաքչի Վլրկանայն :  
 Աղգ աղգ մարդիկ յերկիր դան եւ դնան .  
 Հասկ հասկ հողիք յերկինս կան եւ մնան :

ՀԱՆԳԻՍՏ ՏԱՊԱՆԻՆ

Հաշտից հրեշտակ, արձակեալ զձեռն յանդուհարս  
խոր •

Գաղարեցո զերկնից ու երկրի խուռն ժըխոր •  
Առ զիմ աղեղըն լուսայլձ, կարկառ յԱզին,  
Անջըրպետեա նոգ սահման զուգակ կիսագնդին •  
Հրաման յինն աշխարհաց՝  
Հաշտել դաշտել տարերաց,  
Հանել յայանել զինն հաստուած  
Ի մահակուղ սրտորանաց,  
Զի էս բարւոյ եմ Աստուած :

Հրամանք հաստըին • արի բնութիւն, էլ երկիր  
կոյս •

Ամփոփին ամսք, բըղխեն եթէքք նոր վարդա-  
լոյս •

Ե՛կ յերեւան • անցին մըր ընկէք աւերածուք,  
Թօնք թաթառուչք եւ հողմք լրոնն յարա ծա-  
ծուկ •

Ե՛լ երկիր, էկ երեւեաց,  
Յոյց երկնի գեմն ամօթլեած •  
Զի զերախտիս իւր յեշեաց  
Ու սարսիտ արար քոյց չարեաց՝  
Այն որ բարւոյն է Աստուած :

Տուն տառապեալ ի համասիրեռ ալեաց տասան,  
Ում տիեզէքք արտմեալք չիչխեն տալ պատուան  
դան,  
Նաւակ նոյեան, նաւահանդիստ քեզ ցըցուի  
սաս •  
Երթ սահագնաց բազմեաց յԱզլանն այն առա-  
դաստ,

Որ անդրանիկ ի լերանց  
Հերձեալ զթաղանթ մըլկանանց,  
Կայ միջակէտ այնց ափանց՝  
Ուր մարդոյ դրախտ յարդարեաց  
Այն՝ որ բարւոյն է Աստուած :

Եւ որ միայնդ ունիս ի քեզ մասն անարատ  
Ընկալ զտապանն աստուածատուր քեզ Արա-  
րատ,  
Խինձք մարդիութեան, կրկին ընտրեալ լէր եւ  
որրանք,

Եւ հովանի ազգի՝ որ քեզ լիցի ժառանգ : —  
Ո՛վ հայկազուն տեր Մասեաց,  
Քանի՛ զքեւ ուխք խեռ ալեաց . . .  
Այլ ոչ ջընջին հետք վայրաց  
Զոր Ազամ, նոյ, հայկ կոխեաց  
Եւ որ բարւոյն է Աստուած :

ԱՍՏՂՆ ՀԱՅԿԻՆ

Աստղուներ զուարթուներ լուսածրղեր ,  
 Ատեղք , արիւնոյն հովտայ ծաղիկք ,  
 Ճակատ պայծառ բզվեհաղինդ՝  
 Բզլթիկն եւ լանջ պըճնեցէք պինդ :

Քաղութեանց հայր եւ հեղինակ  
 Յապետոսեան գիւցայաղթն Հայկ՝  
 Զարիտեանսըն ճրգեալ ձեռս  
 Թաւալ գրչէ զվերին բեւեռս :

Չընդդիմամարտն երկնի սպաներ ,  
 Օն սիդաճեմ թըրիւր ի վեր •  
 Աստղուներ զուարթուներ լուսածրղեր ,  
 Կահատակից բոյլ կապեալնք •

Չերկին գրաւէ , թափելով զայս  
 Իւրոյ զարմին երկնատուր կայս •  
 Պաշտպան նըմին տէգ յարաճօճ՝  
 Հրաշատ դաշտին հար ի խորւոջ •

Իւ հովանիս համբոյր առուրց՝  
 Հանգըրուանայ արիւնոյն հանուրց՝  
 Զաւաքինի գրտերս , մանկուան  
 Կառոյց յանմուտ ստտեղատունս ,

Դարուց ի դար տանս հայկազանց  
 Վեհից ուգուց յուշ եւ նախանձ •  
 Յորչափ երկնիւք գայ ինքն ի դիւ  
 Ու աստղին յուսնն չէ լուսախիւ ,  
 Քերբք յաւերժիւք Ահեկ Սեհեկ  
 Հարցեն ամոց ամոց զսիրտ հեղ •  
 « Ճեռք ըզգօնից հարց ըզգօն լիք ,  
 » Են այլ աստղուներ լուսածրղեր » :

ԳՍՐՈՒՆՔ ՀԱՅՈՅ

Ի տէգն արի շխահեաց Հայկ  
Էջ Ի Մասեաց հիւսիսեակ .  
Ի յորրանաց քաղցր հողոնց՝  
Իջնն դարունք մեզ Հայոց .  
Յօղք եւ բուրմունք երգք երանգք  
Նոր ասն հովտաց եւ մեզ կեանք :

Ո՞ր արտասուաց իմ ցօղք Ի դօս մարմանդին  
Մինչ արտաւած դնայի Հանդէպ հիւսիսին .  
Մասիս Թափէր զալիան ըզմօք համասփիւտ  
Ի խու՛ւ Թըմբիբր ննջէր հովտացըս զեփիւտ .  
Յայնժամ անիւք գէեցան ստունաց մեծք ու ահեղք  
Դէպ երեսաց փախչէր աշուն մերկ եւ հեղք .  
Տաղաթա յանդոջ զընէր ամանն ամայն .  
Եւ ս՛հ , Թէ չէր յոյս դեղեցիկ դարնային ,  
Ողջամբ մընայք ասեմ հովտօք հովտաունք ,  
Բաղջըրիկ խոխոջք , լերինք , մայրիք եւ ծաղկունք :

Ի տէգն արի շխահեաց Հայկ  
Էջ Ի Մասեաց հիւսիսեակ . եւ այլն :

Արդ մերժեացի խարոյկ , ցօցան վարդենիք .  
Զ յետին ձրգեալ ձրմենն Ի լեւան ըզկընիք ,  
Զեամբն եւ ամալով մեկնեցաւ եւ Ի փախուտ .  
Ծագէ զգարունն Ատուած Հայոց Ի վերուստ .  
Տէր , ասացին , հարք մեր , շարժէ զամանակ ,

Այլ լակ գարուն է գրգռանացըն զաւակ .  
Գայ պրտալակց ամանն , այլ նոյն աթափէլ  
Զըմենն հասեալ ցըրտասարուս հարու զմեզ .  
Եւ յերկոցուն կոծեալ աշուն՝ կըթօսն այն ,  
Թափէ զտերեւ իւր եւ մեկնի լըուլեայն :  
Ի տէգն արի շխահեաց Հայկ ,  
Էջ Ի Մասեաց հիւսիսեակ . եւ այլն :

Արգ ձիւնեղէն լերանց պատուարք տապալին ,  
Յորձանք Թըմբերեալք դան Ի համբոյր ծործո-  
րին ,

Ընդ բերեղեայ անդուղս հոսեալ փրփրադէզ  
Կարկաջասահ գընան ընդ դաշտ եւ երեզ .  
Գեոք եւ վըտակք զնախկին ամունն ըզմըմուննջ ,  
Աւետաւոր հողոնց ընդ օդ խաղայ շունչ .  
Ծառք եւ ծաղկունք , լերինք եւ մայրք դոյն Ի  
դոյն

Պըճեալ կանգնին խոր յանդընդոց ցեւ օդոյն .  
Ո՛հ մանուշակ ս՛հ համասպարամ բազմաբոյր  
Հովտածիճազ վարդ եւ շուշան լուսաթոյր ,  
Ո՞ր յերկնազարդ Ի խընկաւոր ձեր Ի Թերթ  
Ոչ երգնուցու՞ գգարուն տարւոյ սեթեւեթ :  
Երանդ յերանդ խառնեալ ձրկոյ ծաղկանց հոյլ  
Մինչեւ Ի Հայկն եւ Ի դրացին իւր Ի բոյլ .  
Յօղք Ի վարսից նոցին կաթենն յորդաուստ  
Տալ զարգասիս բաղմաղեղուն եւ սարարտ .  
Զեղուն հընցմամբ զօդս երաժիշտք Թըռչական  
Զանտաւ եւ մարդ , հանդոյն բամբուանցըն Գող-  
Թան .

Յոսս ուր տերեւք դան ընդ ծաղկանց յերեւէջ

Պատկերիկ բընիանց կախեալ ըզհիւս նըբաւէչ,  
 Ի սիրատուն գըրգան հընոցս կենսունակ,  
 Եւ գերինաթռիչ հաննն ձագուց ժիր բանակ : . .  
 Կտարցոյ կամարն ի վեր, կանաչ ի ներքոյ  
 Ըող սակեթեւ յօգս անկանի կիտուածոյ .  
 Քաղցր հովանիք մեզ տասանին ի մայրեաց  
 Եւ զովագին հընչեն հօզմունք ի Մասեաց .  
 Յիրդ եւ ծոթրին ուուց մաքեաց կաթնաբուս,  
 Ահա եւ մեզ խայրիք ստղոց դան կանուս .  
 Խայտան ի դաշտ հօտ եւ հովիւք հաւասար .  
 Եւ արձակին ծընունդք, նոր կենիք ի յաշ  
 կարհ :

Ի տէգն արի շկահեաց հայի,  
 Եջ ի Մասեաց հիւսխեակ . եւ այն :

Ի թաւս ոստոց սըճնին դամբանք եւ բաղինք  
 Եւ գունագոյն ծաղկառք սարեն հարանիք .  
 Այգուն այգուն հընչի բըլբոցս ի կատար  
 Որսանընդիր փող փարազանց մեր գալար .  
 Ի տառատակ զըսպեալ թեթեւ գօտեղինդ  
 Ժիր մանկըտի վայր ի վայրէ առնու թինդ,  
 Եւ խոցք՝ հայոց քաջաղեղանց առ ոտիւք  
 Վախից ի վախ վագեալ գըրին եղծբութք .  
 Հաստամագիլ սլացեալ բազէ սրակրտուց  
 Զորսորդասաք վրէժ լուծանէ կաքաւուց :  
 Տօնք ամանոքք ի վարգապեղեն Վարդգէս  
 Կենդանութիւն սրբուեն չըբեղ ի հանդէս .  
 Մինչ սակեկու թագն եւ մական արբենի  
 Յօղոյն բնութեան ցօլան ի դաշտս հայրենի :  
 Ո՛վ դու գարուն չըբնաղ՝ երկրիս հայր եւ գանձ,

Աշուն ու ամառն ի քոց փթըթին պերճ ծաղ-  
 կանց .

Եւ ըզգալուկըն ճըմբայնոյն դու մաշու  
 Նընջեալ սերմանքք ի ծոց երկրի ստանաղէզ :  
 Գարուն, դու կենիք դու հոգի բընութեան,  
 Քեւ արեւոքք խայտան յատիս մանկութեան .  
 Ո՛հ, թէ անդարձ ճակատադիր մեզ չէր հին՝  
 Քեւ ընդ ծաղկանց մեռեալք ի կեանս գառնային .  
 Սակայն բողբոջք ի գերեզմանս հարց ըսփիւս  
 Զանոնհօւթեան առհաւատչեայս տան մեզ  
 բեր,  
 Թէ՛ եւ հոգեաց յերանաւեան յերազմոյն  
 Ձիք յերանակ այլ բայց յաւերժնն գարուն :

### Հ Ա Ր Ք

Հայկ... անուանե՛ զանուն լեռնադաշտակին  
 Հարբ. այսինքն թէ Հարբ են աստ բնա-  
 կեալք ազգի տանն թորրոմայ :  
 ԹՈՐ . Ա .

Յերկիր հայրենի , բովք իմ կենաց եւ խանդից  
 Ի վայրն սիրուն ազատութեան ծաղկաճեմ ,  
 Յոստանն իմ նախնոյն հեղինակին հրակայից՝  
 Ուստ՝ եւ աղեղամբն եհար զՏէրտան դիւարեմ ,  
 Հան զիս Ոգիդ Հայկազանց՝  
 Ի լեռնադաշտն այն Հարանց ,

Յորրանս հայ յուսոյ , յաստուածաշուքն Հայկա-  
 շէն ,  
 Ի խոր հընուծիւնս ու ի նուիրական հովանիս ,  
 Յոր բասոք հոմազանցս անկերպք ու անծինք  
 Թեւածեն ,  
 Մինչեւ վեհ մուծցէ զնոսս յոգիս արժանիս ,  
 Եւ յարուսցէ սերունդ այլ  
 Լաւաց Հարանց զուգափայլ .

Վեհն այն՝ բարութեամբ մինչ ալ ձրգեալ՝ կառոյց  
 մարդ .  
 Յակունս աղբերաց Հայոց բարձանց կազմեաց  
 սուն .

Աջն այն գրթութեամբ պարզեալ երկրորդ յԱ-  
 բարաս՝  
 Ըջնաւըն կառոյց , յորմէ երկրորդ մարդկութիւն  
 Ի նորոգեալ սուրբ երկրի  
 Դիւեք զճին սունն առերի .

Իսկ ի ստորանկեալ մինչ էջ յովնա ճես Կոյն ,  
 Ու ամբարձ Բարեւոյն զաշտարակացն իւր եղջերս  
 Եւ էլ բրնաւոր ցանցել զերկիր ամայի ,  
 Աջն այն զօրութեամբ երրորդ անգամ զտիւ-  
 զերս ,  
 Թափեաց՝ ի ձեռն առն արանց ,  
 Ու եհան յերկիրս այս Հարանց :

Վըցեալ կուս վրիժուք զկասպարձ՝ քաջին շանթա-  
 ձիգ  
 Եգ ըզլայն թիկամբք՝ հետամրտիցն յարհաւիրս ,  
 Ելլո՛ծ զաղբն հին , նրմս զնորն ետ զօրաւիգ :  
 Եւ նեան եռասայր յաջում՝ հորդէք նա զեր-  
 կիրս .  
 Կանխեր բանայր յոյս սահմանս ,  
 Եւ հետք ոտիցն իւր յարձանս :

Երկր հարելութք՝ յորս արուծեանց թիւ ոչ գոյր՝  
 Սըրտեաց համհարղիւք՝ զազատութիւն պա-  
 հանջէր .  
 Լերկնք սարսէին , գետք շրտնուին թաքթաբուր՝  
 Յանկոխ ամափայս տեսեալ հըսկայս գանդու-  
 հեր .  
 Եւ ծածկեր ձոր եւ երեզ  
 Ի ստուերս մարմնոց մեծարեզ .

Մինչև եւ ընդ բարձունս անցեալ բաղունս ժիրք եւ սուրբ ,

Անհետ ընդ շաւիղ , յանմարդաձայն անաստա՝  
Զոր աղբք Վորդուաց գոռք լըյնն յետոյ եւ Վասաուրք ,

Պատեալ եւ զքեւ կոյս ծոց Բրդնունեաց շինա շատ ,

Ի բարձր հասնն լեռնադաշտ  
Ի ծաւալմունս լըձայն հաշա ,

Աւ որս սուրհանդակ Բագրեւանդայն ծաղկա զարդ

Յեւեց արփուցն ձայն արկեալ ընդ ծերպլս լծա քունս

Շըրթամբն շափիւղ Արածանի ալբարդ ,  
Փուլծայ ի Տարօն գեղապարեւ ըլՄամդունս .

Այն խանձարուրք Հայկադանց  
Եւ այն երկիրն էր Հարանց .

Երկիր՝ զոր էցոյց ցուցոյն յանուրջս աղեղանն :

Անդ Հայրն ըլկայ 'ոնոյր , ցըցեալ ըզտեզն ի միջն ,

Որդեաց ու ընդոճնաց տայր ցուցանէր ըզսահ ման՝

Եղեալ նետաձիգ ակընկալուացն առաջն .

Եւ ուր վարսէր նետ քաջնն ,

Շէնք բոլորեալք կանգնէին :

Իսկ ինքն ի գաշտն յասպարաձեւ բարձր ի սրորս

Շինէր իւր սոսան ըզՀայկաշէն գեղեցիկ .

Ականն ի կենդրոն կանգնէր ըզգաճն անդըրբդ ,  
Պարխալ անմտոյց՝ սիրա և բազուկք քաջա ձիգք .

Եւ ի ձայնէն հաստեալ արք

Լինէին քաջք Հայոց Հարք :

Յայնժամ Տեսչու լծեանն ակն յանձանօթս հեռա տես

Գըրգեալ գորովեալ ի Հարան Հայոց եւ ի ծնունդս ,

Անտուտս նրկատէր զսպա տոհմից մեծ հան դէս

Ալեաց սկս զարեաց հետ ծաւալեալ տար յան գունդս

Ի ծովս քառեակ հակամէտ

ԸզՀարք կալեալ միջակէտ . \*

Յոր զաջն յեցուցեալ՝ մասամբն հրաշեց զըծէր շուրջ ,

Ազգի տանն Հայկայ եղրասահմանս ընդար ձակ .

Յարփուցն մարդէ զՎազբք , ծանրակոհակ ալիս լուրջ ,

Զանժոյժն Աքրանալ ի մուտս եւ բարձրն Մա ժակ ,

Վէմ հիւսիսոյ՝ ցուրտ Վովկաս ,

Եւ Տաճկաստան ի հարուս :

\* Հարք դաւառ սոսանն Հայկայ ի կենդրոնի կայ բոլոր Հայաստանեաց՝ Մեծայն եւ Փոքունն միանգամայն :



Ձայն նա հայկայ, հային առնէր հարանց մատ-  
նանիչ •

« Այսբան արուժեան՝ ու ազատութեան են  
սահմանք ,

Ո՛վ հարբ հանդերձեալք մերոյ դրոհիս քա-  
ջուղիչ ,

Ձոր ցուցին երկինք՝ բարեաց ու արեաց միշտ  
պաշտպանք •

Ի աւրս լերուք , լերուք արբ

Եւ եղիջիք անըսպառք :

« Ըզգեւել նըշկահեալ արիաբար մեք միայն  
Ստացաք զտիրատուրս երկիր • պահել գործ է  
արդ •

Ազահն այն որսորդ գայցէ զմեր հետ շամբբ հա-  
մայն • \*

Ձձեռնարկ արուժեանս բովանդակել է մեզ  
պարտ ,

Եւ յիշատակ տալ ազանց

Թ՛ երկիրս այս գինք են արեանց •

« Զանիւք հրամայեաց ստանալ պահել զհողս այս  
Տէր •

Գործել՝ նախ մարդոյն ու ապա ի քերան ոռո-  
գել •

\* Բեւայ բարեալ զՀայկն հրաւիրէր գալ ի տուն իւր  
եւ ի գործ ունել զուսնն որսականս . իսկ քային արձամար  
հեալ գնովաւ՝ շուն գնա եւ երամակս շանց զփողովուրդ  
նորա կոչէր , ըստ Սեբեոսի :

Ձերկրորդն ածեալ հայր՝ խտապոյն ջանքս կար-  
գէր

Ի խոխ եւ յարօր ըզկեանս եւ զտուն կայկայել •  
Երրորդ մուծեալ աստ հարբ դուք ,

Կաջլէք բըռամբ եւ զինուք :

« Ի զէն , հարբ հայոց , լծէ զայդ սիրէք ձեզ ա-  
նուանս •

Ի զէն հայկազունքդ իմ , արբ պարսկց ու արե-  
զանց •

Կոխեաց Բեւ ըզտուն Կագմեայ , ի հարս տայ  
հորդան •

Գխտէք զամբոխ խուան հրտուն ի գլուխս անդ  
լերանց •

Մի զանգիտէք , նոքա սարուկք

Ազատ ծնընդոց հարբ էք դուք :

« Ես եմ՝ հայկն , եւ դուք հայկայ սերունդք եւ  
հնազանդ •

Երթամ զլեւել վանել , արկբ թոռանց խնց հարբ ,  
Յուսոյ զաւակաց այսօր բացցեն զէնք զարգանդ ,

Յերկունս կողովեաց կորովայլիր ծընցին արբ •

Քաջք , կեցցուք քաջս եւ մեռցուք ,

Եւ զոր ստացաք՝ պահեսցուք » :

Ողջամբ մընայք մարբ հայոց , իջին հարբն ի գործ •  
Անտաղք չարժեցան , ու երկիր դողայր ոսնա-  
արով •

Սըրեալ զբաւնիս ի սլաք՝ կշուն շեշս ի փորձ ,

Մուշէն կարին օդք, թափին ասրափք քան զամկրոս :

Յառաջէ Հային հրակաքայլ  
Պընդին որդիք վազ եղեալ :

Երդուեալք դայթուծիւն կամ զմահ ի յոյս ապանի,  
Թափով թըխաթոյր մըրըկաց մըխին ի լայն ձոր :

Մարտու լըիժահան հարու զհըսիսոյ զգողանի,  
Որտ առ որտ գոռան բանակքն ահաւոր :

Մանչէն գազանք ի մորեաց  
Հընչին փապարք անձաւաց :

Ճայթէ վըեժ վեհին՝ արգարուծեանն արբանեակ,  
Ընդդէմ՝ գուարմամբ գարանակալ գոռոզին՝  
Չորոյ գանհանձարն հարեալ յերկիր գամբարտակ

Եթող նըմին գամ մի թոյլ՝ գխտը զջախ անձին .  
Նա ոչ գխտաց, այլ եւ գայր  
Չոր ոչն որսալ կարէր զայր :

Գրդեալ ի բարձանց, ու որոտացին փողք հրեղէնք,  
Եւ էջ զօրուծիւն վարագուրեալ ի Վարագ .  
Ազոյց հօրն հարանց զահ իւր ի զահս, վըեժն ի զէնք,  
Կանգնեաց ըզգանդուրան հրաշէկ, յաչացն հան կըրակ,

Եդ ստեղծն նմն բարբառ  
Եւ ալ ի գլուխն կարկառ :

Մարտեալ նա զնորա տեան . իւր արհաւիրք ի վըհից

Կամ՝ ծուխ ի հնոցէ՝ նդ եռակարգեան զօրսն ի դուրս՝  
Ոստեալ բարկաձայթ . յայնժամ պակեալ Բէլ յերկնից :

Փախուաւ եւ վերելք փորձէր յորմէ՝ ջն ի բըլուր :

Եւ էր յինչ ոչ ձեռնհաս,  
Ձ ի զհային ետես եւ զօրհաս :

Ամբարձ հայրն հայոց զոսն յապառաժ զոր սարսեաց,

Չաղեղնն վարեալ ձախով կրուէր քան զկամար,  
Տանէր ընդ ուս ալ ըզլարն եւ զնեա եռայրեաց . . .

Մարտիկըն մաճեան . . . նետն թուուցեալ երկնալար  
Ընդ Բելայ սպինձ ընդարունս  
Եմուա եւ էլ ընդ թիկունս :

Եհար տէր ըզբուրդն ամբարտաւան որսորդին,  
Հայոց հարանցն հայր՝ Եհար զգոռոզն ինքն որսորդ :

Անկաւ Բէլ . սարսեն դեւք, զիւցաղունքն ջընգին :

Սուգաւ արուսեակն երկրի յանդունդ թըլփա յորդ,

Եւ ասող հային հօր հարանց  
Կառեալ յերկին լուսապանձ :

Մատի՛ր արդ յառաջ նահատակ տեսան էւ Հայոց,  
Կոստեա զհահառակն երկնից եւ տան Թորգո-  
մայ .

Դեղեալ յըզեա՛ զգին է նըշաւակ բարձանց քոց  
Ի տես եւ է վըէ՛ժ շուրջ ոլորտիցն Եդեմայ .

Եւ ծանիցեն աշէք եւ դարբ  
Թ՛ արդարեւ անդ Հայոց Հարբ :

Իջէք վնմաբլուրք յԱթուրացիսդ առաթուր՝  
Ծածկել զորս հարին Հայք է մըթին Գերեղ-  
մանս .

Հայոց կոչեացի նա Չոր, յահէղ բեւեանց լուր :  
Երթայք յոտան քայլք արանց է տօնս յաղ-  
թականս ,

Դրոշմել սլացօք զանունդ՝ Հարբ ,  
Եւ ընթերցցին անդուզ գարբ : . . .

Օ՛ն , անդր երթիցուք մեք անդր , հոգիք Հայրենի ,  
Կոչեալ է ծմակաց զաստուածակերպ ուրուա-  
կանս՝

Աշդէլ սիւդ յորդին զփառաց ու արգեանցին  
նախնի .

Ու անիջինջ է յուշոյ կրուէլ կոփել անդ արձանս՝  
Ուր Հայկազանց կեցին Հարբ ,  
Հանուրց հարանց վեհափառք :

Ի ՀԱՅԿՆ

ԵՒ Ի ԲԱՍՏ ՀԱՅԿԱԶԱՆՅ

Ազունք Հայկայ , անդրանիկք յարս եւ յարիս ,  
Ելցուք է բաստ աստուածապերճ աշխարհիս .  
Հողմն անմահին զաղինս ջրբուռէ՝ նդ տեղերդ .  
Հայոցս օժտեալ զոտանս մարդոցն իւրակերտ .

Օ՛ն անդր յարեդդեմ՝  
Երթամք է յԵդեմ՝

Զազատ զանոյշ շնչել շունչ .

Յերկնից է ցօղ հաշտ

Յերկրիս կահուղ դաշտ

Կապել ծաղկունս քրքմափունջ .

Ելցուք առյոքք ու եռանդունք

Ի փառս ու է սէր զըւարթունք .

Ի բանց վատն է բանց

Երկիւղ եւ կասկած

Հայրենասէրք աննըկունք :

Բունիւնք թմբկաց տօփեն լերանց է լերինս .

Հայկայ հրաւեր վառէ զըրդին զիւցազինս .

Ի հարաւոյ հեղեղեաց Բեւ բրնետուր ,

Արիք ընդդեմ՝ հարցին , զարձցին կորակոր ,

Խայտակն Հայկայ զհետ

Որդեք զուգահետ՝

Հասին արծուիք երազուիք .  
 Շիհահեն յաղեղանց  
 Խոււմիք արի արանց ,  
 Թօթափին ցուրտ զիհակուիք .  
 Հաստաբազուի քարչէ Հայկ ,  
 Տապատտ զընին գոռ հըսկայք .  
 Հարեալ յեռաթև ,  
 Ընդ Բեւ չարագեւ ,  
 Ի Չորն Հայոց՝ անկանգուիք :

Տեսիլ ահեղ ի նշաւակի տանն Հարանց  
 Կերբով թնուածեալ ի յայսն որդուց եւ կանանց .  
 Ի լայնալիճ յերկնախրախոյս յաղեղանց  
 Այգպէս անկցին որք յողան դէմ Հայկազանց .  
 Որդիք թորդոմնց  
 Ժառանգք Եղեմնց  
 Բարձցուք խրախոյս յԱստուած մեր .  
 Պըսակ ի ճակատ  
 Ի ձայնս յորդառատ  
 Աւարեսցուք փառս ի մեր .  
 Բամբուուիք մեր պինդ հընչեացեն ,  
 Լէրինք եւ ձորք կրկնեացեն ,  
 Զառս քաջաց նախնեաց  
 Քաջալէր որդեաց  
 Դարուց ի դարս պատմեացեն :

Ի ժիր յառնել ի գործ Թոռանց թիրաասայ  
 Կանչեն կարկառք , հըճուին հոսանք Արասայ .  
 Արամ, Տիգրան, Տըզաստ, Վարդան եւ Վահան ,  
 Ի ձեզ պարծի եւ անմահ կեայ Հայաստան .

Խուճապեն ոտիք  
 Քաջացդ ոտնակոխք  
 Յարին ի ժանտ ապաժոյժ .  
 Յանկեղոց մերայ  
 Հայկազն ի քուն կայ ,  
 Եւ ի շերովն անգր աշխոյժ .  
 Զի զէն խաչն փրկչաւանդ  
 Հակէ զնովաւ անվրկանդ .  
 Սուրբ են Հայ դամբանք  
 Յանթառամ դրասանդ  
 Յեռեալք յարտօք ի յանոջ :

Հողիք Հայոց հարանց անժոյժք յերկնից հիւ՝  
 Տեղան յորդիս սուրբ Հայրենեաց՝ հուր զըր .  
 դիւ .  
 Պարթեւք , Մամիւուիք , Բագրատք զագիս մեր  
 վառեն ,  
 Գրիգոր , Կերես , Գեւորդ մեղ աջ կարկառեն .  
 Շարժի շիրմաց շար  
 Յառնեն քաջք ի սար .  
 Հորդի փառաց սասարեղ .  
 Համբաւք հոլաթեւք  
 Ճախրեն շուրջ թեթեւք .  
 Շողան Մասիք լուսակեղ .  
 Յերկնից ու երկրէ հըրայրեաց  
 Խոսն բարբառք Հայրենեաց .  
 Օհ առաքինիք  
 Բորբոքեալ հոյժք  
 Կեցցէ՛ աշխարհ մեր ի մեզ :

Յիմաստ ի գործ վե՛հ որերոյն զուգապահն՝  
 Արևք ընկերք հրահայորդիք Հայկազանց .  
 Հուր Հացեկայ , խանդք Խորոնից հատին փայլ ,  
 Հողեալ ծագէ նախնին փառաց յոյս մրապլ .  
 Ի հուր յայս թափանց  
 Խանձեցցի նախանձ  
 Կարկեալ կցեցցին ցուրտ շրթոնք .  
 Անշէլ ընդ մերս հուր  
 Մի գբ ճըգնի զուր .  
 Հաշտ մեզ արեւք եւ աստղունք .  
 Լաւաց ու արեաց ունկընդիբ  
 Երագք յարարս քաջընտիր ,  
 Աջք մեր ի յեթերս  
 Աջք մեր առ ընկերս ,  
 Կեցցո՛ւք , կեցցե՛ն Հայկազունք :

ՆՐԿՀԱԶԱՐԵԱԿՆ ԱՐԴԱԿՈՒՆԵԱՅ

Արծաթածամն արծաթածղին երկնազըշոյ  
 Գիշերաձեւին նաժըշտովք յաւերժհարասմբ  
 Ընդ Յարգողին սահեալ ընդ հետս՝ ամպիկ  
 յամպոյ  
 Յունրս ճօճէ . շաղք կաթկաթեն լուսավար-  
 սամբ :  
 Հայկածընին Արմանեկայ տունէք գեղաղէշ  
 Սաւառնաձայն սոսափեցին սոսեաց տերեւք ,  
 Կապոյտքն յայդուն արևք յԵրասխ՝ ծըփին խար-  
 տէշ ,  
 Հարնամասանց ի ծոց ծնանին աստղունք ու ա-  
 րեւք .  
 Իբրեւ հսկայ ոսկեսարեան երկնահասակ  
 Օդակառոյց դաստակերափն Արմայխայ ,  
 Յոլս հատանէ նիւքարալքեժ խրոխտ աշտարակ՝  
 Անդ վարսեցաւ գրժողն Հայոց՝ ի յԱրամայ :  
 Դիպաղեղունք գիպանիղակք քաջք Հայկազանց  
 Թեւապարեալ շխհեն սոսեացն ի ծայր սլացիկ՝  
 Զորովք փարէր Անուշաւան յեղձ պաշտամանց ,  
 Ողոյն տալով նոր արքայիդ յԱզատ Մասիք :  
 Թէ գան սոսեացս հազար գարունք դաշարապետս ,  
 Ու այլ թէ հազար ծաղկին հովիտք Ամանորայ ,  
 Յաւերժարար հուշակեացն քաջիդ գովեստ .  
 Արեւ Լուսնակ հովնասցին ի Վաղարշակ :

Ձայս քրքրմապեան՝ Արշակունեացն առնախահայր  
Յորժամ զամուս վերականգնէր Հայաստա-  
նեաց : —

Երկհաղարեան բոլորեցաւ արդ հարուստ դար \*  
ՁԱրշակունին մեծացուցէք յուշ հայրենեաց :

\* Ի վաղարշակաց ցամ տեառն 4850 ըուն 2000 ամբ :

1850

ԱՐՏԱՇԷՍ Ի ՏՕՄԱՐԱԴԻՐ

Կարգք... շարժուց եւ ամսոց եւ տարեաց  
բարբառնոց... այս ամենայն յօրինի յաւուրս  
Արտաշէսի :

ԽՈՐՕՆ Բ.

Ընդ հովանոցըս Ձարդուց  
Դաստակերտին դեղանոց ,  
Ընդ հովանոցըս Ձարդուց  
Ի յանուշից ժամ քրնոց  
Խաղաղասիւզ ընդ գեշեր  
Հայոց երկնից յեօթըն թերթ  
Կայր Ի յակճիոս հրաշապէս  
Արի արքայն Արտաշէս .  
Ընդ Սայլաթափն երկնակէտ  
Մինչ Ի Շամիուրսն Հայկայ ,  
Ընդ Սայլաթափն երկնակէտ  
Պըշնոյր փեայն Վաթենիկայ ,  
Ընդ Ձըրուանեանն մանկունս  
Ընդ Վահագնեայ բոց աչիունս ,  
Ընդ արօսեակըն վարսաթ  
Եւ ընդ լուսնակ կրկնածամ ,  
« Ամնահ արփեքդ հոյլ Ի հոյլ ,  
Դաստակ պարզեաց Արտաշէս ,  
Ամնահ արփեքդ հոյլ Ի հոյլ ,  
Գիշերապանճք լուսատես »

Հայոց մեծաց դէտք անքուն ,  
 Մէ՛ լուկ յեթերս ունել տուն .  
 Պաշտօն հարցէ ձեզ եւ աստ  
 Այս ժողովուրդ ձեր ըզգաստ » :  
 Մեծ քըրմնապետ Մոզպաշտէ  
 Մատիր յարին Արտաշէս : —  
 Մեծ քըրմնապետ Մոզպաշտէ  
 Ձարբային կամն ի քարտէս ,  
 Իջոց ի վայր հոյլ եւ բոյլ՝  
 Յամն ի յամիս յեթմառուրս :  
 Ի՛ Հայք , տամարս ետուն ձեզ  
 Բոյլք եւ արբայդ Արտաշէզ :

1848

Ի Ս . ՍՈՒԲԻԱՍԱՆՍ

Ի սօսիւնս հովանեաց սաղարթուն  
 Ի ծաղկուտ դարեւանդ Սուխաւայ  
 Տարածեալք յանդորու կան ի բուն . —  
 Ո՞վ ամցէ ձայն Սուբիայ : —  
 Սաւառնեալ ընդ ծործոր սիւս հեզիկ  
 Ծածանի զառուակա քաղցրահամ .  
 Դիզանին խարտեաշ հոյլ հոպուլք  
 Նընջեցելոյն յամերամ :  
 Մամուարմատ գամբանաց փոխանակ  
 Պարզին մարդք եւ մարմանդք քըբմացան ,  
 Եւ զուլամբ պաղպաջ քայս շեկորակ  
 Բոտորաբուխ շիթ արեան :  
 Իրանք կոյք թաւալեալք զիրերօք  
 Կարմրակոյտ են կարկառք վարդենեաց .  
 Եւ հողիք ըստ շըրթունըս նոցուն  
 Երամբ թուոցեալ աղանեաց :  
 Ի գահոյս Յիսուսի արբային  
 Պատկանեալք իրր աստեղք առ մահիկ .  
 Եւ սրիչ թըռչանացն ընդ երկին  
 Քընար կախեալ ի հոյմիկ :  
 Եւ պատգամբ ի վերելքն հընչին .  
 « Լաւ է մեզ Քրիստոսի բնակակից  
 Ի խորանս հանդերձեալս յԱրարչին  
 Հանդէլ յերաստ անմահից » :

« Ո՛ղ որ լայք մեր բախտին ծարաւիք ,  
 Յաղբերաց Սուհուայ հանէք ջուր ,  
 Ի հողի ու ի մարմին բըժըշկներ •  
 Ձի անդ կաթեաց արեանս հուր » :-

Ես յեանն Աւանաց սրտանեակ  
 Յաղբերացս յառեալ ջինջ հայելւոջ ,  
 Խառնելով զարտասուացրս կայրակ  
 Երգեցի սիրս ի թընդոջ :

1841

ՓՈՒՈՒՄՆ ԼՈՒՍՍԻՈՐՉԻ

Սեպհոյ լերանց ընդ դագաթունս օդապար •  
 Չանմահունթի առեալ յերկնից բարձր հրաւեր՝  
 Ոսկեղնեք թուուցեալ թեւօք նազի . քնար •  
 Ի մէջ գիշեր ըզբարայրիւ աղօթիեր •  
 Դղբերկն տարեք այլ ընդ այլ  
 Սարսէ՛լ արդեօք թէ խայտալ :

Ձարթնու խօսնակ ցայգուն ի շունչ զովագին •  
 Չայն ըզձայնէ առեալ գեղգեղ եւ սրբոյր  
 Ի նսեմաստուեր սար ու ի ծործորս տարածին  
 Իբր ոսկեթեւ առէչք 'ի . քօղ սեւաթոյր •  
 Լըռէ հաւիկն հէշտախօս ,  
 Դողան աստեղք լուսահոս :

Վ խնաց ի վէմն հակաճատիկ յառնէն ձայնք ,  
 Ուր լոկ մահուն հովանաւոր անդաճմունք՝  
 Անդ բիւրք ընդ մին վերահընչին արձագանդք  
 Իբր ի սարից փըշրեալ վիժակք կարկաջունք •  
 Ընդ ծերան ի դուրս ծերունի  
 Իբր ըզլայրացն հայր՝ յայտնի :

Եւ ի դիտակն դարաւոր եւ վրեմ՝  
 Առեալ զճոկան իւր երկնահորդ յանութ սուրբ՝  
 Քան ըզլուսնին ճապուկ ճաճանչ ուղփառեմ



Չհայաստանեօք կրչուէ զհօգին վառեալ հուրք •  
Գեր քան զարծուի յառեալ շեշտ  
Թեւատորածնն ի հրաժեշտ :

Ո՛վ վսեմութեամբ եւ արհաւրօք լին զիշեր ,  
Որ զհայրապետն արձանացեալ մեհաւոր  
Ընդ մէջ աստեղց եւ անդրնդոց դիտեցեր ,  
Եւ լրտութեամբ զանխուլ մատեար քօղաւոր  
Վաղել զյեախննն ի շքրթանց  
Պատգամ՝ ըզհօր հայկազանց :

Պատկեր պահուն դու անեղին եւ անժամ  
Յորում Բարձրեալնն ի յաւերժութեց ի յեղբ էջ  
Ատինձանեալ ընդ զօրութիւնս լուսերամ ,  
Եւ թըմբբեկոց թափուր վըհնց յանհուն մէջ  
Արձակեալ գաջնն ի յոչինչ  
Չերկին ու երկիր որասց ջննջ :

Իբր ըզկըճեաց բուրբն էր մարմին ծերունւոյն ,  
Աջքն իւր լապաեքք աշարակաց անհօղմոց •  
Իսկ միտքն համբուն վարեալ ի թեւըս հոգւոյն  
Ընդ լեւնուէտ կոհակս ամոգեր սիրաբոց •  
Երէշ , Տարօն , Թիւլ , Թորգան ,  
Իփեքք առ նովաւ պարզեցան •

Եւ դեգերեալ ըզբոլբոլ զոր ետես ,  
Ուր գարշարարքն աշխատաակքք ընթացան ,  
Եւ ուր զանբուն հորդեաց ինտոնցրն հեղեղս ,  
ՅԱրտաշասաց գրբոյն ցանձաւս Մանեան ,

Ի նոյն դարձաւ անխոփեաց  
Չանձնն ի կատար երկնապլաց :

Խոր հառաչանք վերացուցին ըզշքրթունս ,  
Շաւապեցաւ ծընունդ սըրտին յընդհանուր •  
Լուսաձաձանչ տարու յերկին տուրբ աչիունս  
Ի հընոցէ սիրոյն հասուա շունչ մի հուր • • •  
« Աստուած , կեցո՛ւ զհայաստան » •  
Եւ աստ եկաց սըրտին բան :

Շեղեալ ընդ կողմն՝ ուր ելք արփիցն արեւուն ,  
Յուպ ի կըզակ մատուցաներ պեղարդ ,  
Յողջախոհ ըննջ փարեալ բաղլօք երերուն ,  
Դեմ՝ արարչին կայր նախաստեղծն իբրու մարդ ,  
Ոչ յընդունել հոգի կոյս  
Այլ յաւանդել բարեկոյս :

Աստուածակաօք ընդ ճանապարհըս թաքուն  
Լուսեղինաց եկեալ գասուց՝ ողջոյն տան ,  
Կեպք ի թիկանց եւ կեպք զտախք սըրբատուն  
Աստուածակիրըն տաճարի յենարան ,  
Եւ ոչ անդող աներր  
Կարգան հոգւոյն այն հրաւեր :

Լուծանին կապք • եւ շունչըն մեծ ի վեր կոյս  
Իբր ըզյաղթոյլն գրժոխոց գործէ էւս •  
Եւ վառ ի վառ ծածանին դրօշք ոսկեկոյս  
Չոր ի յերկնուտս կորդեաց՝ գոլով դեռ յերկրէս •  
Եւ ըղնովաւ պարեն հոծ  
Դասք գասք նովաւ փրկեկոց :

Իսկ ի ներքուստ հեռուստ յերկրէ խորածոր՝  
 Որպէս հրաբուխ յաղջամբլին բոցահատ  
 Սարկից Սեպհոյ վայլէն կատարք շողաւոր •  
 Յոր հուսկ անգամ յառեալ հոգին անարատ՝  
 Կտխէ զխորանս Աննահին  
 Հայաստանեայց սէրն ի բոին :

1840

ԳՈԶՈՒՄՆ

Ի ՍՈՒՐԻ ՎԻՐԱՊՆ

Ի վեհ վերապիղ գլխիվայրեալ՝ սնւրբ Գրեգոր ,  
 Ի խորոց սրտից սրազատասխան հառաչանս  
 Քեզ վերընծայեմ աղեկիղեալ իղձ հրաւոր •  
 Հայր Հայաստանեայց անդ առաւել քան յայս  
 կեանս ,  
 Հասցին քո նմանեալ սիրել մըրմունջ մահա-  
 ցուաց •  
 Մի թէ նդ պղզունձին բաղինն երկինս ուխտք մա-  
 քուր՝  
 Զոր քո համանիբդ հնչէն եւ վայրք քոց ճրգանց :  
 Հալեցան հոգիք անձկակարօտք յիղձ եւ բան ,  
 Մաշեցան մանեակք սրտից՝ երկնից բերկրի զօդ •  
 Ո՛հ , երբ յարկես ՚ի սրինդդ ալու ու ի մական ,  
 Ե՛րբ առաւղիցի քո ցիր վիճակ միահօտ ,  
 Ե՛րբ ըզՔրիստոսին ե քեզն հաճոյ զբան համայն  
 Հանապաղամունչ ելեալ ըղձիւք ուխտաւոր  
 Վերահընչեսցէ ազդ Թորգոմայ միաձայն՝  
 Ի վեհ վերապիղ գլխիվայրեալ, սնւրբ Գրեգոր :

1848

Ի ՆԱՀԱՏԱԿԻՆ

ՎԱՏՆԵԱՆ ԳՄՇՏԻՆ

Նաև, որ ճօճիս ընդ մրկանունս խաժ եւ խոժոս՝  
 Որք նըշկահակբք զճամաստարած համբարըս  
 ջուրց՝  
 Յուրոյն զեռան վիհս յար, յուրոյն բաղնին կոշ-  
 կոս,  
 Ընդէր ասնջեն զեզք այս՝ կոհակքն յանդու-  
 զայրուց

Հրոտեալ ալիս ընդ ալիս : -  
 Վըրկանք զեղուն անդ ալիս  
 Ի Գրեգորեան Գրեգորիս :

Ի թուխ թիկանց Կապկոհճի շանձք ճայթուեալ վի-  
 ժին .

Անդրաձայնեն խորք անձաւաց եւ անդընդոց .  
 Բամբինն ընդ բլուրս եւ անապատս երթայ խո-  
 բին .

Մայրք գիտախուբք արմատախիւլ լինին յայտոց .  
 Վըրկանք վարեալ խուլ ալիս  
 Ծրփան կոծին բիւր լալիս  
 ՅԱլուանիցն հայր՝ Գրեգորիս :

Ի մընջաձայնն ասպատակեալ փրփրոտ հինե  
 Քան ընդ ոտիւք երիվարաց մահասարմբակ

Սարսեալ սորեալ պատառտի գաշտըն Վասնէ  
 Որ անորէն քինուն եղեւ թատր անդիտակ ,

Ծըծեալ քղվարդ ճասպակն՝  
 Զոյր լան Վըրկանք բիւր լալիս  
 Ըզգեան առոյդ Գրեգորիս :

Այն էնչ ի ձարս յեռան հրաճեմքըն գարշապարք  
 Բոյ ի շունչ եւ նժուգիցն ի բաշ ու ի գափր ու-  
 ալին ,

Ընդ խիճ՝ եւ խոչ մըրըրկեալ վարգին մտրակա-  
 վարք

Յաւիչ եւ յօշ ծաղկէ կոպճուտ անապատին .  
 Վըրկանք զիզուն անդր ալիս ,  
 Երկինք ցօղեն հեղ լալիս  
 Յառաքինին Գրեգորիս :

Չայն սուք ի Հայս , ձայն յԱլուանս , ձայն ի ճօր  
 ճամբար ,

Հարազատին սիրայնոյ ձայն ածէք Յուսկան . . .  
 Ո՛հ , թողամահ էւ նա . հոգեով զբացեն զե-  
 բար : . .

Ձեք , ցերբ մոլորք . հրաթեւեաց սուրբն յերկնից  
 խորան :

Վըրկան՝ , դու՛նդ քոյդ զեմ՝ լալիս  
 Խառնեա՛նդ կարմիրն այն ալիս  
 Զոր ցեր ցանեաց Գրեգորիս :

## Ի Ս . ՀՈՌՓՄԻՄԷ

Հոսիսիմէ, 'իդ սրտիկեր քոյին  
 Առհասարակ հիացաւ մարդ .  
 Աշխուսցար քան զԵդեմին  
 Դու շնչաւոր շուշան եւ վարդ :  
 Ռահ գործեալ ընդ արեւելս  
 Կոր արուսեակ վարսադիտակ ,  
 Յերկնաչաւն քո ի վերելս  
 Դու շացուցեր զանմահ հրեշտակ -  
 Ոչ եւս աչք երկնազննին  
 Ի լուսայեռ կամարն յակճիւս  
 Ըզհայկազն իմ գիւցազնն  
 Դիտեմ ըզհեառս յարդապիւս .  
 Փարգաստ վէպք մօր գիցանոյշ  
 Կաթնացընցուղ ի ճեպ ոտին  
 Զէրեխայն ի գերի քընբոյշ  
 Ի գնալ առնուլն՝ աստեղածին -  
 Սրխրացեալ ի քո միայն  
 Ես ի թեւոցդ եմ հուր շքրչան ,  
 Որ գլելով գեր զամենայն  
 Կոր գործեցեր սպիտակարան :  
 Ի գլելոյ Մեծայ Հայոց  
 Շուշանախայլ եդեր շաւիլ ,  
 ՅԱտուծոյ յաւերժն ի ծոց  
 Ծայր շքրչանիդ կըշտեալ ուղիլ :

Մայր կուսան , յիշեա զըրգիս .  
 Եսպերիս՝ ճերմակ բեհեզ ,  
 Քօղ կարմրորակ եւ սլըճ'նիս՝  
 Զայս Հայաստան բամբուկնդ ետ քեզ :  
 Էնն ըզքեզ խօսեցաւ անդ ,  
 Աստ հարմնացար յԱտուածորի .  
 Բուռն հարեալ ի սուրբ տապանդ  
 Կայթէ մանկախիդ առագաստի :

Ի ՄԱՀ ՏՐԻԱՏԱՅ

ԱՀԵՂԱԶՕՐՆ ԱՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ

Ի լերանց Դարանաղեաց, ի լերանց Դարանա-  
ղեաց  
Գետս արտասուաց իջուցէք քաջք Հայաստա-  
նեայց եւ ուրուականք •  
Յամպախաղացն Այրարատայ իջցեն սահանք  
յարտասր աղի •  
Գոյժ մեծ յարձագանդաց առ արձագանդս յոր-  
դորեացի •  
Եւ կոծեացին առ հասարակ բարձուէք եւ վիհք,  
ծովք եւ ցամաքք •  
Յարիցեն ազգքն առաջինք յանըզգայից խորոց  
նիրհմանց,  
Յարիցեն Արշակունիք պրսակաւորք առաքինիք,  
Յարիցեն Հայկազն հըսկայք յաւիտենից եւ  
զվւցազուէք,  
Եւ կարկառեալք ի դամբանաց եւ խորանաց աստ  
պըշնուցուն •  
Քանզի անկաւ թաղաւորն երեւելի եւ աննրման •  
Անկաւ ամուրրն խորտակիլչ ստամբակեղց տան  
Սասանայ •  
Անկաւ մրցողն հըսկայից, երկվարաց եւ դա-  
զանաց •

Որոյ արձանք՝ յերկրէ Գըզաց մինչեւ յԱզաան  
ի վեր ի Մասիս,  
Որ յաղթուածինքն ի թիւ բիւրուց եւ անհամար  
պատերազմունք,  
Որ փրկիչ եւ կեցուցիչ ազգի մեծի տանն Արա-  
մայ •  
Դից վըտարող եւ յօրինիչ աստուածապաշտ  
կարգադրուածեանց •  
Հխանալին հեթանոսաց, քրիստոնէից նախանձ-  
արկուն •  
Հաստատուածինն եկեղեցւոց, եւ աշխարհի կանդ-  
նուան եւ փառք •  
Կատարեալն յինաստուածեան եւ համբոյն բար-  
գաւածանք •  
Անկան փառքն Թորգոմայ եւ արհաւիրք հիւ-  
սիսայնոց,  
Քանզի անկաւ ահեղալորն արի արբայն Տըրգա-  
տէս •  
Տըրգատէս, մեծն ի մարդիկ եւ մեծաբոյն ի թա-  
գաւորս,  
Արշակունեաց վէհաբոյն, Հայկն՝ ուժով, Գրի-  
գոր միւս՝ հուսառօք •  
Սիգապանծըն Տըրգատէս, որ բլուրս ի գնացսն  
տապալէր,  
Եւ զյարուցմունս յորգախաղաց գետոց ի վուզն  
իւր նըհանջէր •  
Որ ի մի սուր զատպատանելին եւ սպառազէն  
կարթակոտոր՝  
Դիւթաւայ բըզեգուհունքն տարածէր եւ զհըս-  
չէն գոտ •

Ամենայն աստարիզաց քաջ նահատակն Տրդա-  
տէս ,  
Ահեղազորն արքայ Հայոց մեծաց անկաւ Տրդա-  
տէս :  
Ողբացէք լէրինք Հայոց զահեղազոր արքայդ արև-  
օ խորդ անկաւ որ ի բարձանց ձերոց գիւմէր եւ  
որոտայր :  
Լէրինք Գարանաղեաց , գետս արտասուաց  
բզկեցուցէք •  
Չայրագնեսցին աչք սիրելեաց , ըզճապազիս  
հարցեն կարմիր ,  
Բազկեսցին ծոցք ասպառժք , սիրտք ասպառժք  
բերցեն արիւն :  
Յանօրէն ձեռաց հընչեաց շինգըն մահու յըն-  
տանին իւր •  
Սիրելին դաւաճանեաց , դարանակալ եղեւ զս-  
փոյ : • •  
Ո՛վ հարուած աշխարհաւեր , ո՛վ գաննուծիւն  
չար քան ըզմահ :  
Նսխատի՛նք յաւերժականք , վէրք խաւարինք ի  
տան Հայոց •  
Ո՞ տայր յալս ամանակի նկրղմէլ սուգէլ զայդ  
յիշտակ :  
Լէրինք Գարանաղեաց , աղիողորմըն գուժեցէք ,  
Ո՛հ ո՛հ , լացէք ըզբաւաճանն , ըզձեղ լացէք ,  
լացէք զարքայ •  
Հունք արտասուաց դընդընչեսցեն ընդ ճանա-  
պարհս Թորգանայ ,  
Տրտունջ զրոջման կեղերջական աղէկիզեալ սրտի  
բողբ :

Ծաւալանալ արխուր ալօք ընդ դագաղօք թա-  
գաւորին ,  
Ուր նընջէ առիւծակերպ Արշակունին ահեղա-  
զօր : • • •  
Չխորդ նընջեաց առիւծակերպն ահեղազօրն  
Տրդատէս : —  
Էր ծերացեալ տիովք , ի սիրտ եւ բազուկ միշտ  
երիտասարդ •  
Անցեալ նըստեր ի մէջ կորեանց իւրոց առիւծըն  
հերապանձ ,  
Ընդ դահակալ չորք հարիւրոց նախարարացըն  
հայակոյտ  
Հանդոյն Մասեաց ի վէր տարեալ պաղպաղա-  
փայլ բարձրը ճակատ ,  
Փայլակնացայտ թըխօք բըբօք շըրջացաներ ըլ-  
կայծակունս :  
Թագաւորք արեւելից , իշխանք հիւստոյ գային  
գեսպանք ,  
Եւ հրամանացն հարկանէին ըսպաս աշխարհք  
խուժաստանեայք •  
Վոյմնակալք չորք՝ դէտ ի նորին ակնարկուծիւն  
կայեալ ուշով՝  
Ընդ չորս սահմանս ածէին սուր արդար ու եր-  
կաթ հնազանդարար •  
Յոտիցն ի դնալ սանուլ՝ զօրացըն զըզբոյեալ ճա-  
կատեր հըլ •  
Ի ձայնն ածել՝ աշխարհն Հայոց ամէն լուեալ եւ  
ակընջէր •  
Շըրթունքն օրէնըս կաթէին , աչք սպառնալիս ,  
այլ սիրտըն սեր :

Աւաղ ըզդիւարբախ իշխանքն հրարարս՝ սր ոչ ծա-  
նեան .

Ի չարաշուք Հապոյց յանհաշտ ի թըշնամեօյն  
էլեալք ի կողմն ,

Ձի համարձակ անմեղադիր կըրից սըլծոց տար-  
ցին պաշտօն ,

Բզկուսածին թողեալ զԱստուած եւ զԱնահայ  
վերաօցեն դա՛՛ .

Յինամեայ ճրգուքք քաջին ամենն հարաւ ի մո-  
ռացօնա : . . .

Ա՛յ տիրանենդ դու ու աշխարհին աղետից հայր  
տուն Սիսակայ ,

Դու երգուար յարեւն Արեայ շեջուցանել զմերն  
արեւակ .

Դու խըթեցեր բարապանի վեհին արծաթ զը-  
ժոխակուռ .

Ա՛յ մըլուժիւն հեշտ , սյ կոյր նախանձ , սյ կա-  
րասի ,

Յ՛ր եղերուն ոչ գեցուցէք զաշխարհ եւ յար  
ի նոյն գրգէք :

Անօրինին զարծաթն առեալ՝ ըզՅուգային նիւթեր  
լըռիկ .

Մակայն ի դուր թաքուցանէ սիրա զոր երեւըրն  
մերկանան :

Թագաւորն ամենխմատ հարցումն տունէր « Ե՛կ  
եւ ասա ,

Սենեկապան , զինչ այդ հճծիւն , զինչ այդ վա-  
րանք ի նախարարս .

Ա՛յք ըլիտորհուրդ մնասուժեան մըտաբերուն ի  
խո՛ վերայ » :

Իսկ ապերախան եւ զատ արանց՝ հարեալ յոգի  
եւ թալացեալ

Մինչ զանձնամատըն գոլ խորհէր եւ կամ՝ զեր-  
թայլն զեւրովն ,

Ո՛յժ ի գիւէն առեալ պընդէր ըսա սալացեալ  
սըրտին՝ ըզդեմն ,

Չանդիտուժիւն խոստովանէր , օտարտի զկար-  
ծին ասէր :

Գետաց արքայ զնենդոյն դաւանս , ոչ ըզնենդիւ-  
սըն բովանդակ .

Եւ զի խափան չարեացն արկեց խըստաարբոս-  
ցըն ծառայից

Ազատաբայլ ի յարբունեացն ելեալ էր թայր կալ  
ծակամուտ ,

ԸզԻրիդորի հեղաւ կոխեր յայրըս Մանեայ յե-  
րիցըս սուրբ :

Իսկ նենդչացն ըզմահուչափն օխտանալով զատու-  
լուժիւն ,

Եւ յերկեղէն խեթկեալք՝ զի մի խաբէուժեալ  
նրն նշաւակեալ

Ահաղխակ հարցին տիգօք աչաց վեհին եւ կո-  
րիցեն ,

Ար մենացեալըն մտաչէին աստուածաւան երկ-  
նապարիկ .

Եւ վարապոյր ընդ տէրունիան արկանելով ըզկեղ-  
ծեալ բարս՝

Խեղք ըզընկողք ի դուձս անկեալ դարչապա-  
րացն ըզհող լիզուն ,

Բստըրբանան ըզխեուժեանն , երգուժն տան  
ծառայարար .

Եւ զհաւոր առկէնն ի սպանոյ որսացեալ գաղա  
 ածենն ի գահ :  
 Ի էրինք Գարանաղեաց համայն բարձամբ արտօսը  
 հարէք,  
 Արք արեանց դրժոխագէնք խարդաւանակ կան  
 Տըրգատայ :

Ի գեղեցիկ ի կենսաբեր առաւօտուց Կաւա  
 սարդի ,  
 Յառաւան յիշատակաց եւ Անահայ անկից  
 բերող ,  
 Յիշատակ եւ աշխարհին թափման ի նոյն ի Տըր  
 գատայ ,  
 Որպէս գառնայրն սիդաճեմ եւ յաղթասպանծ  
 ի Լատինաց ,  
 Եւ բոցավառ աչս ածելով զարթուցանէր ըզհայա  
 ստանն  
 Եւ մըրքնէալ ահեղապէս՝ հարածական տանէր  
 ըզՊարս .  
 Երանէր առոյգաբարձ որպէս յաւուրըս մանկու  
 թեան ,  
 Աստուածակերպ շարժէր դըրուս յարծաթա  
 ձոյլ վարսիցն ի հիւս ,  
 Աէք իննըսուս պար ի ճակատն անուէին դոյզն  
 ձրգեալ հերկ .  
 Որպէս մայրն հինաւուրց կայր բարձրագլտակ  
 սպայիցն ի դունդ ,  
 Եւ հովանին արբայառուք՝ ըզբանակաւ տարս  
 ծանէր .

Թե յերկար ի լուսակիցն աշտանակէր բարձրա  
 վըղեան ,  
 Ոչ մի հեծեալ զըզընթանալ քաջաձիոյն այն  
 ստակէր ,  
 Եւ հեախորս նահատակ թե զեղէրուաց , վը  
 թից պընդէր՝  
 Ասպարիգաւ զընթացակիցըն շընչասպառ թողըր  
 բացեայ .  
 Զհայկեանն առեալ դոռ լայնալիճ՝ նեա ձողա  
 չափ կըւէր ի ճահ ,  
 Ի գիրկ մըրեալ հըրկայօրէն՝ ոստուցանէր լեւան  
 ի լեռնէ՝  
 Եւ անկասկածն ի ջամբ վարազ՝ գահալիժիւր ի  
 խորածորս .  
 Այսպէս նազէր նահատակէր ծեր թագաւորըն  
 Տըրգատես :  
 Այլ ինձ լերինք Գարանաղեաց ըզլաց հարէք մե  
 ծամըսուսնչ ,  
 Թանձրացարուք բստուէրք մայրեաց , խաւարաւ  
 ցի սկի արեւուն .  
 Քանց շարեաց ժանտըն Միսակ , լարեաց զաղե  
 զըն մահաձին ,  
 Զարի սըբայն գաղանակուի՝ խարդաւանեւ ի  
 յանտատի . . .  
 Այ , կարկամեաց պօսացիր ձեռն ժանս , յո՞  
 յանդըզնեցար .  
 Այսպէս նեղեաց Պահլան հըպարտ զարբայիդ  
 հայր ըզբաջ խորով ,  
 Քանի՛ խաւար անտի տանս հայոց , քանի՛ նըղովք  
 յԱնակ .



Իսկ դու ըզքո փրկիչն այդպէս ո՛վ վատ արանց ,  
 Ի մահ մասնես .  
 Ստական երկինք ընդ գաւազրուժ ընդ տիրանենդ  
 ընդ այդ ոճիր : . . .  
 Ըստուերք մայրեաց Թանձրացարուք յարե ար-  
 քայն Տրգատես :  
 Եւ վերաւոր՝ այլ կորովն , ծաղղէ զհարուածըն ,  
 Ըյ զհարող ,  
 Եւ ձեռնն թափ խոժողագէմ՝ (պակչին բանակք)  
 զայ յիւր հովոց .  
 Յաղմանուջ խորասուղաւ նաւասարդին այն ա-  
 ռաւոտ :  
 Իսկ ժանտաժուտ բարապանին եղեալ համակ  
 զիւադարան ,  
 Աւ տէրնն մեծ եւ ահաւոր՝ մատուրեակէր զմա-  
 հու բաժակ . . .  
 Եւ դուք տեսիք , երկինք , եւ ըսյդ հանդուրժե-  
 ցէք՝ թէպէտ զբժկամք .  
 Թողէք ի գլուխ երթալ չարեաց եւ խորհր-  
 դեանն աշխարհուեր .  
 Այսպէս վերինքըն կշռեցին կամք՝ անքնինք ի  
 մահացուաց :  
 Ընդ մահախաւըն բաժակին՝ զերկնի հրամանս  
 արք Տրգատես ,  
 Իարք եւ գոհացաւ , « Արդարութիւն , ասաց ,  
 ըջցի » .  
 Եւ զի մի յեւն հողոցն մեծի սեաւ արհաւիրք  
 անկցին ի հայս ,  
 Եւ ահեղցն աշաց կափոց զաշխարհին վակեացէ  
 բաղդ :

Վարագուերըր զանխաւ զէմնն եւ արձակէր զան-  
 մահ հողին : . . .  
 Հորնեցաւ . Թըւէր ի քուն առխձակերպն Ար-  
 շակունին .  
 Ահեղութիւն վըսեմ փարէր ի մէջ յունիցն եւ  
 ճակատուն ,  
 Եւ ըսյ փայլեալ մտակաւասար յանթառամ դէմ՝  
 սնն փողկողէր :  
 Տեսին եւ ստակցան . հըպէլ ումէք չընէրէր  
 սիրտ :  
 Թանձրացարուք ըստուերք լերանց վերաց հանուրց  
 Հայաստանեաց :  
 Այսպէս անցոց կոյր գառնութիւն զարի ար-  
 քայն Տրգատես ,  
 Այսպէս շիջոց ինքն Հայաստան զինքեան ա-  
 րեւն ըսքանչելի .  
 Այսպէս մեռաւ զեր մահացուաց եւ անմահից  
 զարմանալի :  
 Ո՛հ , անդէն կամանն հաշաից զոր ի Մասիս պըն-  
 դեաց Գրիգոր՝  
 Թիկնագարձոց առ Հայս ընկեստըն պահապան  
 վրիժակս արար .  
 Մըրրկեցան երկինք վերուստ , ձայն ի ներքուստ  
 ետուն սանգարք .  
 Հերձեալ ըզվի՛հ Մասեաց ելին ողւոց սըզծից  
 գունդք սեւաղէմք ,  
 Աւետաւորք առ Թըշնափս տանըն Հայոց եւ  
 յարուցիւք :  
 Ահա գայ սեղըն Շատուհ՝ զիւր եւ ըզ՛օր խնդ-  
 րել ըզվրեժ .

Ահա գան հրոսակք հիւսի որպէս տարափք  
 ձեան ի լեբանց ,  
 Սուբան զերկրաւ եւ անցանեն ընդ երկաթեայ  
 լեբանց պահակս .  
 Ասպատակն առնու գերել գերփեւ ըզտուն Հայոց  
 անշորհ : . . .  
 Փախերոք դաշտք , թաքերոք վեմք , ահա հա-  
 սին արինարբուք . . .  
 Զո՞ հարդայէք յօճան , ելք Յոյն , ատամունս  
 կրքճրակ Պարս ,  
 Հոն եւ Ալան , գունդ գունդ խաղբայ Բասւլայ  
 զիմեն արինըռուշա .  
 Եւ նախարարք մոլեգնեալք սուսեր ի կող ձրգեն  
 էղբարց ,  
 Տոհմ ընդ սոհմի եւ տուն ընդ սան հարեալ ի  
 զուր զրաւեն զերար .  
 Ընդ չորս ցըրուի հողմունս Հայաստանեայցըս  
 գերութիւն ,  
 Եւ ծովածուփ յուգեալ աշխարհն ի զուր խնդրէ  
 զարեայքն վերջ :  
 Ծածկեցէք բարձունք Հայոց ծածկեցէք զայս-  
 բան արհաւիրս ,  
 Եւ արտասուն ընդ ըստուերայ արկէք ընդ կող  
 մին Թորդանայ ,  
 Անդ առեւծն Արշակունեայ հանգչել առնու  
 ահեղ քրնով : . . .

Ընդ շաղաւտն երեկոյնեայ ժամ հանդարտիկ եւ  
 ստուերածու  
 Իսպք դասք գընդից լըտիկք մընջիկք էլանէին ի  
 յարբունեայ ,  
 Երթային եւ մընչէին ընդ ճանապարհքս Թոր-  
 դանայ :  
 Կարապետեալ ընթանայր զրօշն արքունի սեաւ-  
 էրիզապատ .  
 Բարողէր փողար . « Արկք , արքայ Տըրգաս  
 փոխի 'հանդիստ » .  
 Արձանացեալ կային անցորդք ճանապարհայ  
 ծուռի ի յերեր ,  
 Ի գահայից ու աշտարակայ իջանէին գընալ յու-  
 զարկ ,  
 Եւ ծընկատեր խիղախեցին հարսունք վաղէլ յու-  
 սագաստէ ,  
 Եւ կուսանք հողագլուխք զարտար եւ սուգ ա-  
 սեալ ի քող ,  
 Եւ ծերութիւնն ի ցըպոյ ոչ յետներ ի նոյն ան-  
 կանել կարգ .  
 Իբրեւ աղղեալ ի բնութենէ համահաւաք գայր  
 սուն Հայոց ,  
 Դիզանայր որպէս զամպ , տարածանէր որպէս  
 փոշի :  
 Եւ ահա ցոլք վառիվառ փայլատակեալ սուրբ նը-  
 շանայ ,  
 Յատաջնթաց Հայրապետին երով ծերոյ Վըր-  
 թանխի  
 Որ յայն ժամէն կըրէր յինքեան գողգին ցաւոյ  
 բիւր երաչխեպ ,

Խոյրաբարձ դիտասկեօք եւ անհամար պաշտօնէիւք,  
 Յուշիկ ի քայլ, օրհնութիւնքս բուրելով եւ ծուխ խնկոց •  
 Եւ ահա կառքն սեաք բեհեղազարդ ըսպիտակաւ  
 Ի սրտզաջուն անդրուվարեալ քառից ջորեաց ոսկեամնձից  
 Յրցունազարգք եւ սիգաշարժք չափով ի գնացրս ճախրակահնք •  
 Եւ դիակիր անգ դադալք արծաթապատք եւ ոսկենիշք  
 Յականակողոքս պաճուճեալ եւ յոսկեթեւ պատմուճանս •  
 Շուրջ թիկնապահք թագաւորն սուսերամերկք ճեմ՝ ըզճեմի,  
 Եւ սպայադուռն ըսպառազէն դեղալցօրէն նոցին ըզհետ,  
 Եւ ջոկք վաշտուց երկուստեք վառիվառեան ի զէն ու ի զարդ  
 Եւ բեւքք բիւրուց արբուսական զօրաց եւ խուսբ նախարարեան,  
 Եւ համօրէն զինուորութիւն մարտակիրե տան թորգամայ,  
 Աղեղնազօք, ասպարակիրք, մըկընդաւորք, ակդաւորք •  
 Անցանէին ամենեքեան շրջեալ յերկիր զինուցն ըզճայր  
 Ռազմականս նըւագելով ձայնս եւ ողբս ազգի ազգի փողովք

Աստի ւանտի սար սիրելեաց եւ ընտանեացն արբայի,  
 Եւ մեծամեծ իշխանք՝ բարձեալ նըշանս ի ձեռն զողորջունս •  
 Եւ որդէք թագաւորին հուպ առ կառօքն հեւտիտս  
 Անձկայրեացք եւ միջաբեկք նըւազաձայն կողկողելով •  
 Եւ դագաղացն ըզհետ՝ փողաբք արուեստականք, տաւեղք սըրայ,  
 Եւ ձայն դուժի բարձրացելոց հերձանելով ըզսիրտ եւ զօգ •  
 Եւ ողբասացք սեւապըողեալ կուսանք անկեալ յտան ի մատին  
 Ծալ ծալ հերօք ծաւալ աջօք դարձ ի դարձին շարժեալ ճեմիւք  
 Ի յայս ի յայն զուլն կըւեալ, սպխտակածղի մարդեալ դասասակ •  
 Գեղ գեղ ջայլէք յարմարեալ ճիչ սրտաճըմլիկ ի յաշխարան  
 Եւ ջատուկ մատամք խըղեալ հոյլս հոպուպաց ի հիւս վարսից,  
 Նըւանցն սյալից ցեւս ածելով ի վարգադոյնս արեան կիտուած •  
 Եւ համօրէն ամբոխ ոսովին ըզհետ գրդեալ անհուն բանակ,  
 Որք երթային եւ յոգւոց ելանէին բեկեալք յանձինս •  
 « Վահ եւ եղուկ ասէին, զի բարձաւ քաջնս ապրինին •

Վայ մեղ եւ վայ որդւոց մերոց , վայ աշխարհիս՝  
 զի եկին մեւթ :  
 Չխորդ առաւ վերացաւ արի արքայն մեր Տրգա-  
 տէս » :  
 Երբնք Ռարանաղեաց , արձակեցէք ըստուերս մը-  
 թին ,  
 Հովանանալ ի թորդանայ դրախտից շերմին ի  
 մահարձան .  
 Անդ հանգուցաւ անհրազօր արքայն Հայոց մե-  
 ծըն Տրգատ .  
 Անդ նընջէ սիրտն առիւծու սարսեցուցիչ արե-  
 ղերաց ,  
 Անդ նընջէ հրակայն արի եւ բրխտոսեան քաջ  
 նահատակ .  
 Վէմին կըճեայ զանյաղթնունի , եւ ապիկի՝ ծած-  
 կոց զիմին .  
 Եւ կափարիչ տխրագէմ՝ ա՛հ , կափուցանէ զա-  
 րեւն Հայոց :  
 Ըջնա զիտեն անբուն սրահակք արեգականց  
 ասք անմահից ,  
 Հառաչանք Մանեայ ըջնա կոծին անդրէն կեն-  
 դանացեալք ,  
 Ըջնա ողբան ամենայն շունչք եւ ուրուականք  
 Հայաստանեայց .  
 Չարի արքայն Տրգատ որ զամս վաթսուն սան-  
 ձեաց զճիւսիս զճարաւ .  
 Չայն Տրգատէս՝ որ զամենայն խոնարհեցոյց հրս-  
 կայս բրոունս ,  
 Չայն Տրգատէս որ դահ կալաւ ի վեր քան զգահ  
 թագաւորաց .

Չայն Տրգատէս՝ որ սարաբեր յանդորրու զաղք  
 Հայոց մեծաց .  
 Յստալ քան ըջնա ո՛չ որ , ո՛չ մեծագոյն յեա նո-  
 րա յարեաւ :  
 Եւ քարոզն աղաղակէր . « Հանգեաւ արքայ .  
 դարձիք երթայք » .  
 Եւ բազմութեանն ըզգամբանէն ըզձացեալք բու-  
 ուն հարկանէլ  
 Բազուէք յօրս յերեր կղկաթ եւ կաթոգի՝ ո՛հ ,  
 գոչէին ,  
 « Չխորդ անկաւ փառք տանս Հայոց անհր ար-  
 քայս մեր Տրգատէս » .  
 Եւ ճանապարհք թորդանայ զճեա հընչէին , « ո՛հ  
 Տրգատէս .  
 Չխորդ անկաւ փառք տանս Հայոց անհրազօրն  
 Տրգատէս » :

### ՃԱԿԱՏԱՄԱՐՏ ՉԻՐԱԽԱՅ

Ե Ի Ք Ա Ջ Ա Կ Ո Ր Ո Վ Ն Մ Ո Ի Շ Ե Ղ

Յուան ցայտեն փառք աստեղն Հայկայ .  
 Տան Սասանայ հաս օր վրիժուց .  
 Յարեւմտից գիւժ Պապ արքայ  
 Լըծեալ հելլէն ջոկս առիւծուց .  
 ՅԱնյուշն է բերդ՝ յուշ տուք Արշակայ ,  
 Վերականգնին վաշտք Վասակայ . (սկս  
 Ի ճերմակ ճարտուկ սըպեալ արծուս .  
 Իմէ սկայաբայլ գիմօք բոցադէս  
 Քաջակորովն Մուշեղ  
 Յառեալ է Պարս յակն է շեղ :

Ո՛վ Հայաստան բաղդ քո յերկին կայ  
 Ագահ բըռանց անձեռնհաս .  
 Արի զէն ըզբեւ , կանգնեաց իբր հըրկայ .  
 Սասանեցան Տաւրոս Կովկաս .  
 Մարն եւ Ասուր ի քէն նետահար  
 Չիչխեն շարժել շիրմոցն ըզբար .  
 Ընթացուք է զէն է մարտ եւ է յաղթ ,  
 Հայրենեաց հիմունք ամրացին անխախտ .  
 Հայոց հաւատք Հայոց տուն  
 Կացեն ազատ հաստատուն :

Հըրոնք հիւստի , դարձարուք է սարս ,  
 Լալով զանկեալք է ձէնջ գեղգուր .  
 Մի պայքարիք ընդ վեհազանց պարս  
 Մի դք գրգուէ գծորգամայ թուր :  
 Աւանջեղ Լեկ շանթահար Շէրգիր՝  
 Ի Կամարէն քաջէ յերկիր . (Թիթ ,  
 Սպանդարատ կրարեալ զաչացդ հուակ քը-  
 Չամուսինդ այրի եւ որք ըզմանկաղդ  
 Եւ զարեւուգ քաղցըր ծայր  
 Յանարշաղցան հանէ մայր :

(նայր ,  
 Հառ եւ քեղ վերքդ այդ , փախիր սեդ Ոււ-  
 Որ ըզգազել սփռես բազուկ .  
 Քաջակորովն ըզքեղ կրփէ այր  
 Յանպարտելի զինուն գըղզուկ .  
 ԸզՄուշեղայ խնդրէիր ըզգըւկս ,  
 Տար Հասոյ զբոյդ արիւնհարուկս ,  
 Եւ « Ճերմակաձին՝ զայս խոցերս , ասա ,  
 Պարգևեաց յարեւդ , արքայից արքայ .  
 Թէ ասելի կայ քո ժանս  
 Ըզնա՝ ու Մուշեղ մատո՛ անդ » :

Տարամերժեալդ է մէնջ Մերուժան  
 Չանգուլթ Հասուհ զիւթես է զուր .  
 Չուր Մաղդեղանց ծըխէ ասորուշան ,  
 Յաճիւն դարձցի վաճառականն հուր .  
 Հայր Հայրենեացս է սար Կըլպատակ  
 Կերսես Պարթեւ կայ յօժընդակ .  
 Ծածանի Երկին հաշտարան ըզմեք  
 Չաղեղանց տարափ կուտէ զթըշնամեք .

Խաղաց Հայկազն և Չիրաւ,  
Պարսիկ բանակն յեռս հարաւ ։

Կայց Արծրունիդ գու կաց ամբարիշտ  
Հայոց թագին հետախընդիր ,  
Յարժան վարձուցդ հին՝ խուսափես միշտ .  
Ահա եհաս քեզ թագադիր .  
Սըմբատ ասպետ զայս քեզ և սրխոտը  
Կունտ դագաթանդ ածէ շամփուր .  
Արբանեակ հըրոյ , պըսակեաց հըրով  
Իերթ բաղմեաց և գահ յԱրհմանի ժողով .  
Այս թագ , այդ գահ մասնըջաց  
Որք դրժեն Հայ հայրենեաց ։

Փող հարէք Հայք , յաղթութեանց կարօտ  
Աւարեցէք աւետաւորս .  
Ուսովք ուռեաց յեռադոյն նարօտ  
Բոլորեցէք ըզլերջաւորս .  
Իջցէ արքայ և բարձր և զխան  
« Աւ Արշակ քաջ » Պարսք զոհ եղեն ։  
Քահանայքդ յերկինս եւ ըսպայք յերկիր  
Հընեցէք զհամբաւ մարտիս երկնաձիր .  
Վառիւ խաչիւ արծուենըշան  
Վանեաց վանդեաց զատուշան ։

Կարկաջահոս յախն Արածանի  
Սեղան ուղղէ մեծըն՝ Կերսէս ,  
Յորմէ վաղեաց Տըզատ հորանի  
Վընքեաւ յԱստուած ու և Գրիգորէս .  
Կտրմիր ճակատ հայախոյտ մանկրտին  
Գոյն քաջութեան անդ մըկրտին .

Ծափեն յորձեռանդըն խաղքն յԱշտիշատ  
Ի Կարապետին վանս ծափ ուխտաշատ .  
Վազեն մանկունը թմբկահար  
Ինդ Բագրեւանդ ճանապարհ ։

Ճողճեալ ճօճի ճերմակն օդապար  
Ոսնատորոփ ճախրաւայցիկ ,  
Փուրնչևն ածէ և Տիրինկատար ,  
Սըրահեշտանան ճորտք քաջաձկք .  
Գոտայ Գըրգուս , մարնչէ Մամրուս  
Մեղ մեղաբաւուս խայտայ կրկնուս .  
Սուր սըբաւ սըբէ գըբըտոուն ևւր Մուշեղ  
Տարտիս յաղթուէց կաթեն վարսք շքբեղ .  
Յըցէ զնիզակն ևւր արի  
Պահպանակ Հայ աշխարհի ։

ՅԱՌԱՆՁԱՐ

Ս Ե Պ Ո Ւ Հ Ա Մ Ա Տ Ո Ւ Ն Ի

ՀԱՅՈՑ ԳՆԴԻՆ ՀԵՏԵԱՊԵՏ

Ձիաւորեալ երթային Հայք ի հանդէս  
 Ի բուռն առեալ պիբի դանդախանող .  
 Ա՛հ ընթանայր ի դունդ Պարսից սեւատես .  
 Դողայր թընդայր Հէր եւ Չարեւանդ :  
 Պի՛չ պի՛չ մանկտի, ընդ ճանապարհ բըլբըդ այդ պի՛չ  
 Տեսանիցէ՛ք ամպ վերացեալ յերկրէ յայդ նի՛շ :  
 Ա՛ն արեւուս շեշտ կը շիտ  
 Բզմիջօրեաւ դայ ի հիւս .  
 Կողերք սուսեաց լայնասաղարթ  
 Կան ճապաղեալք զերկրու հանդարտ .  
 Ոչ է հնչելու զովոց հոլմոց  
 Ոչ է խօշնու տերեւակոծ .  
 Եւ սուբայով ընդ ամայիս պողոտայ  
 Փռչն անհողմ բարդ ի բարդին վերանայ :  
 Դէք դուք մանկտի, միտ դէք, լըսէք զամբ եւ  
 Թընդիւն  
 Օղապարից երիվարաց փոխն էւ դոփիւն :  
 Ձիաւորեալ երթային Հայք ի հանդէս  
 Ի բուռն առեալ պիբի դանդախանող .  
 Ա՛հ ընթանայր ի դունդ Պարսից սեւատես .  
 Դողայր թընդայր Հէր եւ Չարեւանդ :

Որպէս յաղբեց հեռուորաց  
 Հառաչածայն սահանք ալեաց ,  
 Մերձեալ հողմով գըրընչին  
 Ըսինզնն ձիոց եւ վարչին .  
 Որպէս նաւուց գուճարտակ  
 Լըցեալ հողմով զառագաստ  
 Թուռցեալք ընդ դաշտ կապուտակ  
 Ճեմին ճօճան ալէսաստ :  
 Գունդք են քաջաց հեծելըց  
 Սպառազնեացն Հայոց .  
 Շողին զրահնից եւ նիզակք . . .  
 Յաւաջ մտալիք նահատակք :

Արշաւասոյր յառաջագէմ ի նժոյդ խարտէշ  
 Դիւցսագատեկը երկոտասարդ դայ գեղաղէշ .  
 Պերճաստորդ տոհորակէ ճախրասպց  
 Օղապարիկն իւր ուղղամուղ բանակաց .  
 Ոսկեսարեան սանձ ի բըռին հեծեալն աւուրդ  
 Հաղիւ կոխէ յասպանդակիկն՝ ոտին թաթիւք .  
 Կըռէ կանդուն իբր աշտարակ՝ ի բերդ շարժուն  
 Ի թըխտեկը պղնուք եւ դէմքն վարդադոյն .  
 Իբրք սեւորակք տիգեալք անթարթ ընդ ուղին  
 Փայլատակեն ճըրտաս ախորժ ու աճազին .  
 Ծայրք ծընտօցի թըլին ծիծաղ առ համբըր  
 Եւ զարգմանակն այն պիտէ ահա արջնաթոյր .  
 Թըլի համբուն յերիվարաց սընեալ ի նիւս ,  
 Եւ յառապարս ճեմի հանգոյն ծաղկանց ի բոյս .  
 Գամ մի գիւց՝ ղնու սուսեայն ի զով հովանի .  
 Հաղարք երկու հեծելըց կան տողանի :  
 Ա՛հեպարանոց երիվարք յոխորտ

Մեծամեծ ցնդմամբ շարժին սկզբներսս ,  
 Ընդ պինչ բոցաշունչ , զ երթսս եւ դանդան  
 Պըրպընակ փրփրոյ ժայթքեն յեռանդան .  
 Դափր յոտին վակժոյժք քորելով զերկեր  
 Յուզեն դառչոյ շինդըն մարտից գրդիւ .  
 Հազիւ տեսրց իւրեանց ըզդէմս քրանահար  
 Ներելով սըրբէլ սլաքօք անսարար :  
 Թափեալ եւ ասպեան ի կռանց իւր վարսից  
 Ըզցօղ մարդարաց ի զոյգըս վարդից ,  
 Նիղակ ամբանայ նըշան սոյ գընդին  
 Եւ մարակելով յառաջէ զուլին :  
 Ձիւտորեալ երթային Հայք ի Հանդէս  
 Ի բուռն առեալ պիրի դանդանաւանդ .  
 Ահ ընթանայր ի գունդ Պարսից սեւատես -  
 Դողայր թընդայր Հեր եւ Զարեանդ :  
 Ա՛յ , է ասպեա քաջաճի  
 Գեղեցկագեղ եւ արի ,  
 Ո՛ղ դաւ , եւ յո՞ եղեալ դէմ՝  
 Հէճեւակցօք զուգադէմ : —

« Հայոց գընդին նախամարտիկ հէճեալ եմ ես ,  
 Ի վարդանայ յըլեալ քաջին ի մեծ հանդէս .  
 Երթամ պուղել պղտորել ըզդեղճ Պարսիցըն  
 ճամբար ,  
 Հայոց քաջաց տամ հրաւեր Բնատունկս Աւան  
 ձար » : —  
 Օրհնեալ ի Տեսանէ դուդ եւ ուք ընդ քեզ ,  
 Հրեշտակք յարգարեն ըլճեր ասպարեզ :  
 Օրհնեալ սուսերք քաջացոյ հաստոյր  
 Շրթամիք հոգոյս տամ ձեզ համբոյր :

Ընդ հետս հէճեւոց ըզսիրտս յուզարկեմ ,  
 Զփոշիկ վերացեալ ըզգլխովս ամեմ :  
 Մուրք եւ փառասոր է քեզ ճանապարհ ,  
 Օ՛ն մարտակեալ հասս , յաղթես Աւանձար :

Ձիւտորեալ գառնային Հայք ի Հանդէս  
 Ի բուռն առեալ պիրի դանդանաւանդ .  
 Կայր ահաբեկ գունդըն Պարսից սեւատես .  
 Դողայր թընդայր Հեր եւ Զարեանդ :



ՍԵՊՈՒՀՆ ՎՍՍԱԿ

Շօփնդն անեղ հնչէ վրիժադործակ յԱրեաց գրա-  
նէն .

Կորանաց կանգնումն առնել բերովք ջորօք հրո-  
սօք

Ի մարտ մահահոտ մըրըկեալ Միհրան զէն յաս-  
պաղէն

Վերացեալ վարդի հետեւաւօք , ձիովք փրղօք :  
Հապա մանկտի գքաջն Հայոց զարթուցէք ,  
Յարիւն ժանտից ըզսուսերս մերկացէք :

Չայն բարձին կարկառօք Կանգարաց , ձայն արձա-  
կեաց Կուր .

Վիրք , Հոնք եւ Աղուանք ակնարկեցին առ  
Հայաստան :

Չարթլէք վեհազունք . զարթլէք զայրոյթք իմ  
բոցահուր .

Վասակն եմ Սեպուհ մամուռնեան , ձեզ ամե-  
լով ձայն .

Հայոց մանկտի ձի կալէք ընթացէք

Արեամբ ժանտից ըզսուսերս քառեցէք :

Ոյք են սիգախրոխտք հեծեալք եկեալք յԱրեաց  
գրանէն : -

Գազանք գինեղէնք եւ երկվարք գիշերադէմ .

Սեւագունդ զօրաց ջրկեալ ջրլիր զիրար մըլնն .  
Ո՛հ զխորդ աշխոյժք վառէն զօգիս արևնաճնմ :  
Հայոց մանկտի , ձի զճերմակն իմ ամէք ,  
Արեամբ ժանտից ըզսուսերս քառեցէք :

Ե՛կ սերճաստորդ էկ ճախրասպաց էկ իմ ճերմակ ,  
Նըմանեալ ձագուց արծուեաց ի թիռս անդր ի  
Կանգար ,

Ե՛կ փայլակնտոխոյ օդսպարկից իմ հրատեալ ,  
Եւ առ սեւագունդն այն քաջապէս ըզտէր քո  
տար .

Հայոց մանկտի , հեծարո՛ք զհէտ ելէք

Յարիւն ժանտից ըզսուսերս մըխեցէք :

Հա՛ սասպաստանիկդ իմ , հա՛ հա՛ հատ զայդ սասպա-  
րեղ . . .

Հասիր . հետեւալք սմբակախոխ անկան տա-  
պաստ .

Հասիր . հեծեալք յետս հարան ծովուց սէս  
փրփրադէղ .

Հասիր . փրղակոյտն ըզգետնեցաւ իրր առա-  
գաստ .

Հայոց մանկտի , հետամուտ լլէք հասէք

Յարիւն ժանտից ըզսուսերս արբուցէք :

Փախլէք այժեմունք ստոսանածին Սասանայ ծը-  
նունդք ,

Փախերուք ի քաջն Վասակայ դէպ երեսաց .

Հարուած առ հարուած գլխոցդ իջցին ծանրը  
մահունք .

Եւ զի զահանդիք , զի զօրհայք , զի կայք ուշա-  
գնաց .

Հայոց մանկախի , արմբիկնէք էն , հասէք  
Յարիւն ժանտիցն ըզտուերս հեա արիկէք :

Ի զուր ձեզ ի զուր . ճանապարհացդ այդ չիք փա-  
խուստ ,

Համառօտեցան ձեզ արեւունքրդ թըխաթոյր .  
Սակայն փառք ձեզ այս՝ բաղխաւ քաջն զնալ ի  
կորուստ ,

Հրածօճ՝ նիզակիս՝ արիւն բերան տալ ըզհամ-  
բոյր .

Հայոց մանկախի՝ նդ գիակունս ընթացէք ,  
Յարիւն ժանտից ըզտուերս կրկնեցէք :

Երթայք վատք արանց՝ առ որ կանխաւ ի ձէնջ չո-  
գան ,

Առ Խոռեան , Վըշնասպ , Արբըվըշնասպ՝ ըս-  
պայս ձեր գոռ ,

Երթայք առ Որսիդդ , առ Արհման սեաւ եւ  
առ Զրուան .

Գողէք , Վասակայ նիզակն է մեզ յուզարկաւոր  
Հայոց մանկախի , ճե՛ր , յառաջ եւս անցէք

Նիզակահաճօճ՝ մահունս շուրջ սփռեցէք :

Վահան , իմ եղբայր , կըրճմ պըշնուս յերիվարէդ՝  
Զայս իմ բոցավառ տեսեալ գէտք , զայս իմ հուր  
աչկունք .

Ի վերին հըրոյն զիս կայծակն հար եռանդնա-  
ւէս ,

Եւ բորբոքեալ գնամ ուր մահ ուր փառք ուր  
սէրք զուարթունք :

Հայոց մանկախի , զիս յառաջ անցուցէք ,  
Յարիւն ժանտից ըզտուերս լըցուցէք :

Այլ յինչ յուսացեալ ինձ պատահէ սխոյս անարի .  
Ահագին հըրոյս ս՝ ժուժայցէ այ բանգապըջ .

Ահա թաւաղեաց իբր ոստաբանից կոճղ անտա-  
ռի .

Նիզակս այս կացցէ ինձ յաղթանակ ի լանջդ ա-  
նոյժ .

Հայոց մանկախի , ինձ նիզակ հասուցէք ,  
Յարիւն ժանտից ըզտուերս անցուցէք :

Առ նիզակն Ներսէհ , առ նիզակ , չո՛ղ , փութիւ  
գարձիր .

Պատեւրով պատեն զանդէն առիւծս որդիք վա-  
տաց .

Ինձ զէն զօրութեան քաջն յողւոյ գոյ անձան-  
ձիր . . . .

Հասին ժամք փառաց , Ներսէհ , ինձ շէն պէտք  
նիզակաց :

Հայոց մանկախի առ Ներսէհ ձայն ածէք  
Եւ ի վերայ քաջացս աստ զիս ցուցէք :

Հայաստան երկիր , ոըջամբ կացցես յարեան կար-  
միրս ,

Ես անժոյժ թըռեայ սըացայ , հարի քաջ եւ հա-  
րայ .

Ես ելեալ երթամ արկանելով մեծ արհաւիրս . . .

Ես ելեալ գնացի ըն քաջութեամբա յերկրէս վե-  
րայ : . .

Հայոց մանկտի , գլուխ ի վեր ամբարձէք  
Եւ արուժինն ի հոգայս մաղթեցէք :

Համբարձէք երկինք զնահատակացըն յաղթանակ  
Ձեկեղեցազարդ զհայրենավրէժն առաքինեաց .  
Վահանայ եղբայր ես Վարդանայ եղբորորդեակ  
Սեպուհն եմ Վասակ՝ զինուորեալ Տեառնն զօ-  
րութեանց :

Հայոց զուարթունք , ըզքաջաց գահն արկէք  
Եւ Հայրենեացըս գէմ զին նըստուցէք :

1847

ԵՐԳ ՈՒ ԳՆԱՅԻՔ

Չ ՕՐԱՅՆ ՀԱՅՈՅ ԸՆԴ ՎԱՀԱՆԱՅ

ՄԱՄԻԿՈՆԵՆՈՅ

Ի ՇԱԽԱՐԵԱԿԱՆ ԳԱՇՏԻՆ ՎՐԷԺԻՔ

ՕՆ ԱՆԴԻ ՅԱՌԱՋ

Բան՝ փորոտան բարձուստ բամբիւնք յԱյրարա-  
տեան դաշնն ի վայր ,

Արի արանց արեւնք յեռանդն առատանան ի  
հրազայր .

Հրուէր հայրենեաց հըռչակի նդ հանուր

Հոգիք Հայկազանց բորբոքին ի հուր .

« Որք երկնաւորի պսակին էք կարօտ

Ու որ երկրաւորիս փառաց երկնահորդ ,

Հասլ՝ ճն , արի արանց մանկունք

Հայրենավրէժքըդ Հայկազունք ,

Հասլ՝ ճն ի դէն դունդադունդ

Յեռեալ ի սար թունդ ի թունդ՝

Ի դէն ի վրէժ , ճն անդր յառաջ ,

Ի դէն ի վրէժ , մի ձախ մի յաջ ,

Օ՛ն անդր յառաջ

Մի՛ ձախ մի յաջ

Օ՛ն անդր յառաջ

Յառաջ յառաջ ,

Հասլ՝ ճն յառաջ :

Հայկեան փանդոանց որոտընդոտ զոքնչին բար-  
բառք մարտադոտ .

Դառնակոտոչ անդրաձայնէ Պարսիկ կերկեր ի  
շեփոր .

Շարժեն հրեշտակք թեւըս լուսադողդողս ,

Ճիւղաք ճուճաղաց կայտունն ի զըժոխս .

Շունդըն շանթապք զեթերօք փարի ,

Սարափեն սանդաքք ի խօլ խաւարի :

Հասլ' օն արի արանց մանկունք

Հայրենավրէժքըդ Հայկազունք ,

Հասլ' օն ի զէն գունդագունդ

Յեռեալ ի պար թունդ ի թունդ'

Ի զէն ի վրէժ , օն անդր յառաջ ,

Ի զէն ի վրէժ , մի ձախ մի յաջ ,

Օն անդր յառաջ

Մի ձախ մի յաջ

Օն անդր յառաջ

Յառաջ յառաջ ,

Հասլ' օն յառաջ :

Մամիկոնեան սաւառնեցաւ գրօշուն յայերս գոգ  
ծալ ի ծալ

Ի ճահատուց ի թըշնամեաց' սա ոչ զիտաց յու-  
րաստ կալ .

Հեծեալ հրանբոյզ վեհին Վահանայ'

Վրէժ կանչէ արեան Կարմիր Վարդանայ .

Փոքնեալ բոցաշունչ դափր ի գարշապար

Ռազմամուտ վարդի յանժոյժ երիվար :

Հասլ' օն արի արանց մանկունք

Հայրենավրէժքըդ Հայկազունք

Հասլ' օն ի զէն գունդագունդ

Յեռեալ ի պար թունդ ի թունդ'

Ի զէն ի վրէժ , օն անդր յառաջ ,

Ի զէն ի վրէժ , մի ձախ մի յաջ .

Օն անդր յառաջ

Մի ձախ մի յաջ

Օն անդր յառաջ

Յառաջ յառաջ ,

Հասլ' օն յառաջ :

Ի գուպարէլ մարտայորդար գարշապարաց Արա-  
մայ .

Գոտան Կորգրէք , Մասիք սարսեն , հոքնչին սա-  
հանք Երասխայ .

Ի գոտճ ի գոտճ տալ բիւրօւցն ոտնաարտի ,

Տաստնին գաղտակք յառնէ շփնդն ասլոսայ .

Կուռի առ կուռի կոփեն կոբայք , տեգ առ  
տեգ

Գլորդ առնուն տարերք կորովեացն ի վէդ .

Հասլ' օն արի արանց մանկունք

Հայրենավրէժքըդ Հայկազունք ,

Հասլ' օն ի զէն գունդագունդ

Յեռեալ ի պար թունդ ի թունդ'

Ի զէն ի վրէժ , օն անդր յառաջ ,

Ի զէն ի վրէժ , մի ձախ մի յաջ ,

Օն անդր յառաջ

Մի ձախ մի յաջ

Օն անդր յառաջ

Յառաջ յառաջ ,

Հասլ' օն յառաջ :

Արեք է կռիւ քաջակորովքդ ընդ կորակոր հրանն  
Արեաց .

Հանգա համհարգք մեր բերայաղձք , ձեզ նոր  
հանգէպք են փառաց .

Թռիք է ոսղմ է խաղմ , առէք զէն եւ զարդ ,  
Երեսնիւք յըսնիւք հարուլ բեւբա հաղարս .

Ի սուր է սուսեր կարշնեղ յաղերունս  
Ղզտեաւ Սասանեանց ջարդել կառափունս .

Հասլ' օն արի արանց մանկունք

Հայրենավրէժքըդ Հայկազունք ,

Հասլ' օն է զէն գունդագունդ

Յեռեալ է պար թունդ է թունդ'

Ի զէն է վրէժ , օն անդր յառաջ ,

Ի զէն է վրէժ , մի ձախ մի յաջ ,

Օ՛ն անդր յառաջ

Մի ձախ մի յաջ

Օ՛ն անդր յառաջ

Յառաջ յառաջ ,

Հասլ' օն յառաջ :

Մինչեւ ցերբ ցերբ սուգ ունի զհայս . հասէք զար-  
տար որքք այրիք ,

Հարանց հարսանց եղբարց որդւոց , հանուրց  
հայոց վրէժնդիրք'

Թինդս առեալ երթամք յաստարէղ քաջաց .

Յերկնից հընչին ձայնք արեան սիրելեաց .

Սասափունք վերինք արհաւիրք յերկէ

Քաջացս օժընդակ ըզՊարս հեքեսցէ :

Հասլ' օն արի արանց մանկունք

Հայրենավրէժքըդ Հայկազունք ,

Հնոյ' օն է զէն գունդագունդ

Յեռեալ է պար թունդ է թունդ'

Ի զէն է վրէժ , օն անդր յառաջ ,

Ի զէն է վրէժ , մի ձախ մի յաջ ,

Օ՛ն անդր յառաջ

Մի ձախ մի յաջ

Օ՛ն անդր յառաջ

Յառաջ յառաջ ,

Հասլ' օն յառաջ :

Օ՛ն անդր է բաց հայկեան հողը հընկայազանց եւ  
արբոց

Ի բաց ջրիւր չըւստական մինրասպաշտիցըն սըղ-  
ծոց .

Դաշաք մեր մերժեսցեն զոսկրտաին անգամ ,

Արիւնք վըկայից զճասպաղին անժամ .

Ուն ընդ զիս տունեալ գարձցին է վախուսա .

Մասնակուրծք ընդ հայս հայեսցին հեռուսա :

Հասլ' օն արի արանց մանկունք

Հայրենավրէժքըդ Հայկազունք ,

Հասլ' օն է զէն գունդագունդ

Յեռեալ է պար թունդ է թունդ'

Ի զէն է վրէժ , օն անդր յառաջ ,

Ի զէն է վրէժ , մի ձախ մի յաջ

Օ՛ն անդր յառաջ

Մի ձախ մի յաջ

Օ՛ն անդր յառաջ

Յառաջ յառաջ

Հասլ' օն յառաջ :

Աբբ պեղանց , բարձր ի թիրախ թուռալիք • վեր-  
ջին ձեզ խրատոյս •

Առեալ տարցուք զանթիկնազարձ զայս վարդա-  
դոյն դրօշ անխոյս

Ի վերայ յիննից յաղթից Վարդանայ  
Պարսկական բաղկաւ արւոյն Վահանայ ,  
Շէշտ ի ծայր շերմի գաշտին Շաւարան  
Տրնկէլ յաղթանակ անուհ չայտութեան :

Հապ' օն արի արանց մանկունք  
Հայրենավրէժքրդ Հայկազունք ,

Ի Շաւարան գունդագունդ  
Յեռեալ ի սար թունդ ի թունդ ,  
Ի յաղթանակ օն անդր յառաջ ,  
Ի յաղթանակ , մի ձախ մի յաջ •

Օն անդր յառաջ  
Մի ձախ մի յաջ  
Օն անդր յառաջ  
Հապ' օն յառաջ  
Ի յաղթանակ :

1849

Վ Ր Վ Ա Յ Ր Ի

Խ Ո Ր Խ Ո Ռ Ո Ի Ն Ե Ս Յ Տ Ե Ա Ռ Ն

ԵՒ ՀԱՅՈՅ ԽԱՂԱՂԱՊԵՏԻ \*

Ի ՅԵՏԻՆ ԳԻՇԵՐ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ

Ահա լուսին հրաշէկ մըղեալ զամպս ընդ թուխ  
սար լերինն Արայ

Յուշէկ զընայ ' Է գնացուցանէ զանխուս սարսուռ  
եւ լուսթիւն

Յանտերունչ սահմանս տերանց Արշակունեաց  
եւ Հայկականց •

Յեախն գիշեր պատուութեան տարածանի զԱյ-  
րարատաւ •

1 ըռեն երկինք պարզք՝ յարձազանդս հեծեծա-  
նայ բրունաբարեալք •

1 ըռեն ծովակէքն եւ գետք կապոյտք յալեաց  
փրփրոյ յանցրս քաջաց •

1 ըռեն եւ խրոխտ ըսպառնալքը ընդգիմամարտք  
բրգանց Գրւնայ •

1 ըռեաց յետին բոմբիւն մարտի , լըռեաց յե-  
տին գոռ սլատասլանս •

\* Վրվայր խոսխոռոնի խաղաղապետութեան պաշտա-  
մանը ընդ գահազուխս նախարարաց գասեալ է ի ժողովին  
Շահապիւնայ , յամին 447 :

Իւրծաւ աստեանն արշակունի, ո՛հ, եւ բարձաւ  
 ազատութիւն...  
 Աւա՛ղ դարձունի հաստամազիլ ապաստանեալ  
 ի մուռնչ յետին : . . .  
 Իսկ արդ ընդէ՛ր լըռէ՛ւ Վ. քրվայր. հա՛պա ի մուռնչ  
 յետին եւ դու . . .  
 Ձարթի՛ր բամբիւրն չուտական, զարթի՛ր յա-  
 բեանց եւ ի մոխրոց . . .  
 Ձիա՛րդ վարթնու, զիա՛րդ հընչէ ի լըռութեանս  
 համատարած . . .  
 Խաղաղութեան յորդորակ եւ հաշտութեանց սա-  
 քաղցր հրաւեր,  
 Ըզզէնս եւ զձիս սա ոչ երգեաց, զըստըրկու-  
 թիւն իբր ողբայցէ . . .  
 Ինդ յաղթական ձայնարկուս ընդ երգ քաջաց  
 ոչ խաննեցաւ,  
 Ձիրաւունս պատերազմաց՝ զոր սիրան յարգէր՝  
 ոչ հոչակեաց,  
 Ձերեսուն դարուց հայ փառս զիա՛րդ լուծցէ ի  
 մի գիւէր . . . . .  
 Աւա՛ղ Վ. քրվայր՝ քեզ եւ բամբուանդ, թէպէտ  
 հընչէս թէպէտ լըռես . . .  
 Ոչ եւս հագներդք սրտազարթոյցք թորդոմա-  
 կան հայրենեաց : —  
 Յետին գիւէր ազատութեան տարածանի զԱյրա-  
 րատաւ . . .  
 Սիրտ ի բերան հեծեն սաղարք եւ սպայք յա-  
 փունըս Գարսաղայ  
 Թեւակոծեալ ողբամինչիկ խաղայ ոգին մեր հայ-  
 բենի

Յաշտարակաց մէջ եւ շիրմաց ածելով գոյժ օր-  
 հասարեր . . .  
 Պայծառն հայիկին ժայրտաին աչք, խանդաղափն  
 աստեղքս ի ցոլ . . .  
 Ո՛ր տայր ըզժամքս այս ինձ յաւեժս, ո՞ զկառս  
 կապեր զարեգական . . .  
 Քաղցր է ինձ քոյս այս խաւարին խաղապատեալ  
 յաղէսս իմ գաղտ  
 Քան զհանդերձեալ լըռայն մերկութ՝ նըշանա-  
 կիչ անբաւ վերաց . . .  
 Գաղարեցէք պահք բապտակք, ինձ մերա-  
 թեքս են ցանկալիք . . .  
 Յիս ո՛վ գիւէր, միանկ գիւէր, յիս ի բամբիւս եւ  
 յԱյրարատ . . . . .  
 Ա՛հ, ըզքաղցրիկ կորուսանէ զկենսագինն ազա-  
 տութիւն  
 Քնքոյշ բամբիւն հեղաճեմիկ եւ հիւսիսոյ հրա-  
 մանահան,  
 Հրաշահառոյցն բընութեան, օն անդր անհասն  
 եւ յարուստէ :  
 Աննըմանեակն ի տիեզերս եւ հիւսհաշ վեհնց  
 անգամ,  
 Արեւմտոյց ասպընջական եւ առաջնորդ արեւ-  
 էլից,  
 Շահաստանն աշխարհաց, եւ հուն ազանց ի  
 ծագս երկրի . . .  
 Որ քրկատուան սըճնեալ զարգու եւ հայեա-  
 ղին փառեալ զինու  
 Որպէս չըքնայ կուսան տարիեալ ի զինախորտոս  
 բընաւորաց

Յաւուրց շուայտըն Շամիրանց՝ հրակէր գեղոյն  
 եւ պետութեանն .  
 Կռծեալ մանրէր վանէր զլլթոյս անդըր քան  
 զծովս եւ ըզցամաք .  
 Յարդար վիթուցըն սարսէին յանձնապատան  
 Հոռոմք Սասանք .  
 Տեսեալ աշխարհ եւ զարմանայր , եւ ոսխացըն՝  
 ստեղային :  
 Երանին սային աղատք եւ անաղատք քեզ Այ-  
 ըրարատ ,  
 Ի ծագաց աղանց քեզ հիւրք հարկանէին ծափ  
 ցընծութեամբ .  
 Բեկ յարեգդէմ ճենաց նուիրակ ու երեկորին  
 գայր Հեղինաց  
 Որ ոսին քեզ արկեր գահոյս յարծաթախյլ  
 նիւս Երասխայ ,  
 Քրքում կոխեր քո գարշապար յորդան կարմիրս  
 կրկունք կօշկիր ,  
 Յսեանակուռ թաղիր ծով լըս՝ արեւ լուղայր  
 եւ ընկըլմէր .  
 Յեռաղբմբէթ սուր տանձարէն սլանայր արծուիդ  
 վարազաթեւ ,  
 Փորատէին հրաշունչ նրժոյգքդ ի սազմահատ  
 գաշտացդ երեսս .  
 Վառ քո վառեալ ի կապուտոյ ի ծիրայնոյ ի կա-  
 նաչոյ  
 Եւսագունեան եռախորհուրդ սաւառնացեալ  
 խայտայր յայերս : . . .  
 Այլ զի՛ քեզ բամբիւն , հին թուրազնտի նըւս-  
 ղենաս . . .

Հասարակի յետին գիշեր աղատութեանն Այ-  
 ըրարատայ ,  
 Անիտիին ժամք , լայնեային թեւք . մի անցե-  
 զմեք եւ մի վայրկեան .  
 Ողբացէք աղբք Արամոյ , զբաղցր հայրենիս  
 ձեր ուրացէք : . . .  
 Արի՛ արանց զարթիր Տրդատ , տես զինչ նիւ-  
 թեն տանգ եւ ազայոց .  
 Ի՞րք համառօտ եղին զոր այնքան քրքրտամք քո  
 ստացար մեզ փառք .  
 Գարձեսո՞ւ Հարցի աթոռդ յաթուր մոխրաթա-  
 թաւ գարշապարաց .  
 Ո՞չ եւս ընդդէմ կայցէ քինուց՝ անյաղթելիդ ա-  
 ըիու թիւն ,  
 Ձոր հուր եւ սուր , երաշտ եւ սով եւ կընձու-  
 դէմըն մասնութիւն  
 Արհաւիրք եւ սխուժիւնք ոչ զօրէին կորզել ի  
 քէն .  
 Եւ այնքան հայ ու արշակունի եւ մամուռեան  
 քիրտն եւ արիւնք ,  
 Ձինուց դանձուց անդք անժըլտոք եւ հանա-  
 պալ մեռելութիւնք՝  
 Ձօղտածարաւ եւ զմեղկատէր ո՞չ բաւիցեն ամու-  
 քել սիրս . . .  
 Ո՛հ , բարձի թողի լըբին երախտամոքն այն  
 զՎյրարատ .  
 Այրարատ , ըզքեղ ըզմայրըդ պետութեանց եւ  
 աշխարհաց .  
 Եւ հարկ դրժոյի՛հ գարձեալ ըզքեղ մասնէ բը-  
 ոանց եւ գերութեանց .



Եւ գարձեալ կողպտեալ գունակ գունակ քո  
 զգտնութիւնք  
 Որք ի բարձունքս կանգնէին լեբանցդ ահեղք  
 քան ըզպարխալ •  
 Զէնն արբունի կորաբամակ, բարձք փարսզունց  
 ընդ արիմն եկեալ •  
 Արիութիւնն արհամարհեալ, խնատութիւն վը  
 տարանդի •  
 Եւ մահ ինքնին որ սխրանօք ճեմեր ի սահըս  
 բանակաց  
 Բզբիւրաւորսն ախելով զարդար վրիժուց տե  
 զլ տարախս,  
 Եւ զանկէլոց որդւոցդ՝ ի բեղ ուղղելով զհուս  
 կրն հայեցուած  
 Թաւաղքբոր մրցամաք ժրտել յօտար մարդէ  
 զհող հայրենի,  
 Բզբեղ ի հուակ ձայն կարգալով եւ նուաղելով  
 հանգոյն ջահից,  
 Մինչ կաթողին համհարդքն՝ յԱրեւ, գոչն,  
 հարանց եւ արբայի,  
 Եւ համօրէն հնչէին ձայնք Յաղթութիւնն եւ  
 հայրենիք •  
 Եւ մահ ինքնին՝ զուրկ ի կարմիր նշանաց եր  
 թայ՝ ո հին նընջեցեալս,  
 Թափել զկտաբարձս անխառունակ, թաղուցա  
 նել զգէմս ի շերմս : • • •  
 Ահա յետին ժամ գեշերոյ, յետին ժամ հայ ազա  
 տութեան • • •  
 Ահա՛ րչաւորքք գաղկահարք մերկանան տի  
 արտատուաթուրմ •

Ընդ հուակ կայծակըն կանթեղին անցանէ յոյս  
 Ալշակունեաց •  
 Ծուէն առ ծուէն ծածանին եռագունեան զրօ  
 շուց պատառք  
 Անկանկել յաշտարակաց մահարձանաց ու ա  
 պարանկից •  
 Լալով խուսեն արք յաղթութեանց, Մամգունք,  
 Պահլաւք, Ասպետք, Արծուէք,  
 Բզբեղ ըզքաղցր հայրենիս եւ գբեղ հընչեալ  
 քաղցր Այրարատ,  
 Բզբեղ մայր ազատութիւն, եւ հեռանան, լը  
 սեն, ծածկին,  
 Որպէս մըշակ յողղ անդոց զարօրն ունայն զհէտ  
 քարէլով  
 Բզբէնս արիս սընեալ ճարպով ազանց եւ յա  
 բենէ հինից հիւստոյ •  
 Զորոց խրախոյան եւ մարտակից ծածկէ զուրբ  
 խաչ՝ մեծն հայրապետ,  
 Ծածկէ Պարթևն հրաշալի զգէմս • այրխնա  
 բեմ Գրիգորի • • •  
 Լըսեն բարբառք արի արանց, վատ որերոյ ցը  
 ցին ախանջք : • • •  
 Ափ զերեսօք կոծին գաղաուկ առաքինի արամու  
 ճիք,  
 Անխոյնան սուրբ սրբակապանք, մոխիր կաթեն  
 դեղձան հողուրք •  
 Երխտասարդ ծածկէ վնարօտս աչագեղոց սիրու  
 ճույն  
 Ամաչելով ի ժանգաճար տես ծարաւեալ հարց  
 սուսերաց,

Թաքուցանէ զհուռ լայնալիճ՝ հաւուն յորոնց՝  
'դ որովք ծընաւ .

Որպէս մեղեալ վարսամահար բանդագողչէն մար-  
տիկք յանառաւ ,

Կամ յաղալեր նըստեալ դահուանդ լընադոյնս  
աչս ամէն յապուշ ,

Կամ զերէնց Թափառեալ հետ կամ ըզձրկանց  
յաղև Գեղամ ,

Ընդդէմ պէաց ու օդոց հրեղէնս շընչէն անձուկս  
սրտատոչոր ,

Յեղանակեալ յեղերս՝ զԳողթան վիպասանից  
յաղթերդութիւնս ,

Ընդ Բաբելոն ու Եփեսոսանայ նրկարելով զՄ-  
րարսս՝

Լացուցանէն զտարածութիւնըս տիրասեր տա-  
րերաց . . .

Երանի՛ արձագանդաց ողբոյն , երգչին եւ լըս-  
ղաց .

Բիւր երանի վայրոց՝ ուր սուրբ են հայրենիք  
եւ համարձակք : . . .

Այլ դուք ըստուերք սիրունք՝ ձաղեալք ի վարդա-  
մասն արշալըրոց ,

Դուք պատեցէք , ո՛հ , Թապուցէք յինէն զբամ  
բիւնըս լալակաթ .

Զի մի Վրովայր խաղաղապետն հայոց ի խոտվս  
արիականս՝

Յանարիս յայս խաղաղութեան ահեղս հարցէ  
խոտվս եւ մահուան : . . .

Դ Ս Ս Ս Ս Ս Ս Ն

Վ Ա Ս Ա Կ Ա Յ Մ Ա Տ Ն Չ Ի

Ա.

Ի բարձրաձենն հասեալ զէտ՝ ակն արեւուն  
Թօթափէր շանթս ի կապարձիցն Թափանց  
Ընդ ճանապարհս Ապար երկրի ազալուն ,  
Եւացուցեալ զայն օդոյն մրկանանց .

Ի սօթագին հրատէն յուղել շանթահար  
Ճղլիր զէանոց անապատին Թափառկոտ  
Ի ստորերկրեայն ձեպեր ի մութըն դադար .  
Սոյք անհամբոյրք հերձանէին միայն զօգ .

Հազիւ ծիծոանց վայրի՝ զուղչէն իւր կարկամ  
Չօնէր թուփ ցախ իբրեւ արձան յաւերակ ,  
Յորոյ ի ստուերս՝ առ մշտերմին՝ բարեկամ  
Ոչ վայելեաց երբեք նըստեալ միայնակ .

Ոչ հընչեցին անդ երբեք քաղցր կարկառք ,  
Անդ ոչ զեփիւռ գով եւ զըւարձ էած թեւ ,  
Ոչ անդ ծաղկանց ծաւիք ի վեր բացան աչք  
Եւ ժբպտեցաւ ոչ արշալոյս վարդարեւ : . .

Այլ ի հեռուս դեղնեալ փոշի վեր ի վայր՝  
Ըզգրաստանին սայ նըշմարեղ բեւանակիր ,  
Որք ճօճաւոր գրլետովք յանջուրն առապար  
Ընդ վարողացն զիտէնն էտնջք զերկիր .

Երբեւ կոճեղք ծրփեալք ի ծով լայնանխա  
 Աստանդականք երթային այսր անդր ըստ կամս,  
 Կամ թէ խորհուրդք անկերպարանք որ ընդ միտ  
 Տարուբերին սաղապաճեմք յունայն ժամս :  
 Եւ որպէս բուռն յանկարծածին նոր խորհուրդ  
 Զի զօրացեալ տիրէ մտաց իսկ ուղջոյն՝  
 Այնպէս յանկարծ փրքփրբերախ ձաղկ ի կուշտ  
 Կըժոյգ մ'անտուտ սրավար ծափս զգաշտն ան  
 հուն •

Չենն հեծելոյն յեյ յանդրուվարն իւր հուժկու  
 Եւ աչք հազիւ ընդ ճանապարհին կան պիւ •  
 Յայլ ասպարէզ խառնեալ մրտացոն օգաչու  
 Ճախր ի խորհուրդս առնու յաղօտ բուսանիւ •

Բզմբբբկավար կարծէ զնըժոյգն ի չղլթայս ,  
 Այնպէս սաստիկ ու անզուսպ զսիրտ տենչ ունի •  
 Մինչ հասարակ աւուրըն տապ յակամացս  
 Եւ դժնըկին ուղղէ զնա թիւր հովանի •

Գամ մի շեղեալ զերիվարին քամէ դբաշ  
 Որով երբեմն ի յաղթուծեանց ելեալ որս՝  
 Մինչդեռ ընդ վանդս եղբերց՝ փոքունմանց խառ  
 ներ վաշ  
 Զվահագն ի դաշտ յարուցանէր ահաւորս •

Եւ զոսկեկուռ լուծեալ պրտակ ճակատուն  
 Գարգանանակաւ հրակէզ զիմացն հով ածէր ,  
 Մերթ ի հատեան յառեալ ընթացս ի թիկունս  
 Եւ մերթ յուղին՝ զոր հաստանել մշնայր դեռ :  
 Յականակապ միջաց կամար դատախ յեյ

Յուզմանց ի յոյզ անդ ընթանայր մըտախորհ :  
 Եամք սահէին , շողն իջններ տապալեոց ,  
 Յանըզ դատախց նա զլէր ի հոգաահաւոր : ...

« Ո՛հ , ո՛չ թողից , գոչեայ • սարսեայ անապան •  
 Ո՛հ • ցորձափ ես Վասակ՝ Միշնեայ կցեմ՝ տեր ,  
 Մի՛ թագակապ այլ որ նազէ յԱյրաբաս ,  
 Երգուեալ յարեւ , երգուեալ յերկիր եւ յեթեր •  
 Հանգա , պալցիբ սեւակ իմ , տար զիս ի փառս ,  
 Ի դուռն Արեաց երթեալ՝ գրացուք զըր կորոյս  
 Վատաբաղդիկ Արշակունին ի Կըւտա •  
 Հանգա , մինչեւ առեալ ըզգաշտն երեկոյս » : . .

Եւ աչք հարեալք ի հրաբորբք եռանդան  
 Ոչ քան ըլլծագն ինչ մրտաց անդր զիտեր •  
 Ու այն ինչ հանդուռն ի ձեռն առեալ զերասան՝  
 Վարէր ըլլեաւն , եւ անապան ըսպառէր :

Ի

Իսկ այս ուստի յանկարծ ձայնիկս յամուռջ ,  
 Խաղաղական երգոց մըրմունջբբա գողցոյ •  
 Մի՛թէ հրեշտակ առ հրեշտակ յօղև կարգայ ,  
 Եթէ գարուն ինչ հասեալ գայ՝ Բարագայ :

Ո՛հ , այս իմոց քաղցր հայրենեայ են բարբառք ,  
 Զոր երկնախօսք հընչն հոգւոյս իմոց հարք •  
 Զայն է հովուաց՝ զոյց քակեաց հէն ըզփարախ  
 Զամբիժ գառինս մատնեալ գայլոց ի յերախ ,

Եւ վայրատեալ զոմն ի ձոր , զոմն ի հովտ  
 Յօշ անդամք ծածկեաց ըզմարդն հօտախիս •  
 Ոչ եւս լրսի անմեղ խաշանցն բառանջ՝  
 Որում կամարն երկնից կրկնէր քաղցրուաչ •  
 Հանգրուանաց պահակ մանկափ զենակիր  
 Կայ նդ հովանեօք Ասարայրի սրբութեալ ցիր ,

Եւ շունչքն իջեալ ընդ այգաճնմբն ղեփիւս  
 Յիւրեանց մբնէն ճապարկս քաղցր եւ արխուր·  
 Եւ սփռելով վարդ ընդ ցօղէջսն զըրտին  
 Յառին զըւարթք, յուղէն զարտօսր եւ լծուցին··  
 Կապտեալ հովուացն իմ ի ցըրտը ու ի սրբեղէ  
 Յանաղորոյն եւ սեւաղեմ փաղանդէ՛  
 Խոշտանգանաց մասնեալ զանձինս փարեղիս  
 Ո՛հ, ըտորրիաց հանգոյն վարին յամայիս·  
 Վայրավատին զհետ սակաւուց ոչխարաց  
 Կողեղելով ղիմեալք ակօքն հողամած :  
 « Չեղ լուսակիցն ոչխարք դաւթիս , սիրունք մեր ,  
 Չեղ զոր ի գիրկ սնուցար ու ի ծոց վըշտմբեր ,  
 Դամբ անբաժանք բուժել ըղբանըդ պատուք ,  
 Տալ ի յարբումն յետին զաչացս արտասուք·  
 Տալ սիրելեացդ հօգւոյ սիրոյն ըղձամբոյր ,  
 Անձեռնհասք առ այլ չըրթամքս այս մարուր·  
 Զ ի սր մեղ յայտմ հետէ իցէ այլ հանդիստ ,  
 Բայց վատնելոցդ ըզհաս վատնիլ անհրկմիս » :  
 Ո՛վ սըրտատուչ ձայնք հայրենեանս · եւ սոյս ձեղ  
 Սուրբ տաճարաց փոխան՝ մընայր ասպարեղ·  
 Եւ հայաստան ի ձեղ եղեալ զաչս համակ՝  
 Արդ եւ վիրացն չունիցի՞ ղեղ կամակ····  
 Ո՛հ , որ զաշխարհդ երբեմն ի հուր վատեցեք  
 Արդեօք ըզբա՛ որ լծափառեալ չըջիդ հէդ  
 Դարձուցանե՞ք ի հօտն անմեղ զոր ելիք ,  
 Եւ հայրենեացն եւ սեւան ի սեր մտացիկ :

Գ.

Իսկ նա ձայնիցն ի լուր ընդ կրունկն դարձեալ  
 Մինչդեռ նըժոյգն յօսս արկանէր սուր սըմբակ ,  
 Յառաքինեացս սըջնու ի դէմն լուսափայլ  
 Յանկարծահաս կարծէ գուարթնոց ինչ բանակ·  
 Երա՞ղ, ըստոյ՞ք··· աչք իւր պաղն սանտրակ·  
 Յամայբն քիմբ եւ ղեճմանի սանձ յաջն·  
 Իբրեւ կոհակ կոծեալ հօղմովք հակառակ  
 Մերթ փըջեր մերթ ղիզաներ յանձն իւր ողջոյն·  
 « Ո՛ որք ի մտհ ղիմեալք , ընդ միտս ասէր , դուք ,  
 Անշուշտ կենաց ակնկալեօք պարարիք , (նուք ,  
 Զ ի՞նչ ինձ պատգամս յերկնից՝ զոր յար ընթեռ·  
 Ա՛հ , ղի՞նչ պատգամ արդեօք վասն իմ ունիցիք » :  
 Տանջէլ իսըջիւ , սիրտ լ լծունդ չուրթն ի յերեր·  
 Կեղծատրել հազիւ բաւէր եղիւղն ,  
 Եւ այլ ընդ այլ բան փոփոխեալ ըսփոփէր ,  
 Ոչ յիշելով լծէ որպիսիք հուս կայն·  
 Մերթ ցածնոր մերթ ուռնոյր յողի խեղայեղ·  
 Աշտանակէր ի սեւան անխանջ լընթացից ,  
 Իբրեւ փըքին ի նըպատակն իւր անշեղ  
 Դարձեալ վարդէլ աւնոյր յուղն հըճուալից :-  
 Այլ յով մուկանդ յաճուր վարես ըղնթոյգ·  
 Դատաստանք կան հասեալ գըխոյ քում Վասակ·  
 Դեւոնդեալ դքեղ կարգան չըրթունք հըրազար·  
 Արձանացիւր , լուր ըզլըճիւղ արդարակ :  
 Յայնժամ վառեալ դեմբ ծերունուոյն հուր ի հուր  
 Եւ ղձիւնափայլն գագաթամբ հերք ղիլան ,

Հանձնի զաջօր եւ փայլաժուճք ի յոնս իւր .  
 Եւ շուրջ սրտեալ յաստուածային հեղուծեանս .  
 Իբր ոստիկան մահուան անվերջ անոցառ  
 Յառաջ անցեալ դաստ երկնագոր կարկառէր .  
 Եւ ըզհրացայտ լուծեալ շըրթանցն կամար՝  
 Հարցուած առնէր . « Ընդ որ փութեամս , Սիւ-  
 նեաց աէր » : —

Որոտաց ձայնն յանապատին՝ « յո՞վ փութեամս » ,  
 Իբրեւ յԱզին հարցուալն Տեառն առ Ազամ .  
 Եւ սրահուցեալ ըզնոյն կրկնէր սիրտ ըզձայնս ,  
 Խիղճ՝ ահնեկէց բըռնանայր դամբան ըզգամ .  
 Այլ փառամուլ ոգի անզեղ է ի սպառս .  
 Ճըգնի փապրուս վառել ըզցուարուն բերանս .  
 « Փութեամ՝ առ աէրն Արեաց , ըզթագ վեհա-  
 փառ

Անուռ զհայոց , այնքան քըրտանց իմ փա-  
 խանս » :

— « Առ աէր Արեաց փութեամս մասնիչ Տեառնըդ  
 բուսմ ,

Որոտաց ծերն . Երթ ուր արժանն տանի .  
 Այլ որ հայել ի շխեցեր սիրտ ապառուսմ  
 Յարկեանազանգ աղին քո տանն հայրենի ,  
 Դու որ զլեախին շիջուցեր կայծն յԱյրարատ ,  
 Որով աջօր յայամհեռէ նոգ թագն հայկեցիս .  
 Լուսեւրափակգ այնքան ողբոց տարապարտ  
 Լուիցես զԴոպլեան քոց գուսանաց թուրեղիս :

Անդխտացար . անդխտացիս մինչ ի սպառս .  
 Թէ բաղդ քոյն յերկնս ի վեր մըլթեցաւ .  
 Զոր թողեր՝ թող նա զբեղ , անկէ՞ք ըզբեւ առ ,  
 Հաս ժամանակ , հաս դատ , վըճիւս քո հաստա :

Աւաղելնդ վասակ յաւերժ արատուաց ,

Ո՛չ տեսանես զն շորհք ի քէն վերացան .  
 Վարսք քո կաթնն ըզմոխիր պիղծըդ բազմաց ,  
 Թագք զոր Տըրդատ եգաւ՝ շանթիս քեզ սեղանս .

Ո՛չ տեսանես շուրջ ըզբեւ զայդքան բանակ  
 Որ ուխտ ի սիրտ յԱւարայրի մարմնագից  
 Վ երելս յերկնս առնեն հըրձուեալք ի սլասակ ,  
 Խոժոռ աջօր ի քեզ յառեալ սպառնալից .

Ո՛չ լըսես զայդքան ազաղակ ձայնս ի վեր  
 Արեան ցոյտիւք կըրկնեալ բողբ առ բողբ .  
 Վ րէ՛ժք քեզ յերկնէ , վրէ՛ժք քեզ յուխտէն զոր  
 Թողեր ,

Վ րէ՛ժք յանուղաց , վրէ՛ժք հայրենեաց անտղբ .  
 Վ րէ՛ժ քեզ կարգան ամոյսացեալ գերգաստանք  
 Պարկեշա կուսանք , հարսունք , փեսայք , որբք  
 պրիք ,

Վ րէ՛ժ քեզ կարգան ազատանին լեռնականք ,  
 Վ րէ՛ժ արխրամսձ անարօր դաշտք հայրենիք . .

Ո՛հ , ահաւորաւ տեսարան , գէպք խըրթնի ,  
 Տուրք Աստուծոյ՝ նոգ յաւիտենից աւերակս  
 Մոգուց մատամբ ցըրուեալք յերեսս զեանի  
 Եւ Գրիգորի անաշխարհիկ լեալ որդեակքս ,

Ո՛չ կարդացեն ի սպառ քեզ վրէ՛ժ՝ հէ՛ք Վասակ . .  
 Ե՛րթ արգ . բայց զայս թէ ճանապարհ անացես  
 սյլ .

Եթէ շորհն Արիք ըզգլուխդ՝ թող թէ զթագ ,  
 Ապա չեցէ Տեառն ընդ իս բան խօսեցեալ » :

Եւ իբր ըզծով անգլուսալ եւ յետ եւրոտաց  
 Մեծ մըրմըռամբ ի բաց դատնայր երեցն այն .  
 Եւ ի դատնալն հասանէին շանթք յաջաց

Եւ լըռութիւն ահեղ տիրէր ընդ երկայն :  
 Իսկ դատաստարանն քան ըզիտիւ ի յերէր  
 Յերիտարին նիւս կործանէր անջըռունջ .  
 Եւ ի սահուն՝ թաթ զըւարթնոց խոնարհէր  
 Գրբէլ ի ակրտ նորին վըճիւս սեաւ անջունջ :  
 Ո՛հ ի խորոց իւրոց թընդաց հոգին զուր .  
 Ձայն իւր ժըպիրճ ձըգեաց յարեւ Բարձրելոյն .  
 Եւ յուսաստա թափով մըղեալ ըզՍեաւն իւր  
 Անհետացաւ յարջնաթոյր ծոց դէշերոյն :

Գ

Ո՛հ . ամուարիշաք , աչք բարձրելոյն ոչ նընջեն .  
 Եւ հաղար ամ արգարութիւն թէ լըռէ ,  
 Ձանդարձ վըճիւն՝ յոր հաստատին բաղդբ ա-  
 մէն՝  
 Հրապարտեկէ մասացուաց ոչ յամեացէ .  
 Մի բերկրաւէտ յաջողութեամբոյ յորանայր ,  
 Կեանք ձեր անկիշաք՝ զանխուլ դարանք , օձք  
 անյայտք ,  
 Խաբէկան մըտացդ են զաղփողփուռն սրատը-  
 ւակք .  
 Ոչ վըրտեացէ մէտ ի կըշուցն իսկադան :  
 Սրարչաւ կառացն անիւ հատուլ բիւր սահման՝  
 Առ դիտակին յաճախ գործէ խորտակմունս .  
 Մարդք ծաղկերանոք՝ կորուստ վըհնոց մերկա-  
 նան ,  
 Յոյս մահացուաց ցընդի շողեաց ինչ հանդոյն :  
 Եկնդաւորի չըյաջողեաց յաւխտան .  
 Ոչ վայելէ դաւող ի դաւն անկասկած :

Չըկան երկինք խուլ զըրկելոյն առ ի ձայն ,  
 հող ոչ ծրծէ զարիւն , զարտօսք անմեղաց : . . .  
 Յի՛նչ դու պանծաս յուսացեալ հէզըզ Վասակ ,  
 Ձկնէն քո առ մարդ կամ զի՛նչ առ վեհնն բնաւին  
 Ակրնկալեաց իցեն եւ խուռն մի վաստակք  
 Ձգր ոչ եղծէր վաղ մասնութեամբբըզ կըրկին :  
 Յոյս ի Վասակ . ո՛հ , այն մեռաւ ի սըրբին :  
 Մնտաիք տիրեալ զամ մի մըտաց սընտեսաց՝  
 Կոչեալ ի Գուռն , որում ցանկայր , յարբունին ,  
 Վեւ անուռնակ՝ զոր ունիսն արդ վայելել :

ՀՈՎԻԻՔ ՇԻՐԱԿԱՅ

\* Ուր Հայք եւ Վիրք մարտեան ընդ Սկիւթացիս ի սկիզբն Ժ.Գ. դարու :

Կենցաղ հոյնաց եւ քաղաքայնոց .

Են զուարթաւոյս եւ ջերմասիւզ աւուրք նաւասարդի ամեանս . եւ արեգական դեռ եւս անցեալ զօթեւանօք հասարակ աւուր՝ ի լայնափիւռ հովանիս թաւոստեան սօսեացն եւ կազմախեաց հրաւիրանօք իմն կոչէր զուարածիցն դաս : Տեղի տուեալ այնուհետեւ ի կաթնաբուխ մարմանդիցն , եւ վարեալ զխաչինս մանկունք հովուացն հայոց , որք արածէին զհօտս իւրեանց ի թանձրախիտ սիզի պարարտարօտ հովտացն Վանանդայ եւ Շիւրակայ , երթեալ տարածանէին զանձինս ընդ սազարթուն վարադուրօք անտառակին , ուր տօթ եւ խոնջութիւն հանդերձեալ կազմեալ էին նոցա ապաստան հանդատաւէա : Ամենեցուն մտացեալ անդանօր զմտացն տաղաուկս , եւ ըստ տակաւ ծաւալել անդորրութեանն եւ ըստ պարզել անդամոցն յանշարժ դադարման՝ յուշիկ լռիկ յածեցուցանէին զաչս իւրեանց ի վերայ հօտիցն մակաղելոց սա ոտիւք իւրեանց , եւ ի վերայ համօրէն շինական տես

լարանին : Բըջին եւ սելչ որոճայնոցն տակաւ նուարեալ լէք, եւ ընդ հուպ հանդարտութիւն տիրէր գլխովին եւ հովտին եւ արօտականացն եւ արածողաց . եւ յերէրս անդ վարսաւոր աստոց մերձ ընդ մերձ աստանելոց ի խաղ թեւոց սաւառ նաճայն հողմոց , հաղ ընդ հաղ լսելն լինէին վան գիւնը կրկջաճայն սարեկաց , եւ ուստը ուստը ճուռողեւն ճինճըղկանց . առուակն եւեթ սկանա կիտ՝ ապաժոյժ վիժակ գետոյն մեծի Երասխայ , որ յեղեմական բարձանց Բասենոյ գարիւ եւ դա ըիւ իջանէ եւ վազս առնու ընդ հազար հովիտս Այրարատայ , կարկաջէր յերկնանման ծոցս մար մանդիցն , եւ համբոյր ծաղկանց մատուցեալ իսկ եւ իսկ սողակէր թագէք ի շամբս մթագինս , եւ իսկ եւ իսկ արտաքս հորգեալ ճանապարհ՝ նոյն դունակ ծաւալանայր ի ծաղկաճեմ ամուսնս :

Ի համօրէն հանդարտութեան անդ յանդգաստից իմն եւ իբրեւ հեղապար սահեալ անցանէին ժամք բացօթեայք , ժամք անսպառք եւ խողաղականք , ժամք զորոց ոչ եւս որ զբայր զօրութիւն տեւա դական . այլ միայն ըլնութիւն եւ աշխոյժք յետ թմբրութեանն հասեալք ի վերայ հովուաց , եւ ստուերաց առ ի շեղ տարածմունք՝ անձայն վկայք լինէին ընթացից ժամանակին : Եւ այն ինչ կիսոց յագեալ , այլոք բաղորանայր տակաւին յերկարս ձգել զանուշարարն թմբիր ընդ անկասկած հովա նեզն , եւ զուարթագինս սպա տեսանէին զգէմս բնութեան յաղուական լոյս տուրնջնական լաղ տերին , Բարիկ մանկազոյն յորդիս Հարմակայ , սրբեալ զուսալիր աչկունսն զօրս փակեալ էր ի

քուն քաղցրութեան ի վերայ հօրն լանջայ , եւ սահ մի սլուցեալ ընդ բնասս եւ ասէ . « Ո՛վ , քանի՛ խաղաղական են , հայրիկ , վայրքս այս եւ տեսարանք . քանի՛ ցանկալի է կենցաղս մեր : Ահա արեգակն պայծառ , ընդ որ հայեցեալ զուարճանամ յոյժ , եւ չգիտեմ ընդէր . ահա մարմանդքս դաւարք յոր կայտուեմ ընդ դասանց զորս ետուր ինձ . ահա վտակն այն ուր լուսնամ զձեռս եւ դերեսս իմ եւ զգլաթ սովխակափայլ գառանցն , եւ ահա ամե նայն հօրքս եւ հովիւք մեր զբացիք , եւ ծառք անդամ զմեզ հովանացեալք , եւ թռչնիկք ի վերուստ ճախր առեալ երգողք եւ մանր սարուք , թռչն ինձ , հայր , բաւական մեզ ի վայելս կենաց : Չեն ինձ սլեք բարեկեցիկ անուանեալ կենաց քաղաքացեաց զոր յանցաւորաց հովախս լսեմ՝ եւ ոչ բնաւ սիրեալ է իմ զայնպիսի վայր , ուր որպէս լսեմ՝ քար ի վերայ քարի ամբարձեալ տունս շինեն մեծա մեծս . եւ փողոյք եւ վաճառանոցք աւելորդ իրաց զբուեն զամենայն զոեղին՝ յորում անկ էր հովուաց եւ հօտից միայն դազարել : Այլ առաւել ստեամ ես եւ խորիմ դարձիմ յարանցն յայնցանէ զօրս ոչ եւս մարդիկս՝ այլ մարտիկս կոչեն . զօրոց եւ մայր իմ պատմէր մեղ յեռանդն , զի արք ահարկուք են նոքս եւ գործին սարանման ունին հանապաղակիրս , եւ երթեալ խողիւղեն զօտարս որպէս անգութքն ի հովուաց զանմեղ գառնեակս : Եւ ընդէր , ո՛վ հայր , ոչ ամենեքին իբրեւ զմեզ հովիւք իցեն . զգիտցեն արգեօք զի երջանիկք եմք մեր : Այլ ես աղաչեմ , հայր , մի ասնիր զիս եւ վեղբարս իմ՝ եւ քաղաք . լաւ է մեզ բնակել աստանոք եւ վայելել յանդոր .

բուճակ վայելա բնութեան՝ զոր ի քէն ուսեալ արդ սխախիմք ճանաչել զի քաղցր է յոյժ ։

Ճարեալ Հարմաւկայ ընդ անկեղծ բանս որդեկին իւրոյ համբուրեաց զնա եւ ասէ . « Այո, որդեակ, քաղցր են հովուացս կեանք, եւ հարազատագոյն է սա կենցաղ նախնեացն մերոյ հարց . Նորհք Ան մասին, որ զոյն մեզ վիճակեցոյց ։ Այլ զքաղաքացեացն կենցաղ քաւ քեզ որդեակ՝ արհամարհ գրբել . զի թէպէս եւ ոչ որպէս զմերս իցէ քաղցր, սակայն եւ ոչ ինչ նուազ վայելուչ է ի շահ եւ յօգուտ, ի փառս եւ ի սահայանութիւն մեծի աշխարհիս եւ վսեմական պետութեանս հայկազ նեայց ։ Քանզի քաղաքացիքդ այդքիկ շինութեան աշխարհիս ստոճառք են, եւ զամենայն ժողովրդեան զպէսս նոքա անտեսեն . նոքա են որ դործեն զերկաթ եւ զազկինձ, եւ զաւելորդսն առ մեզ զտակի եւ զարծալժ . եւ փոխեն յողոս պիտանիս եւ յանձն, յորոց եւ մէջ երբեմն ամուսմք ի կահս մերոց հանդրուանաց ։ Կոքա դործեն ազգս ազգս ազաներեաց եւ հանդերձից ըստ ամենայն չափու հասակի եւ ըստ ամենայն աշտիճանի . որպէս զի յորժամ քաղաքաժողով մարդկան բազմութիւն ի մի վայր գայցէ, որպէս զՏովիտս զայս դունակ գուճակ ծաղկենկար կերպարանօք երեւելի լինիցի ։ Կոքա եւ զարքային մերոյ զարդս վայելուչս յարդարեն, եւ կանայք նոցի փոխանակ ասու զնորաթիւ թեւ եւ զբաղանգունի տարազ սնորհանին . որովք յորժամ զգեստաւորեալ նազկից թագաւորն մեր, սերճագոյն երեւի քան զտառջնորդ հորանացդ զոր դուն պատկազարդ պճնես, եւ քան զխօսնակ ի

հոյս մարեաց ։ Յիշեմ ես տակաւին զօրն՝ յորում ոչ ինչ առաւել դուրժ իմ տիօք քան զերեց եղբայրն քո, երթեալ էի ընդ հօրն իմում՝ ի նաւակատիս զոր արար հայր այժմու թագաւորին քաջն Վան ի սկզբան թագաւորութեան իւրոյ, յորժամ աւարտեալ էր զնորոգումն մեծամուր քաղաքին, զոր յառաջնանս տան Շամիրամայ զշխոյր կառուցեալ ։ Կայր նա համակ զարդարեալ շքեղաշուք յօրինուածովք ի բարձու դղեկին եւ այնպէս յաւուրութիւն եւ ի հիացումն կրթեալ էին աչք իմ եւ մտք իմ, մինչեւ չկարել ակն կառուցանել ի սույժատութիւն նորա, որպէս չկարես գու յարեալ յայս հայել ։ Ամուսաց է լինեն եւ բանն զոր յայն ժամ ասաց, յորժամ տիրասեր ժողովրդեանն սկրագեալ անխախտ ինքեւ թեմամք ընդ փառս բարոյ թագաւորին՝ գոչէր մեծածայն . Կեցցէ թագաւոր մեր զամս հայկայ եւ զաւուրս Արայի, եւ լցցի զութեամբն Տիգրանաց . եւ ասեր . Տայց ինձ երկնաբնակն տեր վայելել ընդ երկայն աւուրս ի սեր այսախուսոյ ժողովրդեան, որ փառս եւ պարծանս անձին համարի զոր իւրում տեսան հատուցանէ . եւ յաւելցէ ինձ հայր լինի նմին արժանաւոր ։ Այլ զքաղաքացեացդ էին բանք մեր . ո՛չ ապաքէն նոքա իցեն որդեակ իմ, որ արուեստիւք եւ ձեռագործովք եւ երթեւեկութեամբ վաճառականաց զանուն եւ զփառս եւ զճարտարութիւն ազգիս մերոյ հատուցանեն յազգս հեռաւորս . ո՛չ ապաքէն եւ մեք ինքնին զարգիւնս հօտից մերոյ նոցա վաճառելիք, եւ ի նոցանէ ասնումք զկարեւոր կենաց մերոյ զպէսս ։



— Ելէ այդ այգուէս, ասէ դարձեալ Բարբիկ․ այլ զի բնաւ պիտոյ իցեն մարգախոջոջ զինուորքն այնորիկ :

— Եւ նոքա, որդեակ, եւ նոքա ամենեւին պիտանիք են աշխարհին բարեկեցութեանս. եւ ոչ որպէս դուդ կարծես՝ սպանման արբանեակք, այլ խաղաղութեան են տածիչք : Օրինակաւ իմն բերցուցիք քեզ․ տեսանէս զՏօսս զայստիկ․ ահա այգուպիք եմք եւ մեր եւ ամենայն ժողովուրդն․ եւ որպէս հովիւքս զի առաջնորդեմք նոցա, նոյնպէս եւ իշխանք ազգիս յերաջանչիւր դաւառս եւ ի վեճակս․ եւ որպէս հովուապետն մեր ի վերայ հովուացս, այսպէս եւ թագաւորն ի վերայ ամենայն աշխարհիս․ բայց տես ինձ, զի ամենեքին մեր զներքին հոգամք զՏօսիս, ոչ գորով բաւականք եւ արտաքնոցն միտ զնել եւ առ թշնամեաց յարձակումն․ վասն որոյ սովորեցաք շունս ունել պահապանս, որ ընդ մեզ հեղուութեամբ կան, որպէս ընչապտուկդ այդ որ քծնի գքեւ․ այլ բառ պահանջել գիպագի կուտուրք եւ մարտիկք ընին, զի զյանձնեայն ի նոսա զՏօս անարատ պահեսցեն յերեսաց գայլոց եւ առիւծուց : Այդպիսի է եւ զինուորացդ ազգ․ ի խաղաղութեան ժամանակի համբոյրք եւ հաշտք, այլ յորժամ մարդիկ չարք կամ ստամբակեալ որ ուրեք եթէ յօտարաց եւ եթէ յընտանեաց ի վեր երեսեալ կամիցին խառնել զՏօս մարդկութեանս, յայնժամ զէն անուռն նոքա եւ ի մարտ պատերազմի դիմեն․ եւ ի զկամել խառնեացն ընդ հնազանդութեամբ եւ ընդ օրինք մտանել, մահու դասին զնոսա․ զի ամբարշտաց անլուրից խառնարտաց

յամանելոց ոչ գոյ պլաղդ հնարս ուղղութեան գտանել․ որպէս եւ շունքդ անուն գայլոց յաւակնելոց : Եթէ գորս չէին, որդեակ, աշխարհս այս մեր մեծ եւ զեղեցիկ՝ կոխան սոխից ընալ էր խաժաղուժ ազանցն որ շուրջ գմեօք բնակին․ եւ եթէ ոչ գորք ընդ թշնամին մարտ յարդարէին առաջնիքն մեր առաքելի նահատակք, որպիսի որ Հայկն էր, որպիսի որ Արամ, որպիսի որ Պարսոյր եւ Տիգրան եւ Վահագն, այլովքն հանդերձ, ո՛հ, այժմ ոչ աշխարհս յանուռն եւ ի դառս իւր պանծայր, եւ ոչ մեր խաղաղութեամբս այսու կեանս վարեալք : Տեսանէս արդ, սիրեցեալդ իմ Բարբիկ, զի ոչ միայն աւելորդ եւ ումուկա մարդիկ չեն նոքա, այլ եւ աշխարհիս շինութեան հսկողք եւ պահապանք, եւ մեզ գլխովին օգնականք․ զի ոչ հօտ առանց հովուի կայ, եւ ոչ սոքա երկրքին առանց պահպանութեան :

— Ահա արդ խելամուտ ընեմ զի ճամբարիւնոյ այգուէս է որպէս ասացելդ, հայր․ եւ ես այստե՛հեաւ սիրեցից զկենցաղս մեր որպէս եւ յառաջ, եւ զայլն եւս պատուեցից : Ա՛լ, քանիպատիկ իրք են կարեւորք զորս անգիտանամ ես տակաւին․ այլ դու հայր, քանզի սիրես զիս եւ զեղբարս իմ եւ զքնկերքս որք ահա յունկնդրութիւն ժողովեալ կան այսր, ուսուցես մեզ ի ժամս պարսոյր, որպէս զի մի ինչ ի կարեւորացն գիտութենէ վերիպեցի ի մէնջ, եւ ընցուք որպէս դու աւելիւր յայլում նուազի, թէ ոչ երախտաւորք՝ գոնեայ երախտադէտ որքիք մերոյ պանծայր հայրենեաց » :

Այսպիսիք էին զտուգաբանութիւնք հովուացն Շիրակայ, մինչդեռ արեգակն ի մուտս խոնարհեալ լինէր, եւ ստուերք լերանց երկարէին, եւ ձայնք երեկորինք հնչէին ի հովտին: Եւ ի դառնալ մանկանցն ի վանս՝ Բաբելի յեղեղէր տանկաւն զբանս հօրն իւրոյ, եթէ Աջ հօտ անհովիւ, եւ ոչ հովիւ անհօտ, եւ ոչ երկողին սորա անսպասաւնք երբէք:

Բ

Էսկե երկիկնք ձայնի առարկիկի մակերանց .

Մեկուսի յընկերակցացն ի զառ ի վեր փոքու բլրակին ոչ ինչ կարի ի բացեայ յերումէ խրճճէն՝ նստեր վարանտկան հովիւն Մեհենդակ, եւ խաչինք նորա լսիկ շուրջ գային զնովաւ: Սիրա իւր անդու ի հիւշ անդք ձգտէր՝ ուստի էին զայն օր յոչ կամաց, եւ առ ի պէտս եւեթ հօտին. եւ աչք իւր խորէին իմն դառնալ ընդ այն կողմն հայել. հատանէր անցանէր լոճիւքն ընդ անձուկ հովիտն որ անջրբարեալք ընդ հիւսն եւ ընդ բլուրն, եւ յահէն ընկրկեալ մնայր. զի հիւանդագին եթող յանկողնի զՋարմուհի զամուսինն իւր. « Եւ տակաւն, ասէր ի արամութեան իւրում, տակաւն ոչ դք ի մանկուոյն երեւեցաւ. գուցէ դարձեալ զայրացան խիճք անհնարին ցաւոց Ջարմուհեայ, եւ չկամիցին որդիքն քեցիլ ի ցանկալի մօրէն. գուցէ եւ ինքնին առ գուծ ինչ չկամիցն արամեցուցանել զես, եւ վասն այնորիկ չարձակիցէ զմանկուանս . . . Ահա ոչ բազում ժամք են յորմէ հետէ թողի զմայրն եւ զորդիս ի լաց ի միասին, եւ թուիմ յաւուրց բազմաց անջատեալ հեռացեալ ի նոցանէ . . . Յարուցեալ երթայց տեսից զողջն նորա . . . այլ ում թողից զհօտն, զի ոչ դք է աստ յընկերաց իմոց. եւ ընդ իս տանել զհարգ լինիցի .

զի Խնքնին Չարմուհի թախանձեաց զիս եւ ասէ-  
 Երթ դու Մեհենդակի իմ, արածէլ զխաղնան, եւ  
 մի դարձցիս այսր մինչեւ յիշանել ստուերաց. եւ  
 որ բնակէն յերկինս տեսցէ վասն իմ. բայց եթէ  
 կոչ առ յինէն հասցէ քեզ... Մտացան արդեօք  
 մանկունքն զպատուէրն զոր հառն նոցա գաղա ծա-  
 նուցանել ինձ :... Այլ զինչ որ շարժիդ անդա-  
 նօր ի հեռաստանս. միթէ նորա՞, որդեակքն իմ...  
 բայց ոչ, ստուերք են ծառաստանին... Անուաչ  
 Աստուած, եթէ երբէք հաճոյ եղն քեզ նուերք  
 անգրանկաց օգեացս զոր մատուցանէի քեզ, եթէ  
 անոքեցին զունկն քո համբերատար հեծութիւնք  
 Չարմուհեայ, ե քաղցր մաղթանք որդեկաց իմոց,  
 պահեա զնա աղաչեմ կենդանի մինչեւ իցեմ ես.  
 պահեա մասաղ որդեկաց իմոց զմայրն իւրեանց  
 բարի... պահեա Աստուած, զօրհուժթիւն ասն  
 իմոց, զտաքնին զաղախին քո »... »

Եւ ծածկեալ զերեսս իւր ուղեհեաւն ելաց ըս-  
 լին մեծ. եւ իրբեւ անազան ուրնն զաչն յետին  
 ցօղով արաստուալ ի վեր յերկինս ուղղեր, ահա  
 հաւես, եւ ոչ եւս պատիրք աչաց, ոչ եւս ստուերք  
 ծառոց, այլ զուարթունք միսթարք ամացութեան  
 իւրոյ, Հարմիկ եւ Մամիկ սիրելիք, կայտառ ման-  
 կունք դեռատիք, որոց ձեռն ի ձեռն տուեալ, եւ  
 ի մեծէ ուստէք ի կրից երազեալ, որպէս էր կար-  
 ծել, զանբաւականս յայնքան ընթացս զմափուկ  
 գարշատարան, զթուրս գիսակս յուսան ծեծելով,  
 եւ զյիր բազմութիւն համասարամ ծաղկանց սո-  
 րան կոխելով, մերթ անկեալք զլորեալք եւ մերթ  
 յարուցեալք եւ կանդնեալք, մերթ ծածկեալք ի

պարարտարօտ մարգան եւ մերթ ի վեր երեւեալք,  
 եւ անցեալք նախ ընդ խորն եւ ապա ընդ զառ ի  
 վեր հովանի, եւ ընդ բովանդակ կարմրորակ դէմն  
 եւ ընդ հորանի ընդնն վիժակս ջերմն քրտանց հս-  
 սեցուցեալ, թասելով եւ կայթեւով ելին հասին  
 արկին զանձինս ի գիրկս հօրն իւրեանց, եւ « Հայ-  
 բիկ, մայր մեր, մայր մեր... » Եւ այլ ինչ ար-  
 տաբերել ոչ կարելին ի հասկելէ ձայնիցն եւ  
 շնչոյն : Իսկ Մեհենդակայ զերկրսն միանգամայն  
 զփոքրիւունսն ի գոգ ժողովեալ, « Զինչ իցէ, զի՞  
 եղեւ մօր ձերում, հարցանէր ստեպ. ասացէք որ-  
 դեակք իմ, ասացէք փութով : »

— Մայր մեր ապաքնեանց, լուծան ի սպառ  
 իսկիք ցաւոց նորա, եւ այժմ քեզ սպասեալ մնայ  
 հայր » :

Համբուրել զորդեակն եւ յառնել, գումարել  
 զհօտն, սալ զաջ իւր ի Հարմիկ եւ զձախն ի Մա-  
 միկ եւ դէմ դնել ի հիւզն, զայն ամենայն միոյ վայր-  
 կնին դօրժ արար Մեհենդակ. ընթանալք եւ ըն-  
 թացուցանէր զմանկունսն, եւ հարցանէր. « Եթէ  
 գիտիցէք մանկունք, որով օրինակաւ զերծաւ մայր  
 ձեր ի սաստիկ ցաւոյն : »

— Եւ կարի իսկ քաջ, սակ Հարմիկ. թող սպա-  
 մեսցէ քեզ Մամիկ, մինչ ես հաւաքեցից ձեւսով  
 ծաղկունս ինչ մօր մերում եւ քեռ » :

Եւ Մամիկ ասէ. « Մինչ գուն բաժանեցար ի  
 մենջ հայր լալով ընդ առաւօտն, եւ մէք բարբեալ  
 զմահճաւ մօր մերոյ լայք, Բաջալ եղ լայր մեր եւ  
 դեալ էր զձականս ի սնարս բարձին, եւ զերեսս իւր  
 ծածկեալ անշարժ կայր, եւ քոյր մեր առ նմին, եւ

մէք մի աստի եւ մի անտի աղօթեալք լուս. եւ ահա յանկարծ յարեաւ Քաջաջ, եւ մեզ ինչ ոչ ասացեալ էլ արտաքս. բայց զգաւանալն ոչ անագանեաց՝ բերեալ ընդ իւր բռամբն բանձար ինչ խոտոյ, զոր մէ ասէր թէ քննեալ եւ ի վերայ հասեալ էր յառաջագոյն, զի յորժամ ցաւս ինչ ունիցին գառնինք՝ ինդրեն զայն եւ ուսեն եւ բժշկին. զայն վաղձաղակի տուեալ քեռ մերում՝ եռացուցանել է ջուր աղբերն, եւ ջերմալերմն արբոյց մօր մերում, մինչ զեռ շոգի բովանդակ ծածկէր զերեսս նորա առ ի մէնջ. եարբ, հայր, եւ ի քուն եղև անդորր. քան զի մեր արտաքս ելեալ եւ աղօթեալք անձայն առ այն զոր Աման հոչես զու, եւ մայր մեր՝ Բարձրեալ. եւ իբրեւ ժամբ երկու անցին՝ հոչեաց զմեզ քոյր մեր ի ներքս ի սենեակն, եւ ահա մայրն նրստեալ էր կանգուն ի մահճին եւ օրհնէր զՔաջաջ, զի յաղօթել իւրում առ Աման հոչես անկեալ էր ի սիրտ նորա ելանել զխոտոյն եւ բերել զգեղն կենդանատու : Իսկ մէք այն ինչ համբուրեալք ի նմանե, փութացաք առ քեզ . . .

— Ահա նա ինքն մայր մեր » գոչեաց Հարմիկ, եւ թափեալ զձեռս իւր յաջոյ հօրն՝ ընթացաւ ի գերկս Չարմուհեայ, որոյ յեցեալ է Քաջաջ եւ ի գուստրն իւր կայր ի սեամս հիւղին, եւ ողբունէր ի հեռուստ զՄեհհեղակ : Անդ առ հասարակ ծնողացն եւ որդուց գերկս զմիմեամբք արկեալ օրհնէին զառեիչն կենաց եւ առողջութեան. եւ մանկտեակն առեալ փունջս փունջս ծաղկանց սփռէին ընդ օրս եւ ի գլուխս մօրն իւրեանց եւ քեռ : Քաջաջ միայն ի լուր օրհնութեանց հօրն եւ գովեստից

ստաքինութեան իւրոյ շինեալ կայր ի թիկանց Չարմուհեայ. քանզի այսպէս բնաւորեալ էր սարկեանն առաքինութիւն ի դարս անդ հարցն մերոյ զծաղկանց բերել գտիս, որ ելթէ զլիտլին բացեալ յերեւան ամիցեն զբայճատութիւն իւրեանց հանդէպ սկանն արեւու, ի մօտոյ իսկ դուռնաթափ լինին եւ զաւելն յանուշահոտ բուրմանեն. իսկ ընդ մայրենի տերեւօքն քօղարկեալք, անլթար սահճին ի դեղն : Բայց Մեհհեղակայ արտաքս զնա՝ ձգեալ եւ գերկս ամեալ անդրանկանն իւրում, եզ զձեռս իւր ի գլուխ նորա, ի վեր հայեցաւ եւ ասէ. « Երեցեն երկմբ հանապաղ ստաքինուոյ սրտին Քաջաջոյ, եւ յաւելցեն Չարմուհեայ այգալիսի որդիս :  
— Եւ հօրն եւս իւրեանց նմանակս, յաւել սարկեալսն :

— Կեցցեն ծնողք մեր անձկալիք, գոչեցին միւսձայն որդիքն չորեքին :

— Եւ երբ կեցցեն անբիծք եւ անարատք մանկունք մեր » . կրկնեցին շրթունքն ծնողականք :

Եւ իբր ի բաղմանուագ գործեաց միաձայնութիւն երգոց՝ ուխտ ամենեցուն սրտից առ հասարակ վերանայր սլանայր ընդ երկինս :

Գ.

Երասխուսաց ճառատունկեր.

Ի պարարտարօտ մեծակս հովուապետին Ար-  
բունայ, ամբանայր դարեւանդ գալարագեղ յերկ-  
նաբերձից ի Թիկանց կուսէ սրտեկալ եւ ի սաղար-  
Թախիտ մայրեաց, որովք հեշտունկալ իմն բաղմա-  
րան ընծայեր արեւակեղ հովուին եւ տաժանաբեկ  
ուղեւորի: Անդր յաճախ ի բարձրանալ ականն  
արեւու յետ արբուցանելոյ զխաշինս իւրեանց ե-  
լանեկն տուարածականք՝ տուեալ զանձինս ի  
զուարճախառն զըոյցս, ի զիւր հանդատի եւ ի  
զինն վայրացն. զի այնպէս անխաղարար են տեսա-  
րանք բնութեան ամենայն ուրեք: Առ ստորոտով  
իսկ բլրակին ընթանայր մեղմ կարկաջանօք վտակ  
ականակիտ՝ զեմ եղեալ ի ծոց մեծի եւ բացական  
դետոյ, եւ որպէս հեռաքնին անցաւոր զվայրօքն  
դեղերեալ, եւ ոչ ինչ ի բացեայ անդէն նուաղեալ,  
իբրեւ յակամայս անկեալ յուժոյ, ի դոյն արծաթի  
ծաւալանայր ԹաքԹաքուր ի մարմանդս անդ: Այլ  
ճարտարին նախահօդ ինտաք սա ոտիւք բլրակին  
յարգարեալ էր ընակ ձեռագործ, աւազան սա-  
ձեռնպատարասս յարբունն խաշանց եւ ի ըղգարան  
մանկանցն հովուաց. ընդ լինն ընդ այն անցեալ  
յաւելուածոյ ջուրցն՝ յառաջ եւս վարեկն զդե-  
ղեւեալ ընթացն արբուցանեւ եւ անդաստան մի  
փոքրիկ որ մերձ ի հանդրուանն էր:

Էր անդանօր ակումբ բարբեալ հովուաց որպէս  
յերեկն եւ յեւանդն, եւ ընդ երկար ի հաճոյական  
խմաստս ըմբռնեալք վասն այնպիսոց տեսնան, ա-  
չօքն եւ սրտիւք քան թէ խօսիւք շրթանց բարբա-  
ւեկն. մինչեւ ելցծ մի ոմն ի նոցանէ զառւթիւնն,  
եւ զարտին իւրոյ պարզէր զինացուածս. եւ լինէր  
ամենայն հովուացն յորս ոչ ինչ պակաս ի խօսողն  
նոյն կիրք ազգեալ լինեկն, գոչև միաբերան. «Վ՛լ  
գեղեցիկ դարեւանդ, օԹարա՛ն նախանձեղի, ս՛վ  
քաղցր զիւր վաստակոյ» . . . Եւ իբրեւ ընչին  
յայտպիսեաց եւ յառաւել եւս զարմանաց, եբաց  
զբերան իւր ձերունին Արբուն որ բազմեր ի միջն  
նոցա, եւ ասէ.

«Բնութիւն, որդեակք իմ, դայեակ առաջին է  
եւ ամենայնի յանձանձիչ. այլ ոչ ունի զանթե-  
րին զիւրութիւն հայթհայթեւ մարդկան, եւ ոչ  
այդ ամենայն զոր տեսնեքդ եւ ընդ որ բեր-  
կեալ սքանչանայք՝ նորին միայնոյ գործք իցեն,  
այլ գործակից եկաց նմին եւ ձեռն մարդոյ. զի որ  
պէս ոչ ինչ օդաէ մարդոյ առաւելութիւն մտաց՝  
եթէ ոչ ձեռն ի գործ եւ ջան ի կիր արկանիցէ,  
այսպէս լինի եւ ի Թողուլ անդ զբնութիւն ան-  
փոփոխ յերումն էութեան: Այլպէն որթ է որ  
բերէ յոտինն Մասեաց զզուարթարար զինին. այլ  
եթէ ոչ էր մշակին յառեալ ի ժամու զուս նորին,  
այժմ թերակատար արդեօք մնայր ինչոյնցս բերի-  
կութիւն: Եւ տեղիս այս յորում կամքս՝ ոչ բա-  
ղում ինչ ազգօք յառաջ դաշտ ընկ Թախուր էր՝  
զբարձրաւանդակդ ի միջն ունեկով, բայց ոչ հար-  
թածաւալ զըրուխն որպէս այժմն, այլ կաշաք հո-

զոյ եւ թուիք եւ խաբք • եւ ոչ առուակն մօտէր ի սա յայնժամ, ոչ հանգրուանք մեր հանդիպոյ ամբառնային: Այլ մի ոմն ի հասուց իմոց անդ ուրեմն յառուրս Ահահագին, իբրեւ դարձեալ գայր նա ի պատերազմէ վիշապազանցն, որբոց Աժդահակայ, եկեալ աստանօր եւ ակն արկեալ զվայրօքս, ընարէր իւր անդն ընակութեան անդ ուր իմն արգամբառնայ ընտկարան • եւ վառեալ գեղեցիկ օրի նակաւ գեղապսակն Տիգրանայ, որոյ ականատես լեալ էր համօրէն աշխարհաշինութեանցն, ձեռն ի գործ արկեալ յարդ եւ ի զարդ բերէր զտեղիս • նա զառապար դարեւանդս հարժեաց, նա անկեաց զձառս՝ յորոց բազումք տեղի ետուն ժամանակին, եւ այլք ընդ նոցա վերաբուսան, զի այսպէս եւ ընութիւն հնանայ: Նա ինքն գործեաց զաւազանս զայս յարբուցունս խաշանցն • քանզի որպէս անսանէքդ, վտակն բացական էր սասի, եւ այլում գերբաստանի մերձաւոր • իսկ նորա առու հատեալ ընդբերկարածիք շարար զգնացս նորուն: Ոչ ժամանեաց նա վայելել կենօքն յարգասիս ամենայնի զոր արարն, եւ զոր տակաւին երկնէր ի մօտ աննել այլ մեաւ գոհութեամբ • քանզի գեղեցիկ խորհէր նա այսպէս, թէ անձին գործէ զոր ինչ որ այլոց բարի աննիցէ եւ յես իւր թողուցու: Երախտապարտ որդիք նորա անկեցին առ յիշատակն նորին զկալնին զայս զմեծ, յոր յեցեալս եմ յետինս յորբոց նորա • առաւել քան գերիկերու ձմերուսն վանեաց բուն սորա առ յաւերժ կայոցաննել զյիշատակ բարի մարդկութեան: Հարք իմ պայապատեալ մի ըստ միօղն զգիգրիկ վիճակս զայս նորին եւ ժա-

անդեալ զցուպ նորա, ոչ վերջացան յաւելուլ ինչ ինչ նոր յարարս նախնեացն, եւ ի գիրութիւն հովուաց որոց տեսուչ կարգեալ էին: Որոց եւ էս պարս անձին ծանեայ նմանող լինել առաքինեացն, այլ ոչ հասի ես ի չափ հարցն իմոց: Բայց դուք, որդեակք իմ, ժրացարուք այսուհետեւ մի գանձանց եւեթ խորհէլ զհանգիստ, այլ եւ զորոց յետ ձեր գալոց են • որպէս զի եւ յես ձերոյ վախճանին գտանիցին անուան ձերոյ օրհներգութիւն: Նա եւ թէ ոչ նոր ինչ յաւելիք յառաջնոցն վաստակս, դոնեայ ազարտողք նոցն մի լինի՞նք, այլ մանաւանդ պահպանողք եւ դովիքք եւս երախտեացն • զի զբարեաց օրէն է զոր եւ ընդունիցի որ անձնիւ պահէլ ի սրտի զվշտասակս: Ահա եւ այդմ տարացոյց ձեղ կազնիքդ հնգբերն որ շուրջ պատեն զմեծաւս այսու, եւ ի վերոյ քան զարմն տաշեալ եւ անուանք բարեացապարտ նախահարցն իմոց, գրտմեալք յորբոց անտի շնորհակարուց: »

Իւրեաց Արբուն, եւ ընութեամբ մեկնեցան ամենեքին՝ որոճալով ի մօտ զբանն նորա • եւ ի միւս անգամ խմբել նոցա անգանօր՝ զաչս ի վեր առեալ ծերոյն ետես, եւ ոչ առանց գեղեցիկ շառագնութեան, ի կաշնուղ միտմ որ ի մտարս իւր գրու մեալ զիւր անուն, եւ պսակս ծաղկանց զատոցն զնովաւ կախեալ • զի ինքն իսկ Արբուն լեալ էր հեղինակ անդաստանին որ առ հովուականօրն ի զբօսանս պիտոյից ընտկելոցն: Եւ ընդ աչարմութիւն հովուացն ինդամտեալ օրհնեաց զնստս եւ ասէ: « Երախտագիրութիւն, որդեակք իմ, զամենայն

ինչ մեծ եւ կենդանի աննէ • եւ բողբո՛ւ այն է զի  
 ասնուականութիւն չնորհակալու որովց՝ պայծա  
 րազոյն ընծայեցուցանէ զերախտաւորին յեշատակ •  
 եւ ոչ ինչ ընդհատ ի նմանէ փառս յանմահէն ըն  
 կալցի եւ գովութիւն ի մարդկանէ » :

Ն Ա Հ Ա Պ Ե Տ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻԿ

Հայոց աշխարհիկ, գարունդ է հասել,  
 Ահա գեղեցիկ գարուն քո եկել.  
 Ո՛վ դու ի վաղուց մտցուած հայրենիք,  
 Ո՛վ դու իմ սրբախ անմուտց սեղիք.  
 Ահա գարունիկդ եկել է եկել  
 Աւագ Մասեաց ծայրն ընդ քեզ հաշտ հայել.  
 Այն սեւ սեւ ամպերն են դարձել ի փախ,  
 Այն ճերմակ ճերմակ սարերն են անվախ.  
 Չընիկն ի ծոցին բացեր է ճանպարհ,  
 Քաղցրիկ կրկիրճով գործ գեաս հաղար.  
 Յայն բարձր ժայռից որ երկնուց են մօտ  
 Կենաց օրհնութեան ծագէ առաւօտ:  
 Ահա քո բլուրներն Հայոց աշխարհիկ,  
 Այն քո բլուր բլուրներ ու բլուր վրասկիկիք  
 Հաղար քո ձորերդ ու հաղար քո դաշտ՝  
 Տարան ցուրտ ձմեռդ ու ձիւներդ շատ.  
 Լէրինք ու հովիտք ընդարձակ ու լայն  
 Կախուռն զարգարին նոր հարսին նրման,  
 Կապուտակ սարերդ գունդղղուն պրտակ  
 Կապեն ի դըլուխ զինչ նոր թաղադրակ.



Ի ծայրից սարից որ երկնուց են մօտ՝  
 Փռուռի մինչ ի խորն հօրսան ու մօրսո՝  
 Գեռեղեբքն ամէն բացել են շուշան  
 Պայծառ զընդրդնով՝\* ցընցրդկեն գընան ,  
 Սարեղեբքն ամէն զվարդն երեւցուցին ,  
 Ա՛հ կարմրուկ վարդեր , զաւակը Եգեմին :  
 Պըրբուզն ի հեռուանց թողէջ ճըզնարան  
 Ծովեր ցամբըններ թեւէջ անգունան \*\* ,  
 Կանչեց ի յօղուն երեք հեռ բարեւ  
 Ոսկունքըն զըրաւ ի սարին վերեւ ,  
 Սարին վերեւէն ի վարդին տերեւ ,  
 Հայոց աշխարհիկ , քեզ երես բարեւ .  
 Սարեկն ի սարին եկաց ու մընաց ,  
 Անմեղ նախընծով եղաւ երգասաց .  
 Արագինը յերգին մարբեց իր բունիկ ,  
 Կանգնեցաւ կրդաց « Հայոց աշխարհիկ » .  
 Արտուտիկըն թուաւ , թուաւ թուա վարուվեր  
 Մանրիկ ճըբըրով ասաց շատ բաներ .  
 Տատրակիկն իջաւ իջաւ ցած ու ցած  
 Կըրծկունքն ի գետին ըզվճվճն ճըւաց .  
 Հովիւն ու հօտալ , գառինը եզն ու կով  
 Գոհացան զԱստուած՝ մարգեր շուրջ գալով :  
 Հանց քեզ տերն է տուել գարուն գեղեցիկ  
 Որ դրախտի նմանին Հայոց աշխարհիկ .  
 Իրախտիկն անցել քեզ գարձե՛լ գալ գարնամբ  
 Զկնչ պայծառ արեւն որ ծածկէր ի յամբ :  
 Բայց Նահապետիս ինչ ասեմ ծերուկ  
 Որ եմ քան զամէն ծաղիկ վաղանցուկ .

\* Աւեր . ծիանը :

\*\* Յանկարծ . վաղվալ :

Իմ գարունս անցել ու հասել աշուն ,  
 Յամբած տերեւուկս ըսպասեմ հովուն  
 Թե էրբ ի լերանց ծոցուն վըչէ խոր  
 Ձըրէ անկըսի՛ծ զիս ի մահուն ձոր :  
 Նահապետիս կեանքն եղաւ բաւական  
 Խընդուժեամբ կեցաւ ի յերն Հայաստան  
 Ժամ է որ երթայ ի յայն հայրենիք .  
 Ուր խիկի չըստուին եղբարք սիրելիք .  
 Խընդուժեամբ կ'երթամ քեզնից հայաստան  
 Քեզնից առած հող՝ ի քեզ տամ թաղման .  
 Ի քո ծոցեա վեր կանգնեցաւ Ադամ  
 Ես ի քո ծոցեա ա՛ ելնեմ անթաւաւ :  
 Այ մանկախք եկէք շուրջ Նահապետիս  
 Ահանը զիք շայիր \* հօրք յետքի ձայնիս .  
 Պըլպուզն ու սարեկն երգերն են նորեւ .  
 Իմն՝ հետ տատրակիկն հօղու հաւսարեւ .  
 Մանկախք զիս Հայոց հողն ու ջուր անուցել ,  
 Ես այն հողն ու ջուր սըրտով եմ սիրել .  
 Հայրենեաց հարուստ է հող , ջուրն անուշ ,  
 Բանց օտար վարդ քաղցր է հայրենեաց փուշ .  
 Հայաստանի օգն է քաղցր ու բարակ  
 Հովերն են անուշ , սրայծառ են վըտակք .  
 Զուրն ու սըրտուզն համասն անմահու թեան ,  
 Խոտն ոսկեզօծէ զըսաներուն բերան .  
 Յոսկեթեւ ամբողջ յայդուն զովիկին  
 Թորթոր իջանէ ցօղիկ մանրագին ,  
 Կարմիր ճաճանչով արեւուն շաղուած  
 Գայ ի խաւըրծիլ մանանայ կենաց :

\* Քերդող . երգահան :

Ո՛հ լերունք ծաղկած , ո՛հ ջուրք ծիծաղկոս  
 Զանուշիկ հովերս ի յիս անէք մօտ .  
 Հողմունք անուշիկք եկէք մօտ ի յիս  
 Շունչ ու երգս անէք սարէք ի Մասիս .  
 Տարէք վերջն շունչս ի տուն սաղասնին  
 Ու բնեցուցէք զաւհաց թարգմոնն :  
 Ձեզ կ'ասեմ մանկունք սիրունք նագելք  
 Որոնց է բնական հայոց աշխարհիկ .  
 Մ' սերանայք զերկիրդ ու զագլղդ սիրուն ,  
 Ծառն՝ արմատով ծառ , սունն հիմնովն է  
 Մեր տէրն ի յերկնուց ծայրէն երբ իջաւ (տուն .  
 Երկրիս հիման քարն յԱրարատ դրբաւ .  
 Այն մեր Մատիսու երկնածեւ սարէն  
 Աչեց ըզբողբո՛ր՝ վերայաւ նորէն .  
 Հոն չափեց սահման իւր նախաստեղծին (տին .  
 ԶԵփրատն ու զԵրասն բաժակ զբաւ զբախ .  
 Կենաց փայտին ծառն ի հոն ծաղկեցաւ ,  
 Չար դիտուածէնէ բարին մեզ տրբուաւ .  
 Ի հայոց հողէն կաղմեցաւ Ազամ  
 Զօրն Հայոց Եւայն ծրծեց քաղցրահամ .  
 Աչքերըն պայծառ երեպն աննրման  
 Հրեշտակաց առջեւն հոն հանդիսացան .  
 Ծաղկունքս այս ծրնած են ի յայն ծաղկոց  
 Որ Եւայի սգակ եղան ու նրստոց .  
 Այս մեր սարերուս ծերուկ արձագանդք  
 Աստուծոց ձայնին արւին սրատախանք .  
 Ատից երգք սիրոց ու ապաշխարութեան  
 Երկինքն ի վեր նախ յերկրէս վերացան .  
 Արեամբն Արեւը՝ Բրիտատս հոս զենաւ  
 Կըրկին եւ կըրկին մեզ յոյս խոտացաւ .

Ազամ՝ ծերունին այս սարիս ներքեւ  
 Զաւակացն ասաց զեր յեանն բարեւ .  
 Այն ձորիկն ի վայր լալով գնաց Եւս  
 Գուհին ի քար դրբաւ կարօտ Եգեմայ .  
 Ի հոն են նընջել մարդիկն առաջին  
 Որ հեա հրեշտակաց զԱստուած օրհնեցին : . .  
 Երբ գոտաց երկինքն ու գեաին սարսեց  
 Ամպերն ի ծով , ծովն ի յամպեր վաղց ,  
 Այն սարին ծարէն Նոյ մտաւ ի տասան  
 Զբազուռս երկիրս շուրջն եկաւ մանուսն \* .  
 Իջաւ բազմեցաւ ի բարձրն Մասիս  
 Զաղաւ սղաւնին զըրկեց աւեաիս .  
 Երկիրս էր դարտակ անասաւ ահեղ ,  
 Լուկ ի հայաստան կայր մարդկութեան տեղ :  
 Մէք եմք հարազատք ծեր Նոյի ծրնուկդ  
 Որ ժառանգեցինք զՏօլլիս ու լերունք :  
 Կախընծեցաւ Բեւ բըռնաւոր արբայն  
 Զհասակն անձոնի կանգնեց բարձր ու լայն .  
 Շատ զօրքեր շարան բերաւ անհասար ,  
 Թուկս արեւ բըռնեց մեր երկնուց պայծառ .  
 Լըսեց Հայկն արի , ձէնեց քաջերուն ,  
 Մարն ի վար վաղց զինչ կայծակ յամպուն .  
 Զաղեղն լարեց կամըրջն նրման  
 Որոտաց թըուց զոնեարն գերան ,  
 Զերկաթն ու պըլինձ կըրծից հըսկային  
 Սըրտովն ու թըրով հանեց կըռնրկին .  
 Փլաւ Բէն ի բըրբէն ի խօր Գերեզման ,  
 Զէա ծուխ սեւ զօրքերն եղան յիրուցան :

\* Եւրջ շուրջ :

Հաս կըտրըճուորայք հանեց Հայաստան ,  
 Հաս Բելէր վրուցին քաջքն Հայկի նրման .  
 Հոռոմն , Ասորին , Մար , Սրիւթ , Պարսիկ  
 Հայոց թըրերուն եղան սխառտիկ .  
 Այս սարեր , ճորեր ու դաշտերս ամէն  
 Կարծիր են քրանել , կարծիր խըմել են .  
 Ի հոն են խաղցել Տիգրան ու Տրդատ ,  
 Վարդանն ու Վահան , Աշոտ ու Սըմբատ :  
 Հոն կրակէ թուուցել նեա Հայոց մանկտին ,  
 Թըղի պէս թափել գունդ գունդ թըրնամին .  
 Այս բլուրներուն ծայր դրօշկներ բացուէլ ,  
 Արեւնն ու արծիւ հեա խաչին վառել .  
 Չէր ծարւած դացել , դարձել են արբած ,  
 Ճըմնտած ճակատք սպարդել են սպակած .  
 Բնկել են ընկել հոն Հայոց ալ քաջք  
 Մեկ ձեռքըն նիզակ ու մէկալըն խաչ .  
 Թըռէլ ի գաշտէն ելեր են յերկին  
 Բաղմել հեա Գրիգոր , Տրդատ , Վարդանին :  
 Արգար թագաւոր մեր քաջ խնաստուն  
 Թըղթով է խօսեր հեա Ատուածորդոյն ,  
 Երնէկ եւ ընծայ առել Քրիստոսէն ,  
 Դեապան ընդունել զուսարեալ թագէն .  
 Չառաջին պատկերն այն սուրբ գաստառակ  
 Փրկչին կողաբայ Գեղարզըն միակ ,  
 Այլ շատ նըշխարքներ , մասունք դանազան  
 Ի ծոցն է պահել աշխարհս Հայաստան .  
 Հաս առաքեալներ ունի իւր քարոզ  
 Հաս սուրբ Հայրապետ ու շատ մարախրոս .  
 Բիւրաւոր ունի մտորունք ու տաճար  
 Անսպատ ու վանք հազար ու հազար :

Եւստուծոյ աւեր ըզեղուն ու զլիր .  
 Թարգմաներ յամէն ազգէ գեղք ընտիր  
 Ճարպիկ աւայք դըրկէլ ի Ստանդուլ , Ալթէնք ,  
 Հայն հոռոմ լեզուով յաղթել է զՀէլէնք .  
 Հաս գըրքունք գըրեր մեր հարքն ու մագլաթ  
 Չէա ցորեն զիզէլ քանց բարձր Արարատ :  
 Բայց ախառն հիծիկ որ շար թըրնամիք  
 Իսկի շէն խնայել Հայոց աշխարհիկ ,  
 Սկեղեցիք , վանք , գըրատուն դարսաս  
 Չարկել են թըրով հըրով գաս ու դաս .  
 Չաղչն ընչօք սեղօք քանդել ու գերել  
 Դեմ չարս հովերուն տըւել ու ցըրուէլ :  
 Աւա՛ղ քեզ աւա՛ղ Հայոց աշխարհիկ  
 Տուն երկնանըման , վըրած սաղւարիկ : . .  
 Այլ ի՛նչ ախասամ ըզքեզ Հայաստան  
 Երբ ձեռքն Աստուծոյ տեսնու՛մ յանդիման .  
 Ինքն է հրամայած քակել , ինք ըննէ ,  
 Չինչ ըզհեա ձըմանս գարուն քեզ բերէ .  
 Չաշխարհ մեր սիրեաց Ատուած ի սկըբան ,  
 Թէ անէճք երես՝ սիրոյ էր եւ այն :  
 Ի թուխ ամպերէն ելնէ փոթորիկ ,  
 Բզճոյ Համբուրեն ծառերն ու մայրիք ,  
 Տերերէն եւ ողկոյզքըն մարգարասաշար  
 Ի յոսից ներքեւ երթան ի խաւար .  
 Ամոն եւ փոթորիկ վաղիւ մերանայ  
 Կոր արեւ , գարուն , ծառն ու այդին գայ :  
 Արմատք հին՝ նոր ճիւղ հին ճիւղք՝ նոր ծաղիկ  
 Բնծայեն բնութեան , Հայոց աշխարհիկ .  
 Դուք այլ կործանած սիւնք , դուք այլ կանդ-  
(նէք ,

Կապին համարքդ, ո՛հ, սուրբ եկեղեցիք .  
 Քակեալ վանորէք՝ շինիք հոգւոց առն  
 Դառնան ձեր սաղմոսք, ձեր քողոց արէլուն :  
 Այդ քո աւերակք, Հայոց աշխարհիկ,  
 Նըշան մեծութեանդ են, Թոռամձ ծաղիկ .  
 Թոռամձ էս՝ բայց վարդ, ցամբած՝ բայց հա-  
 Ով բղբեղ օտար ծաղկան հեռ փոխէ՝ (լուէ-  
 Նա կոյր է յիմար . զհոսան անմահութեան  
 Ընդ սուտ գոյն փոխէ արխմարն ու արդայն .  
 Յիմար է յիմար որ զլարծանքն հարանց  
 Երթայ վաճառէ ընդ օտար ազանց .  
 Աշխարհիս օրէնք՝ որ ծնողք չբփոխին,  
 Հայրենափոխք չեն, ուրացողք լինին .  
 Ծառն՝ արմատով ծառ, ծառոնի է արմատ .  
 Դաւար մանկիք, ձեր աակն է Աբարաա .  
 Պինդ կացէք, Աստուած ցողէ ի վերէն,  
 Ծրելք ու ծաղիկք քանց վարդ ի Թրբէն .  
 Չբլնի որ նախանձ չընի հակառակ,  
 Թէ չէ՝ նման խոտու լինի խայտառակ .  
 Այլք ծրբին ծաղիկն, Թէպէտ քքչիկ մ՝ ուշ,  
 Չարկամին մընայ միշտ զբժնիկ միշտ փուշ .  
 Որք խելցք սիրով կան զինչ աղբբրիէք  
 Տեսնեն քո գարունդ Հայոց աշխարհիկ :  
 Ալ էս Նահապետ ցամբած ձերունիս՝  
 Երթամ մեր ճին հարցըն ամաւաւտիս,  
 Ասեմ, Թէ գարուն երեկ տանս Հայոց,  
 Ի՞նչք Նահապետիս ասացէք՝ հոգւոց :  
 Ծեր Նահապետիդ՝ տուր կակուղ հողիկ  
 Որ դբեղ պինդ սիրեց, Հայոց աշխարհիկ :

ՀԱՅ ՀԱՅՐԵՆԻՔ

Առաւօտուն զընախն է բայց .  
 Ե՛լ էլ արեւդ Հայաստանեայց :  
 Ահա ելնեն օրք կան ի քուն,  
 Ու Նահապետն այլ որ անբուն՝  
 Յաստուածազարդն ելնէ հանդէս,  
 Հայ Հայրենեացն ելնէ ի տես :  
 Ելնէր ելնէր նա մինչ յԱրտոս  
 Զաւէրն ամեւ ընդ չորս բոլորս,  
 Երբ սեաւ գիտակն էր ճակատուն  
 Ոտկունքն արագ էր քանց այծուն .  
 Յաստուածազարդ ելնէր հանդէս  
 Հայ Հայրենեացն ելնէր ի տես :  
 Ի՞նչք որ արերա ի վեր երթայք  
 Այ իմ սիրուն կարըճուորայք,  
 Գեմ՝ Թէ զդաւար աշուիդ սիրէք,  
 Նահապետին մըտիկ արէք .  
 Յաստուածազարդ էլէք հանդէս  
 Հայ Հայրենեացս էլէք ի տես :  
 Ահա ելանք ի մեծ հանդէս,  
 Հայ Հայրենեացս երանք ի տես .  
 Ահա տեսանք զաշխարհն Հայոց  
 Որ զգրախօսին առեւ ի ծոց

Գեթ . գոնեայ :

Դեմ երկընուց կայր կանգնեման  
 Անգրանկածին մօրնն նրման :  
 Ահա երևեր արեւն յամպոյ  
 Վարդ կու թափէր յաշխարհն Հայոց •  
 Յօղն աեղայր զով ու սիրուն  
 Զինչ մարգարիտն ի սասափուն •  
 Կարմիր կանաչ ծին ծիրանի  
 Գօտի ածուէր Հայաստանի :  
 Լերանց սարերն բարձրածայր  
 Ոսկի պըսակ եղան հաւասար •  
 Հայոց գետերն հազարաւոր  
 Իլանէին ճաճանջաւոր •  
 Հազար թէ գետ , բիւր թէ առուի  
 Հայոց ծովակն այլ աւելի :  
 Այ գրախտի ջրեր իջէք իջէք  
 Զերկերն Հայոց արեկոցեք •  
 Ահա վտակունք կրրկըջային  
 Ձորն ու հովիտ արբեկային •  
 Յամէն կաթէն ասաղիկ ճընէր ,  
 Յամէն ծրնէն ծաղիկ ծաղէր :  
 Ահա տեսանք զճաղկունքն Հայոց  
 Գոյնն էր երկնից , հոտըն խընկոց •  
 Վարդն ու շուշան էին վտաման  
 Հարմամատերն ի ջուր փըրման •  
 Հօրոտ մօրոտ էր տարածել  
 Ըգտեսողաց աչքն քաղել :  
 Ահա տեսանք զհաւերն Հայոց ,  
 Չայնն հրեշտակի , գոյնն էր ծաղկոց •  
 Կուռնկ ու արապիլ գային հիտրաց \* ,

\* Հետ իրերաց . միբանն :

Ղարխներուն սիրաբն ճրխաց •  
 Արեղաձագ , սարեկ , արտուտ  
 Կարուկ , պըրզուլ վարդակարոտ : •  
 Ահա տեսանք մեծ կարաւան  
 Ի չորս գիհաց ելեր կու գան •  
 Քուրդըն կուգայր յարօտ աման  
 Հօտերն ի հետ շարան շարան •  
 Արջկունք առեալ զասլըն հիւսնն ,  
 Մանկունք ըզատն աղբիւրս խըմնն :  
 Ահա տեսանք զվաստակն Հայոց ,  
 Սերսին թափել էր յերկընուց •  
 Հոն որ Ագամ վարէր գուգան \*  
 Քանց ըզբառուուն հասկերն սան •  
 Հոն որ Արեւ գառն ընծայէր՝  
 Մաքիքն ածեն միշտ ջուկտարկներ •  
 Հոն որ զայգին է աղնէր՝ ոյ  
 Ոսկի ողկոյզն են խաղողոյ •  
 Կաթն այն կըրծքի , գինին բաղկի ,  
 Զուրն հասխաթ \*\* է տմենի :  
 Ահա տեսանք զխորանքն Հայոց  
 Կամար կապեր են յերկնից ծոց •  
 Եկեղեցեաց թիւն հազարով ,  
 Մատրուներ՝ սըրբոցն են համարով •  
 Խոռնկն ճըխէ առտու՝ ըրիկուն ,  
 Աստուած առնու զհոտըն սիրուն :  
 Ահա տեսանք զբարերն Հայոց ,  
 Մէր Հայրերուն մահուան օրոց •  
 Գերեզմներն ըւռ էին

\* Արօր մեծ ութ ըծոյք :

\*\* Օգտակար . ստողարար :

Խաչվեմքն ի քովն աղօթիկն .  
 Տէրն տղորմի հանգուցելոց  
 Եւ ամենայն երկրիս հայոց :  
 Ահա տեսանք զերկինք պայծառ ,  
 Շըրժներն՝ երկրիս հայոց հաւասար .  
 Հաւերն ի հունչ , հովերն ի շունչ  
 Օղբն վառվառ , ջուրն ի մբրմտնջ .  
 Լըւարկս է ճոխ , արեւս անուշ ,  
 Մարերն ի վար ի՛լնուամբ մեք ուշ :  
 Ահա ի գունհան երվայր արեւ  
 Նահապետին մենք տանք բարեւ : —  
 Ծեր Նահապետն այլ ձեզ բարեւ ,  
 Աստուած վերէն ապ շատ արեւ .  
 Ի՞ժիր գնացէք դուք յայդ հանդես  
 Հայ հայրենեացդ ելէք ի տես :

ՈՂՐԱՄ ԶՔԵԶ ՀԱՅՈՅ ԱՇԽԱՐՀ

Չայս խմ կենաց դառնաճամ՝ ծովս որ եմ կարել՝  
 Հայոց աշխարհ , բըքեզ խկի չեմ մտացել .  
 Հխմ՝ որ շնչնկսս ի հագագիս է ոտնտաած ,  
 Մազժախ ճահատարս գետրնուց ակրնկորած ,  
 Ընդ չորս բոլորտ հեա հայիմ , հեա ծածկին հեոխ ,  
 Այլլուի բըչնի մ՝ ու Նահապետն ախ \* մեռնի .  
 Ո՛հ , զխմ կընտիկ ճահատս այլ չեմ կարեր կանգ-  
 նել  
 Ու սըսպըղուն \*\* Մասեայ սարերն ի վեր նայել .  
 Այլլուի բըչնի մ՝ ու այս ափոռնբըս ախ լըռեն ,  
 Այս բարի շքերես ըզճերոռնիս չի ախ գըանեն .  
 Դուք բաղմաշար Մոկաց լերունք քարաբերանք  
 Դուք ինձ եղիք գերեզման դուք ինձ արձագանդ .  
 Փետտած քընար , ահա բեղիկ տամ լծոյլ մաւ-  
 ներս ,  
 Անմաշ վախաբ , անմաշ կըրակ մըռէք ի ներս .  
 Զայն պատառուկ սիրան որ տեսնուք՝ այնոր ներ-  
 քեւ  
 Կան մին քանի սուր հատտանք կարմիր ու սեւ .  
 Ճընշած կըճկունքս աղէկըրարին ո՛հ , զինահար \*\*\* ,  
 Այսոր քարչեմ ու դուրս բերեմ զխմ ցաւն հա-  
 վար .

\* Ոխի :  
 \*\*\* Յես . ինայեա :

\*\* Փայլուն . շողողուն :

Թող ի Տարօն հասնին ձայներս, սարքն սառ-  
ւին,

Մեղրայ դետոյն արքն անոյ՝ լեզն կըտրին .

Հեռ խորօնից քերթողահօր սաստազըրին

Թող կիսատ շունչքս ողբակցելով էրթան ոլբին,  
Զաշխարհն հայոց ես լամ զիմ քաղցրն հայ-  
րենիք,

Արին արցունքքս հեռ թափեմ քաղցր ու ջր-  
տիկ :

Ահա թոռլցած արիքքս պինդ պինդ քարեցան,  
Մոխրէն ի դուրս կրակուռք ելան սիրտըս լը-  
ցուան .

Թռուս ելաւ հաճապեալին սիրտ վեր ու վեր,

Խաւ խորցաւ գերեզմանաց վախեր վըհեր :

Ողբամ ըզքեզ Հայոց աշխարհ, ողբամ ըզքեզ,

Որ փառաւոր նրտաժ երբեմն արքայապէս՝

Արեւելից եւ հիւսիսոյ ազգայն հազար

Ճօկան՝ ի ձեռդ առած՝ կայիր հրամանատար .

Ողբամ զիշխանիքդ ու թապաւորքդ որ անց կա-  
ցին ,

Ողբամ զորդիք մեծ Գրիգորի որ շերեւին .

Ըջրիւր հազար ցաւերտ ողբամ աշխարհ հայոց

Զոր թը շնամիւրդ ետուն ու միտք կուրացելոց :

Զարթիւր զարթիւր Երեմիա մարգարէ զգօն,

Տես ի՞նչ եղաւ դեղեցիկ նորրս մեր Սինոն .

Ոչ Յովնիստ մեզ մընաց ոչ Մեդեկիա

Աշխարհս ամէն ոտնակոխած աւեր մընաց .

Զբիւց քաջաց հայր Մատաթի, ոչ Մակարէ

\* Գաւազան :

Որ զայսպիսի մեր կործանմունք նորէն կանդ-  
նէ . . .

Ո՛հ, իշխանաց աթոռանին անկեր դեալին ,

Թանձրատեսակ ծրխով լըցուէր եկեղեցին :

Զարթիւր ելիւ արեկ թէ ճար գիտես ցաւոյս ,

Յուսակըտուր սընդէ զաղիս , սիրտ տուր եր-  
գոյս .

Ե՛կ ի Մըարայ, եկ ի յուռեայ Բաբելոնի ,

Սաղմոսարանդ իջ՛ս արեկ յԱրածանի .

Վայ ուռեստան եւ հայոց , կան մեր շատ արեք ,

Վան կաղամախք, կան սեւ նոճիք կան եւ սօսիք .

Մեր դերեզմանքս այլ շատ , մտեալքս այլուի  
շատ են .

Որք ու այրի՝ եկեղեցիք զարպապ ամէն .

Թէ լուկ հայիս իմ՝ աշխարհին երեսըն սեւ՝

Լէրդըզ վառի , սրբաիկդ ըլլի ներքեւ վերեւ :

Պո՛ւ այլ զարթիւր ու ար՛ եկ քերդողդ մեր Մով-  
սէս ,

Որ ողբակից հրաւերէիր ըմբարգարէս .

Տես այս երկիրն է հայկազանց ւ Արշակունեայ

Որոց փառօք լըցեր ըզգիրըս սաստաթեանց ,

Այս այն երկիրն է Տիգրանին եւ Արամայ

Որ բրոնէին ըզբրոնաւորքն զինչ սրբայ .

Այս այն երկիր մեծ Տըրդատայ քաջ Վարդա-  
նին

Ու՛մ նախանձէր Պարսիկ , Հոռոմն եւ Ատրին .

Եւ այն երկիր Ղուսաւորչին ու Կերսիսի .

Այս Մահակայ, Մեսրոպայ, քո խիկ Մովսէսի .

Ո՛հ, ի՛նչպէս փառքն ամէն մըթիսած եւ այլա-  
փօիք ,

Միայն անփոխ գուշակութիւնք քո կան ջաւօք .  
 Աւար, աւեր, սուր, գերութիւն, սուգ եւ չա-  
 րիք,  
 Այլ չար՝ նախանձ, արդիտութիւն մընան հի-  
 միկ .  
 Գարեր անցին գնացին, Հայոց փառքն մոռցած  
 Նահապետիս միայն խաւարն ու սուգ մընաց:  
 Հէ՛ խեղճ ծերուկ, զորիկ ըզգործիկ, ու զքեզ  
 քարի՝  
 Կամ թե քաղէ զաղիք սըրտիդ որ քաջ լծըրծուի-  
 խօսին կանչեն այրած լերգերդ, լրսէ աշխարհ,  
 Բո գանկըտանք բրոնեն լեռներ ձորեր հաւասր:  
 Եղբամ ողբամ հազար ողբամ զքեզ Հայաստան  
 Երբեմն բիւր փառաց տեղիք, հիմայ դամբան .  
 Բո ծիրանիբըն մերկացան, քո լժազդ առաւ,  
 Արիտութիւնըն հայկական անգէն լծրաւ .  
 Բո սուրբ յաջորդք քահանայիցըն սրտկեցան  
 Ամէն չարիք մըտին ի մէջ Ժողովրդեան .  
 Բո ծառաներն ապրտառիդ դէմ քեզ սուին սուր,  
 Բո իշխաններն՝ մէջ քո տան վառեցին հօւր,  
 Լքեցին Պարսք ու բարբարոսք դազանական,  
 Մէկ առ մէկ ձայն տըւին ելէք ի Հայաստան .  
 Ելան եկան ամտոնամուտ ամպոց նըման  
 Որ յԱնտոսայ սարերն ի կախ կու կըրկըւան .  
 Հայաստանի չորս բողբոսիբըն սրտեց սեւ,  
 Բիւր տակ ամպէն ի՛նչ ցեղ \* ի գուրս ելնէ արեւ .  
 Պահալք բացուան, սահմանքն առան, արգելքն  
 ընկան ,

Զխորդ :

Փախիր պահուիր, թէ չէ՛ մաշխ սիլ Հոյա-  
 ստան . . .  
 Բայց ո՛ր փախչիս դու Ժողովուրդ անհայր ան-  
 տեր ,  
 Բերդն ու պարիսպ, շէնքն էն հողու հաւասա-  
 րեր : . . .  
 Ա՛հ անիծեալ երկաթ ու ձեռք որ զայն սըրեց ,  
 Հայոց արիւն քեզ լուկ այդքան անող լծրեց .  
 Մի՛թէ անկուշտ քաղցիդ ու չար քո ատամնոց  
 Զքիմ Հայաստան ցըցուց արեւն անողբմած .  
 Ո՛ր բռնաւոր ո՛ր տիրապետ ո՛ր անօրէն  
 Չեկաւ սըրով բաժին մ՛ առնուլ Հայոց երկրէն .  
 Ո՛ր բարբարոս աւերածու ձեռաց նըշան  
 Չեթող վըկայ մեր շէնքերուս երկնանըման .  
 Մեկըն կըտրեց, մեկըն հընձեց, մեկըն լափեց ,  
 Մեկն այլ փորեց, զարմատն հանած հողըն ցը-  
 րուեց .  
 Ա՛հ, այս աեսոյս սիլ դիմանայ թէ չէ արձան ,  
 Կամ ի՛նչ ցեղ քեզ չողբայ խեղճուկ իմ Հայա-  
 ստան :  
 Տեսէք գեղանքն ու քաղքերնին խառնութիւնդ որ ,  
 Սառնապաղաղէ գետոց ջըրերն՝ յարիւն յորդոր  
 Տեսէք ռամիկն ու մեծատուն ամէնքն աղքատ  
 Տընակորոյս բարբարական դաշտն ի դաշտ .  
 Փախչին գընան , չըգիտեն ո՛ւր, յեսք չընային ,  
 Զի սուրն անգութ փրուէ զայնոնք ցուրս ի գե-  
 տին .  
 Գղբա այլ ո՛ւր ըզգիտիս ատէլ ըշատալ կէր-  
 լման . —  
 Ամէնքն ի մեկ տեղ . ո՛հ, ամէնքն ի գերեզման :



Ահա ծերեր որ հարկեւոր ալքին առել  
Փախել փորձեն , փորձանք գոչեն , ընկնին մե-  
ռել :

Ահա անտիրտ խեղճ կընկըտիք որ անլաջակ  
հետ էրկընտն կանչւրտելով մլնան մլնակ ,  
Պարկեշտ աղծկունքն որ արեւէն ծածկըւէին  
Գազանակերպ մարդկան ձեռքէ ձեռք ընկնին .  
Ահա մատղաշ մայրն որ զբտեսնի տըղեկն առեր  
Լէղապատառ խղրռ մոլոր կ'երթայ վըհեր ,  
Պահ մի թողու զորդայն ի վայր , գեմ դայ դահ-  
ճին ,

Յամբած ծոցիկն առել մօր գուժ յիշէ նըմին .  
Բայց սուրն ահեղ ոչ մօր գըթայ ոչ որդեկին ,  
Ծաղիկն ու ճուղ մէկտեղ կտորէ վառ վառ նը-  
ռին .

Կաթն ու արիւն զինչ եղ ու մեղը հետ կաթկը-  
թին . . .

Հրեշտակք , թէ գուժ ունիք՝ հանէք զայս կաթս  
յերկին : —

Ո՛հ , ես քանի՛ քանի՛ ներքեւ այս ձորերուս  
Գերեզմանաց վըրայ թափել եմ արտասուս ,  
Ուր քորք ու եղբարքս , հարս ու փեսայդ , հարք  
եւ որդիք

Կարճ օրերով գերիայն գիշերըն կու հանգչիք : . .

Ա՛հ Կահապետ , քանի՛ յիշես թափես արտառնք ,  
Երնէկ այտոնց որ զինչ վըկայ մեռան սիրունք .  
Աւին զաչերն յայս սեւտած մոխրած երկրէս ,  
Չըտեսան զայս աւերակներս յոր ժուռ գամ էս .  
Երնէկ անոնց որ չըտեսան գետին փըռուած  
ԶԱնոյ նըշխարքն հազար ու մէկ եկեղեցեաց .

Ոչ զայն ամառ բերդըտանին ու սուրճընուն \*  
Անկազարացի ծայրերն հաւասար գետնի հողուն :  
Վայ իմ աչացս որ լըսն Հայոց սեւ եմ տեսել .  
Թագաւորաց դարպասն՝ եզանց գոմ է դարձել .  
Վայ իմ ձեռացս որ հող ժողկել եմ զիշխանաց  
Մաղապակաս ճակտիս վըրայ եմ զայն ցանած .  
Վայ իմ ոտացս որ սուրբ կոխել են գմբէթունք՝  
Ուր լոկ արեւն հասցընէր թոյլ թոյլ փայլիլու-  
մունք .

Վայ զիս , վայ վայ որ զՀայաստան մեռել զիտեմ  
Ի գերեզման դարձել տեղիք նըման յԵդեմ : . .  
Լնու գերեզմանք , լնու մեռեալք , քաղցր ըլի  
ձեր քուն ,

Քանզի լըռեց եւ ընկաւ սուր ձեր թըշնամոյն .  
Բայց դու Հայոց աշխարհիկ , էրբ գու այլ հանդ-  
չիս ,

Ե՞րբ տի ցամբին աղբւր արտառնք Կահապե-  
տիս :

Ո՛հ , ես այլ մեծ չարիք տեսնում ողբամ ըլ-  
քեզ ,

Ողբամ հազար , որ այդ չարեաց պատճառ դուն  
ես :

Ար՛ եկ ար՛ եկ հայր իմ ողբոցըս դու Մովսէս ,  
Իմ սիրտ այլ չի՛ երթայ , սաս դու քաջ գիտես .  
Քո Երեմիկդ ու քո Զաքարի հետ սու ողբս  
Հայոց ազգիս տարակուսեալ գըրկուս վըրայ .  
Ողբամ ըլքեղ Հայոց աշխարհ , ողբամ ողբ  
բիւր ,

\* Բերդք եւ բրդունք կամ աշտարակք :

Վան ըզբետերն յորդորցնեմ աչացս աղբիւր •  
 Գէմ ժողովօրդն ջըւարած մընաց մողար  
 Ոչ ձեռնատու ոչ առաջնորդ ունի ոչ ճար •  
 Առան վերջան մեր թագաւորն ու քահանայք  
 խորհրդականքն եւ վարժապետքն քայինայք •  
 Աթոռանին ու սուրբ բեմերն ի լաց յողբ  
 Ի բընուածեան ներքեւ ընկած կանչէն բողբ • •  
 Միշտ ոսնակոխ , միշտ բարեգուրի , ի լաց ւ ի կոծ  
 Չարն կամի զբեզ ո՛վ բարի աշխարհ Հայոց : • •  
 Այլ գու լըռէ ծածկէ զբարիք երկրիդ Մովսէս ,  
 Մ'աներ զամէն որ ի Հայոց մէջ կու տեսնես •  
 Մի զայն եղբարց Հարազատաց ընդդիմուածիննս ,  
 Զանգիտուածին որ ի Հաւատք եւ ի յուսմունս ,  
 Եւ մի զարգար՝ բայց խիստ երկնից ծեծ վրէժ  
 խընդիր ,  
 Որ զՀայաստանն յօտարաստան ըրաւ ցան ցիր :  
 Ա՛հ , Նահապետ , ծածկէ կնկող ըզգրուիդ ու  
 զքնար ,  
 Թուլցուր թեւերդ , եւ այլ սրգով յառաջ մ'եր-  
 թար : —  
 Գխտեմ գիտեմ այն մեր մեղաց պարտքն եր ար-  
 դար •  
 Սահայն երկնուց արդարուածին չունի վըճար •  
 Եւ հրէական ազգին նըման նըզովք յերես  
 Գարէ ի դար յուսահատեալ տի դիան Հայերս :  
 Չէ • ողորմածն Աստուած թողել չէ զՀայաս-  
 տան •  
 Նա ինքն զինքն է զըլորեւլայս խոր զընդան •  
 Երբ որ կամի՝ կանգնի • բայց թող զընան կը  
 սիւք ,

Երթայ նախանձ , թող գայ սէր , թող միանան  
 սիրոք •  
 Յայնժամ չողբայ զբեզ Նահապետս՝ Հայոց  
 աշխարհ ,  
 Ալ երանիս կարգայ բերանս հողու հաւար :  
 Ի յեզբ հողուս երդումն ուզեմ ձեզնից ո՛վ Հայք ,  
 Այս հառաչանքս ըլլան ձեր ձայն , ձեր այս փա-  
 վաք •  
 Որ հանդարտիկ ելնէ հոգեակս երթայ խաղաղ ,  
 Գերեզմանիս ծագէ արեւն Հայոց ծիծաղ • •  
 Թե չէ՛ քարչեմ զաղէկըտուր թեւիկ սըրտիս ,  
 Ի սեւ սարուին համբուրեմ՝ զհալն որ ծածկէ  
 զիս : • • •  
 Ո՛հ , թող մեռնի ձեր Նահապետ մտնու տապան ,  
 Այլ թող ելնէ ի տապանէն նոր Հայաստան :

## ՄԱՍԻՍՈՒ ՍԱՐԵՐՆ

Սւազ Մասեաց սարն ելէր բարձրացեր՝  
 Յամպերն ի վայր ձայն ահեղ արձըղէր .  
 « Ինձ մշտիկ արեք հաւասար գուք լերունք ,  
 Ես բարձր եմ քանց ձեզ , ճակատս ի յաստընէք »  
 Ես Արարատեանն եմ Սւազ Մասիս ,  
 Ազնիւ քան զամէն լերունք աշխարհիս .  
 Ատուած զիս չափեց , Ադամ նախ տեսաւ ,  
 Տապանն հիւր երեկ յիս , Կոյ յիս իջաւ .  
 Հայկն ալ յիս դարձաւ փառօք յաղթական ,  
 Զիս Ամասիայն կրնրեց ու Արայն .  
 Տիգրանն ինձ գերի բերաւ զՄփղաճակ ,  
 Հայոց թըշնամեաց բանտ եմ գըժըրդակ .  
 Արտուազդն ի խոր յիմ քարայրս ի ներս  
 Աշխարհի սպառնայ տալ թունդ եւ աւերս :  
 Յիմ կողէս իջուց Տըրդատ մեծազոր  
 Սուրբ Էջմիածնայ հիմունքն ահաւոր :  
 Զիս բոլոր սրտեն անուանք եւ փառք հին  
 Քաջաց զիւցազանց Հայոց աշխարհին .  
 Ես միշտ եմ պարծանք Հայոցս մեծաց  
 Կոքրս այլ պարծանք են ինձ անմուսաց :  
 Լէրի՛նք եւ բարձունք , ահա տեսէք զիս  
 Ես ձեր թագաւորն եմ Սւազ Մասիս :

## ՓՈՒՐ ՄԱՍԻՍՆ ԱՍԷՐ

Ես քո հարազատն եմ Սւազ եղբայր ,  
 Փառաց պարծանաց հաղորդ հաւասար .  
 Դու բարձր ես քան զիս քանց լերունք ամէն  
 Ըգբեղ չէ կոխել ըայց հրաթեւ սրբէն .  
 Քո պարծանքն են հին հաւասար սրբու .  
 Որ ողջունէ գբեղ նախ ամէն առտու :  
 Բայց մի շատ գոռար գու յամպերտ ի վայր  
 Թէ կու ճանաչես զիս քո փոքր եղբայր .  
 Չընի որ լերունքն ու բարձունքն ամէն  
 Ի քեզ շուրջ հայկն ու արնազ անեն .  
 Չընի որ տսեն , թէ մի այլ պարծիր  
 Զի հիմիկ փոխուէլ է Հայոց երկիր .  
 Թէ փառք թէ պարծանք անցել են զնայել  
 Քո բարձրը գըրխէտ ի վայր են սահել ,  
 Կըման աղբերացտ այդ ու գետեղուդ  
 Որ կողերտ ի վայր իջուն գուեղագունդ ,  
 Դաշտեր ու ձորեր անցին են երթման  
 Ու թափին ի մայր ծովն անդարձական :

## ԱՍԷՐ ՄԱՍԻՍՆ ԱՍԷՐ

Կու զընան թափին , կու մընան անանց ,  
 Ալէր կու զընան , ալէր գան յետանց :  
 Սւազ Մասիս բարձր , աղբիւրքն անրապառ  
 Փառք ու պարծանքն այլ ձրգուի գարէ գար :

ՓՈՒՔՐ ՄԱՍԻՍՆ

Ընկիր քո փառքն այլ նրման դետերուդ ,  
 Որ հետ կու երթան , հետ դան շուս ու շուս .  
 Եմ էս այլ Մասիս , էս այլ սար քաջաց ,  
 Երբեմն էի էս այլ տեղ պարծանաց .  
 Շատ փառք ունեանք , հիմիկ քնչ ունինք ,  
 Աւաղ , լուկ ամթժ , միայն նախատինք .  
 Չեմ չեմ այլ փառաց ու բաղդի նըշան  
 Այլ մեռելու թեան հայոց մահարձան .  
 Գան գընան դամանն այլք գետերուն  
 Չկատնար որդւոց՝ պարծանք հայրերուն .  
 Մի թէ կու հալէն անցեալ ամստներ  
 Չայս մէկ ճըմերանս ահաղին սառներ . . .  
 Պահ մի կու զարնէ արեւուն փայլակ ,  
 Գարձեալ կու թողու ցուրտ , գարձեալ սեւակ :

ԱՆԱԳ ՄԱՍԻՍՆ

Մի այգպէս ասեր Սարուկ , մի այգպէս  
 Մի թէ քան զԱւաղ դու լու կու տեսնես .  
 Ես իրք կու տեսնեմ՝ քանց քեզ առաւել .  
 Յերեսէն հայոց փառքն չէ կըտրել :

ՓՈՒՔՐ ՄԱՍԻՍՆ

Բարձրէն կու նայիս , բարձր կու տեսնես ,  
 Գըլուխս ի յարեւ՝ զամէնքն ըսս կարծես .  
 Յածիր ինձ նրման քիչ մ՝ այլ խոր նայէ ,  
 Բո դուրսն ձիւն , ներսն պաղուկ քար է .

Հաղար գարունք դան թէ հաղար արեւ  
 Ի ներս չէն մըսուր , անցին քո վերեւ .  
 Այսպէս սառնեղէն իրք մի զհայք պատեր ,  
 Յուրան այլ վախեմ զսիրան ի քար է փոխեր :

ԱՆԱԳ ՄԱՍԻՍՆ

Ով խոր կու նայի՝ թող պինդ խոր մըսնու ,  
 Լոկ կեղեւ տեսնել՝ չէ սուր աչերու .  
 Դու քիչ մ՝ այլ ինկր քըչիկ մ՝ այլ ցածիր ,  
 Եւ էկ իմ խորունկ ծոցիս մտեցիր .  
 Հանց տեսնուս ահեղ կրակներ ու հնոցներ  
 Որ վախուդ հալես , դաս դաշտի ընկեր .  
 Աչէ մէյմ՝ աչէ զայս վիհս ահաղին  
 Որ յատակն յանդունդ հասանէ երկրին .  
 Բերանըն ձիւնով սառով կու ծածկի  
 Կերպն զըժոխոց քու թուկ \* բորբոքի .  
 Գիտես թէ մարած է զինչ հին կանթեղ ,  
 Բայց թէ տամ քըչիկ մի քուրբուրտի դեղ \* \*  
 Յանկըսկամ դաշտերս ամէն ի ման դայ ,  
 Դու այլ հետ լերանց դողաս զինչ տըղայ .  
 Անդունան զերկրիս սիրան ի վեր բերեմ  
 Ըզմուխն ու զմիտիր ի սարերս հանեմ .  
 Սեւ պատեմ զերկիր ու սեւ դամպերն այլ ,  
 Ծուխ ու բոց անեմ , կարկրտամ \* \* \*  
 Թէ ուղենամ նոր կանգնեմ էս սարեր ,  
 ՅԱրագած գեսպան զըրկեմ բարկ քարեր .

\* Կոճղ :                      \*\* Ծճումբ :  
 \*\*\* Տեղալ կարկուտ :

Բոցեղէն գետ մ'այլ Հեա ածեմ վաղան \* \*  
 Վայ որ գէմ հանգնի, լալեմ զինչ դաղան :  
 Հանց գիտցիլը զԱւազ Մասինս սով եղբայր ,  
 Հանց ցըրտիկ ծոցեր՝ ունին սիրա հրավառ \*  
 Մ'ասեր թէ գորբա մեաւ եւ մարած  
 Չանցիլը այն ճրբագն զոր վառեց Աստուած :

ՓՈՔՐ ՄԱՍԻՍՆ

Վառել է վառել, բայց մի բարեկամար  
 Թէ բանիկս ասեմ, Աւազ իմ եղբայր \*  
 Բայց որ կու վառէ, նա ինքն մտաւ,  
 Կեանք տայ ու կ'առնու, ասաց Մարգարէ -  
 Չընի որ Հայոց արեւն այլ անցել,  
 Մեզ արեւմտքի լուսիկն է մնացել :

ԱՌԱՅ ՄԱՍԻՍՆ

Աստուած մահ չարար, կ' ասէ իմաստուն,  
 Ինքն մեռելոց այլ տայ յարութիւն \*  
 Քարէն կ'էնէ կայծ՝ ու կայծէն կայծակ,  
 Անտառ կ'այրէ այն որ կայր մոխրի տակ \*  
 Մըտած արեւ՝ նոր լուսով դայ յաստուն,  
 Մոմիկն այլ մարած՝ օր տայ գիշերուն :  
 Թէ ցուրտ թէ մարած ասես զՀայաստան՝  
 Գայ ժամ որ վառի, տայ կենաց նըշան :

\* Վաղեցուցանել :

ՓՈՔՐ ՄԱՍԻՍՆ

Ես կու վախենամ յայն սեւ անիծից  
 Որ մեր հայրապետքն էն տըւեր կըսիլի՞ծ,  
 Ներսէսք ու Մովսէսք Հայոց սեւ օրեր  
 Ացեղ են դալիս, Հայոց շատ երեր :

ԱՌԱՅ ՄԱՍԻՍՆ

Ամբըն այլ փարատին, մըր ըիկն այլ դադրի,  
 Իսկի անփոփոխ չէ բաղն աշխարհի \*  
 Չոր Աստուած կ'օրհնէ՞ մարդ չանիծաներ,  
 Չանեճճն առին լոկ ու կ'առնուն չարեր :  
 Հայք մոռցան զԱստուած ու մոռցան զիրար  
 Ահել Հովերու եղան գիրուտար \*  
 Երբ յիշեն զԱստուած, զիրար այլ յիշեն,  
 Միաբանութիւն ու սեր մէջ քաշեն,  
 Թողուն խարդախանքն ու զանձնասեր շահ  
 Ընին իրարու օգնող ու վըստահ,  
 Չանեն չար մեկուս՝ ուղեն ըլբարին,  
 Սիրով համբերեն, յուսով աշխատին \*  
 Յայնժամ ասս փոքր եղբայր, ս'նց թըւի,  
 Ընի թէ Հայոց ճրագիկն այլ վառի :

ՓՈՔՐ ՄԱՍԻՍՆ

Ընի թէ այդպէս անէ ազնի Հայոց՝  
 Նա կու հաւատամ թ' իւրեան վառի բոց \*  
 Կու հաւատամ երբ սիրոք դան ի բարին

Ի մեզ այլ գառնայ մեր պարճանքն հին :  
Այլ էրբ ամ ընի որ վտան սրբուեր ,  
Ե՛րբ ամ աեսնունք զայն երջանիկ օրեր :

ԱՌԱԳ ՄԱՍԻՍՆ

Ինձ մըտիկ արէք լերունքրտ հաւասար .  
Հանց գիտացիր դու այլ իմ փոքր եղբայր .  
Երբ յեա գարերու առաջին անգամ  
Ես Աւագ Մասիս ներսուց որոտամ ,  
Կանչեմ ու շնչեմ արձակեմ ծուխ բոց  
Մասանեցընեմ զԱրարտան Հայոց ,  
Այս ընի նըշան Հայոց աշխարհին  
Թէ գայ ժամանակ որ գան փառքն այլ հին .  
Բայց միայն սիրով հանդարտ ու խելօք  
Ջանք դրնեն բարւոյն ու ջընին անհոգ :

ՓՈՒՔՐ ՄԱՍԻՍՆ

Կացէք մեզ վըկայ լերունք դուք հաւասար ,  
Մեծ խոտամունք երեա Աւագ Մասեաց սար .  
Երբ շարժի Աւագ շնչէ ծուխ ու բոց  
Նըշան է բարւոյ աշխարհին Հայոց :

ԱՌԱԳ ՈՒ ՓՈՒՔՐ ՄԱՍԻՍՆ

Բայց միայն սիրով հանդարտ ու խելօք  
Ջանք դրնեն բարւոյն ու ջընին անհոգ :

ՆԱՀԱՊԵՏՆ ԵՅԼ ԵՍՍԱՅ

Շարժիր հա՛ շարժիր Աւագըդ Մասիս  
Արճան պարճանաց Հայոց աշխարհիս .  
Շնչէ հա՛ շնչէ ծըխիկ ծիրանի  
Որ քո մանկըտեացըդ նըշան ընի : . . .  
Ահա շարժեցաւ Աւագըն Մասիս  
Արճան պարճանաց Հայոց աշխարհիս .  
Ահա շարժեցան գաշտք Արարտայ .  
Դուք այլ շարժեցէք մանկըտիք Հայրիայ :  
Ահա շնչեցաւ ծուխըն ծիրանի .  
Դուք այլ շնչեցէք հոգի հայկազնի .  
Բայց միայն սիրով հանդարտ ու խելօք  
Ջանք դրէք բարւոյն , ու ջընիք անհոգ :  
Շարժիր ա՛հ շարժիր դուն այլ Նահապետ ,  
Մասեաց սարերուն շնչիկին առ մէկ հեա :  
Ահա շարժեցաւ ծեր Նահապետն այլ .  
Ո՛վ դեպ ի Մասիս իւր հեա կ՛առնոււ քայլ :

ՀՐԱՉԴԱՆ

Հրազդան, գետակդ իմ հայրենի  
 Հրազդան, ջրբիկդ իմ անուշիկ,  
 Ահա թողել զհողն օտարի  
 Բարեկենս հասել եմ պանդրխտիկ .  
 Այ Հրազդան, այ ջուրք հայրենիք  
 Այ ափունք, յէր լայք լռիկ :  
 Ես ձեր գրացնակն եմ, չէք ճանչել,  
 Սիրտս ըզձեզ չէ մոռցել խակի .  
 Դուք կարկըջիկդ էր եք մոռցել,  
 Ծիծղուն երեսդ էր սուգ ունի :  
 Այ Հրազդան, այ ջուրք հայրենիք,  
 Այ ափունք, յէր լայք լռիկ :  
 Վա՛հ, մեր կանաչ անտառիկս ո՛ւր,  
 Ո՛ւր տաղարեկս, ո՛ւր մեր նըչիս,  
 Հողըն եղան թէ ծովուն կուր .  
 Ո՛ւր մեր սընակն, ո՛ւր մեր այգիս .  
 Այ Հրազդան, այ ջուրք հայրենիք,  
 Այ ափունք, յէր լայք լռիկ :  
 Ո՛ւր ես աչեցրս լոյս խանտուկ .  
 Իմ ընկերներն ո՛ւր են Հրազդան .  
 Մի՛թէ Պարսիկն առաւ գերուկ,  
 Մի՛թէ ամէնքն ի հո՞ղ գարձան .  
 Այ Հրազդան, այ ջուրք հայրենիք,  
 Այ ափունք, էր լայք լռիկ :

Ա՛հ, անցուգնաց եղել ամեն .  
 Ա՛հ, անցուգնաց է հայաստան .  
 Զիս անմեկիկ թողած աստէն  
 Հետ անցնիս գնաս գունն այլ Հրազդան . . .  
 Անցն՛ր գընա ջրբիկ հայրենի  
 Արտաունք հերիք են Բարբեկի :

ՇՈՒՇՍՆՆ

Շ Ա Ի Ա Ր Շ Ա Ն Ա Յ

Վուսանք Հայոց, նոր շուշան  
 Տեսէք ի դաշտ Շաւարշան :  
 Պայծառ սրտակեր կուսանաց  
 Հայոց պրտակ պարծանաց  
 Ճակասն ի քօղ խորտակի \*,  
 Յանաձ ի հով խոպոպէք,  
 Տատրակ տոտամբ \*\* մանարուքայլ  
 Ման գայ ի դաշտ ցօղափայլ -  
 Մեղըր կաթէ շրժներուն  
 Փայլըրան աչքըն սիրուն :  
 Վուսանք Հայոց, նոր շուշան  
 Տեսէք ի դաշտ Շաւարշան :  
 Հիւսիսային մեր աստղիկ  
 Հայաստանեայց գեղեցիկ  
 Արենըմանն հայելի,  
 Աբբայդատրիկ նազելի  
 Միրասընունդըն Սանդուխտ,  
 Որում արեւ ելքն ու մուտ՝  
 Փափագէին սրտահառակ,  
 Հարսն է ելեր շորհաշուք -  
 Վուսանք Հայոց նոր շուշան,  
 Տեսէք ի դաշտ Շաւարշան :

\* Գեղեցիկ :

\*\* Տատրականման սովեք :

Քանց զարուեսակ սպալըրն  
 Ի մէջ մանարիկ ամպերուն,  
 Քանց վարդենի արեւակ  
 Ի խնծորի տերեւակ,  
 Քանց Երասխայ նունուփար  
 Գլխիկն ի ցօղ շարուշար,  
 Քանց զամէնն այլ գեղեցիկ  
 Կազն Սանդուխտըն բամբուշիկ :  
 Վուսանք Հայոց, նոր շուշան  
 Տեսէք ի դաշտ Շաւարշան :  
 Սխարտակ սառերն յայնոր անս  
 Հաղն լինին կարմրերես -  
 Ծառք ու ծաղկունք ասն պրպրուկ \*,  
 Խօսի ամէն պրպրուկ -  
 Նարկիղ՝ աչեր բիւր հանէ  
 Ուր որ Սանդուխտ անցանէ -  
 Յայնոր շրնէն հաւասար  
 Ծածկին ծաղկով ձոր ու սար :  
 Վուսանք Հայոց, նոր շուշան  
 Տեսէք ի դաշտ Շաւարշան :  
 Բարձրապրտակ ճակասներ  
 Հողու հաւասար են եկեր -  
 Ոսկի գոհար տեղ ցանաձ  
 Չորն են լերին հասուցաձ  
 Եւ մարգարտէ բարկ աւաղ,  
 Ուր որ անցին հեղանաղ  
 Հայոց օրսորդըն Սանդուխտ՝  
 Տոտանց հեակին \*\* գան ի յուխտ :

\* Բողբոջ :

\*\* Հեռք սովեք :



Կուսանք Հայոց, նոր շուշան  
 Տեսէք ի դաշտ Շաւարշան :  
 Թագաւորորդի կարել՞նէր  
 Ընդ դարպասներ գուրս ընկեր ,  
 Ի յԱլանաց մինչ Պարսիկ  
 Մինչ ի Հոռով՝ մինչ ի Հընդիկ  
 Բերանաբաց կու նային ,  
 Երնեկ տալով փեսային  
 Որ զօրիորդն այն Հայոց  
 Յիւրըն տանի տուն եւ ծոց :  
 Կուսանք Հայոց, նոր շուշան  
 Տեսէք ի դաշտ Շաւարշան :  
 Բայց Սանդրխաոյ արժանի  
 Չրկայ մին տեղ արքունի .  
 Յայնոր աչացըն կամար  
 Յած գայ երկիրս ու խոնարհ .  
 Երկինքն ստէ , իմ դահի  
 Սանդուխտ պիտէր թագուհի .  
 Ծով՝ իմ ծրփանցըս ծիրան՝  
 Սանդուխտ ստէ տայր հրաման :  
 Կուսանք Հայոց, նոր շուշան  
 Տեսէք ի դաշտ Շաւարշան :  
 Բայց մեծ մի կայ քան զերկիր ,  
 Լայն՝ քանց ծովուն ծրփան ծիր ,  
 Եւ քան զերկին բարձր անհուն ,  
 Պայծառ քանց ըստ արեւուն .  
 Կայ մին ահեղ թագաւոր  
 Որում՝ չրկայ չափ սինոս \* .

\* Սահման :

Այն , եւ միայն այն պիտի  
 Փեայ կուսին Սանդրխաոյ :  
 Կուսանք Հայոց, նոր շուշան  
 Տեսէք ի դաշտ Շաւարշան :  
 Իւր ըստ դարպասն է պատրաստ  
 Կարծիք կանոց առադաստ ,  
 Եւ աստղազարդ կապուտակ  
 Տատրակ տոտանցն է յատակ .  
 Ճապուկ ճորտերն են հրեղէն ,  
 Ուր որ նային կայծ թափեն .  
 Ինչ որ խօսին՝ երգ է այն ,  
 Խնտում ու սէր ամենայն .  
 Կուսանք Հայոց, նոր շուշան  
 Տեսէք ի դաշտ Շաւարշան :  
 Ի Սանիրայ սուրբ սարէն \*  
 Փուլայ փայեկին \*\* թագէն ,  
 Երկնախօսիկ փեսաւէր  
 Օրիորդին տայ հրաւէր .  
 «Տէրն այն երկնուց եւ երկրի  
 Չօր պաշտէ քս մեծ քեռի \*\*\*  
 Սիրեց ըզբեզ սրբիկ կոյս .  
 Ե՛կ հարսնացիր ի Քրիստոս » :  
 Կուսանք Հայոց, նոր շուշան  
 Տեսէք ի դաշտ Շաւարշան :  
 Սանդուխտ երաւ դարպասէն .  
 Եզբեց Հայոց տունն ամեն :  
 Սանսարուկ Հայրն որ ըսեց

\* Սանիր Պաղեստինոյ, Հայրենիք թագէի առարկելոյ :

\*\* Կարապետ. յառաջին թայ :

\*\*\* Արդար թագաւոր :

Յոսիի թաղտէն \* վայր վաղեց .  
 « Սանդուխա , սիրուն իմ դաարիկ .  
 Ուրանան դու զքո հայրիկ .  
 Ուրանան դուն զԱնասիտ ,  
 Պաշտեն դաստուածն Տըրէիդ :  
 « Աչացքս ըյս ոսկեթել ,  
 Աչքս արտսունք դեռ չէր կաթել .  
 Քեզ համար՝ դճատր աննրման  
 Գեաեր յաչերս ի վայր դան . . .  
 Սանդուխա , ուղէ ինչ կ'ուզես ,  
 Արամադդան , քեզ տամ ես .  
 Թէ հայաստանս է սըղտիկ՝  
 Չէնքս ու զօրքերս են հերիք .  
 « Հրամէ գաորիկ իմ աղուօր ,  
 Հայրիկդ ըլլայ քեզ զինուօր .  
 Անուամ աղեղս ու երթամ՝  
 Բոյրը աշխարհս քեզ որսամ .  
 Չխաբանն \*\* ուղես թէ զԱեսար \*\*\*  
 Բանեմ բերեմ քեզ հաւսար .  
 Թէ ծովուն մէջն ուղենաս  
 Բիւրեղ կանգնեմ քեզ գարգաս :  
 « Սանդուխա , քու հայր քու գերի ,  
 Լուկ ի հրէէդ կայ հեռի .  
 Լըսէ ինձ դուստր իմաստուն  
 Լճոս իմ աչացս արեւուն  
 Օտար կըրօնք մի սաշտեր  
 Քու հօր գլխու սեւ մ' ուղեր .

\* Գաս :

\*\* Կայր Հոօվմայ :

\*\*\* Հննայ թագաւորն :

Սանդուխա դաորիկ իմ սիրուն  
 Ողորմէ հօրք աչերուն » :  
 Կոյսն կեցեր լուս յուշիկ  
 Հապա հառչեց անուշիկ .  
 « Հայր , քանց ըզքեզ սիրելի  
 Չըկայր քրիկ մ'ինձ յերկրի .  
 Բայց երբ զԱստուածն իմ զիտայ ,  
 Սէր՝ քան զամէն մեծ ճանչցայ :  
 Պաշտէ զԱստուած քո քեռուն ,  
 Հապա չերթամ ես հեռուն :  
 « Ամ \* թէ ատես դու զՅիսուս  
 Որ կեանք բերաւ մեր հոգուս ,  
 Թէ զիս չուզես բրիստունեայ .  
 Թէ այլ խօսիս զԱնահայ ,  
 Սանդուխա այլ չէ քո գաորիկ ,  
 Սանսարուկ չէ իմ հայրիկ .  
 Յիսուս՝ իմ հայր իմ փեսայ .  
 Այս իմ վերջին խօսքն ըլլայ » :  
 Չայս վերջին խօսքն երբ լուսեց  
 Սանսարուկ զէմբըն ծածկեց .  
 Փերթ մի փրթմաւ ի սըրաէն  
 Եւ հեռացաւ Սանդուխան .  
 Կանչեց նրման առիւծու  
 Երգուաւ լուսնի ու արեւու .  
 Չէտ ըղկայծակ սեւ ամպուն  
 Բերնէն փրչեց բօթ մահուն :  
 Դողաց սարսեց հայաստան .  
 Սանդուխա վաղեց ի զընդան .

\* Բայց :

Կարծրը կոճղիկն բրաւ դահ ,  
 Զարդերն ամէն վայրն մահ ,  
 Կուսահան քօղն սեւակ  
 Սխալտակ ճակատն վայրէր թափ .  
 Բիւրեղ բազկացն ապրանջան  
 Պոյվատ շրջթայք շրտնջան :  
 Սուրբ առաքեալն Հայոց լայր .  
 Կապից կուսին սրագիկ տայր .  
 Երկուսն եկած միաբան  
 Փրկչին յերկինք փառք կու տան .  
 Զայն Սանդրխտն շարժէր սիրտ  
 Հայք թողուին զՄասնիտ .  
 Քրնար քրքրին մընայր մունչ ,  
 Լըսէր սաղմոս հոգեշունչ :  
 Կուսանք Հայոց , նոր շուշան  
 Տեսէք ի դաշտ Էաւարշան :  
 Ահա ելէր կոյսն Հայոց  
 Փրկչին երթայ հարան ի ծոց .  
 Զէտ բարկ արեւ յարշարոյս  
 Բեհեղաղարդ սուրբն կոյս  
 Կանգնէր սոյժատ ի զմայց  
 Հայոց հազար բիւր զօրաց .  
 Գեախն թընդայր ի հիմանց .  
 Երկինք շարժէր ի նախանձ :  
 Կուսանք Հայոց , նոր շուշան  
 Տեսէք ի դաշտ Էաւարշան :  
 Սանաարկից սեւ հրաման  
 Հնոցի ծրխոյն գայր նրման  
 Կըծէր աչաց բարկ արտառնք ,  
 Լային կուսանք եւ հարսուռք .

Ի մօր դրրիկն տրդայն լայր ,  
 Մայրն լալով յետ դառնայր .  
 Կըարե՞՞ տրդայ միաբան ,  
 Եւ լայր ամէն Հայաստան :  
 Կուսանք Հայոց , նոր շուշան  
 Տեսէք ի դաշտ Էաւարշան :  
 Ամէնք կանչեն , « Թաղուհի  
 Ողորմէ Հայ աշխարհի .  
 Քո թագաւոր Տօրդ արեւուն ,  
 Քո աննըման լուսերուն .  
 Ազրիւր Սանդուխտ , մի մեռնիր  
 Սի բերեր մուծ մեր երկիր .  
 Սանդուխտ , ամէնա քեզ դերի  
 Ողորմէ Հայ աշխարհի » :  
 Սանդուխտ երկինից լըսէ լոկ  
 Եւ լացերուն կայ անհոգ :  
 Լալով զինուորն յառաջ գան ,  
 Զկնքերն ի յուս կու գողան :  
 Ըստ լարեցան աղեղունք ,  
 Ըստ թափեցան դիակունք .  
 Բայց չըզբաւ մահ սեղի  
 Ի գեղեցիկ Սանդրխտի :  
 Կուսանք Հայոց , նոր շուշան  
 Տեսէք ի դաշտ Էաւարշան :  
 Կրման ծաղկանց կարկասհար  
 Երբ նա գիտեց զօրս հազար  
 Զիրոյր զարկած եւ ընկած  
 Ու զմահն իրմէ սարսափած ,  
 Ըարժեց զճախատն սիրուն  
 Արտառնք ամեց աչերուն ,

Եւ հառաւեց առ Յիսուս ,  
 « Տէր իմ , հրաման սուր հոգուս » :  
 Երեսասարդ մի յանկարծ  
 Կայծաղնաթափ սուր շողաց •  
 Ուակից արդեօք էր եկեր •  
 Դահլիճ , թէ տաք սիրոյ տէր •  
 Երկինք՝ թէ հայրն էր զըրկած •  
 Ոչ ոք զիտէ զայս զիսուած :  
 Սուրբն շողաց ու զարկաւ •••  
 Շուշան Սանդուխտ՝ վարդ ընկաւ :  
 Սուրբն շողաց մէկ մի փայլ  
 Սանդուխտ ծաթեց իրեք այլ •  
 Կարմիր կաթեր ի կըրծքէն  
 Վարդեր բուսան չորք զիէն •  
 Աչքըն կոկոն մանուշակ ,  
 Ամ՝ ի՛նչ նայուածք անուշակ •  
 Ափկիցք շուշանք կիսափակ •  
 Սէջ շրթնեբուն ի՛նչ կըրակ :  
 Ի ծայր լերին Սանատրուկ \*  
 Հրեղէն կառքեր տեսնէք դուք •  
 Հոն երկնաւոր թաղարն այն  
 Հոն Սանդրխտոյ է փեսայն •  
 Զօրիորդն հայ աշխարհի  
 Նախ քան զամէն վկայուհի  
 Ընտրեց իւր հարսըն կարմիր  
 Հանեց թըուօց յերկնոց ծիր :  
 Կուսանք Հայոց , նոր շուշան  
 Տեսէք ի դաշտ Շաւարշան :

\* Կեան յանուն արքային :

Թերթեր ճերմակ ու կարմիր  
 Երկեր երկինքն են ւ երկիր •  
 Ելէք կուսանք ժողովեցէք  
 Վարդն ու շուշան զուգեցէք •  
 Դըրէք դաւար զայն մարմին  
 Թաղէի հետ ի շերմին :  
 Սանդուխտ , Հայոց կոյս քընքոյշ  
 Հանգէ ի հոգ այս անոյշ •  
 Կուսանք Հայոց քեղ շուշան  
 Բերեն ի դաշտ Շաւարշան :  
 Ո՛հ , թէ քանի՛ երջանիկ  
 Է հայաստան հայրենիք՝  
 Որ հանց բերաւ բոյս կուսան  
 Ուակից հազար կոյսք բուսան :  
 Երկինք կապուին երկրի հետ •  
 Քեղ ի՛նչ երգէ Կահապետ ,  
 Սանդուխտ , անմահ թաղուհի  
 Իմ հայաստան աշխարհի :  
 Կուսանք Հայոց , նոր շուշան  
 Բերէք ի դաշտ Շաւարշան :

ՊԼՊՈՒՂՆ

Ա Ի Ա Ր Ա Յ Ր Ի

Ո՞նց դաս իմ լուսնակ հեղիկ ու հանդարտ  
 Համասփիւռ լուսովից ի լեռ, ձոր եւ արտ,  
 Եւ ի Նահապետս որ մըտօք մոլոր  
 Գիշերաժամիկ ժուռ գամ յԱւարայր,  
 Ուր քաջ ու աննրման իմ հաբք հայկազունք  
 Բնկան զէտ հըսկայ, ելան զէտ զուարթունք  
 Միթէ գան սրբուել ոսկերաց սրբօց  
 Ձիւնափայլ ամուէդ ոսկեթէւ ծածկոց,  
 Թէ ճերմակ ճակատիդ թէպէտ եւ սլայծառ  
 Քաջացս արեննէն ուղէս կարմիր վառ  
 Թէ լըռիկ մընջիկ անիխ սակաւին  
 Թէ ինչպէս ընկաւ Վարդանն ահադին,  
 Մահու սեւ ըստուերն ի սիրտ թըշնամեաց,  
 Զհոգին ձրգելով յերկին առ Աստուած:  
 Դու այլ սկ Տըզմուտ արուած ու արեւնուտ  
 Որ դաս կամկար լաս ի մէջ շամբերուտ  
 Եւ հովիկդ որ դաս ի Մահուայ քարէն  
 Կամ ի ծեր Մասեաց սրբազան սարէն,  
 Դու այլ ինձ նըման դողդող եւ երեր  
 Թոյլ թեւօք անցնիս սարեր ու ձորեր,  
 Անտառէ անտառ տերեւէ տերեւ  
 Կոծկոծելով դաս ի դաշտիս վերեւ,

Զայս մտած շքնէս վերջին հատաչանք  
 Ձրեկ է հայոց սրբոնց արձագանդք:  
 Ո՞հ գու բարեկամ այրած սըրտերու,  
 Խօսնակ գիշերոյ, հոգեակ վարդերու,  
 Երգէ պըլլուլիկդ երգէ ի սարէդ,  
 Զանմահ քաջքն հայոց երգէ հոգւոյս հեռ  
 Թագէի վանուց ձէնիկդ ինձ դիտաւ,  
 Սըրտիկս՝ որ ի խաչն էր կիսվ թոճառ առաւ  
 Ի խաչին թեւէն թըռայ ու հասայ  
 Գըտայ գքեզ ի դաշտ քաջին Վարդանայ:  
 Պըլլու՛ւլ, քեզ համար մեր հարքն ասացին  
 Թէ չէ հաւ պըլլու՛ւլ մեր Աւարայրին,  
 Եղիշեայ հոգեակն է քաղցրազրուցիկ  
 Որ զՎարդան ի վարդն տեսնու կարմրիկ  
 Ձըմեան յանապատ կու գնայ կայ ի լայ,  
 ՅԱրտազ գայ դգարունն ի թուրի վարդենեայ,  
 Երգել ու կանչել յեղիշէին ձայն  
 Թէ սպաստախանիկ մ'արդեօք տայ Վարդան:  
 Թէ կիսահոգի պըլլուլիս նըման  
 Ձէնիկս համին ձեզ որդիք Թորդոմեան,  
 Որդիք, որոնց հաբք քաջք ու առաքինիք  
 Լըցուցին դգաշտեր գըրքեր ու գերիկիք,  
 Թէ ի սրտի ծովդ կաթիլ մ'արունիկ  
 Կայ հայկայ՝ ղբերքն կամ ի Պահլուխի,  
 Թէ զփառքն հայրենեաց ձեզ այլ գըրէք վառ,  
 Հեռ Կահապետիս ելէք ի յԱրտազ:

U.

Այն գիշերն ստեղ էր գիշերավար  
 Լուսնակն յամսի տակ բացխրիիկ խաղալը •  
 Հովն շքրջատիկ կախ թեւօքն յանտառ  
 Օդոց եւ ծառոց հանդիստ կու կարգայր :  
 ԶԱւարայրի մուժն ու կանաչ ծոցիկ  
 Ծայրէ ծայր ճրղքած Տրղմունան հանդարտիկ ,  
 Մեռաքսանրման անձայն խառուտիկ  
 Կու թաւէցընէր հաղար բիւր ալքը •  
 Ի յաստից ու անտից կան երկու բանակը  
 Իբրեւ անկրօն ընկած մեռուսակ •  
 Յերկուցըն միջոց բարձրացած լուսնակ  
 Կու թըւի վահան զօրաց պահպանակ •  
 Ոչ մէկ հրնչի ձայն , ոչ մէկ շարժի զէն •  
 Կարծես յաղթըւեր ամէնքն ի քընէն ,  
 Հազիւ հազ ձխանքըն թօթուէն գոփեն ,  
 Դողան պահպանքն ի կաշկվառնէն :  
 Մէկ գունդն է Պարսից հաղար ու հաղար  
 Որոնց վըբայ ամպ տարածի խաւար •  
 Մէկ գունդն այլ Հայոց է թըւով ցանցառ ,  
 Լուսնի լուսով զէնքըն փայլին վառ վառ •  
 Ծոցերն ուռուցիկ , թեւերն քաջոյժ  
 Զինչ հանգչած բաղբը՝ կան թեւօք աշխայժ •  
 Զինչ ծով ահազին որ աւելօքըն խոժ  
 Յանկարծ սարսեցնէ զափուշքըն վառուժ :  
 Բայց յայնչափ քաջաց քան զամէնքըն քաջ  
 Մէկիկ մի արթուն կայ զընդին յառաջ •

Թեւի տակն առած նիզակ ծայրախաչ ,  
 Չեղքն ի ճակտին , ոչ ձախ հայի ոչ աջ :  
 Ընդ խորանաձեւ լուսնին ճառագայլթ  
 Զեռանդուն բանակն զիտէ հանդարտ •  
 Զինչ մայր գարաղի որ գիշերն ընդհատ  
 Դիտէ զբուն տղային կարմրիկ ու զըւարթ :  
 Ըղլաթսուն հաղար դազբած քաջերուն  
 Սանձրն ձեռք առած՝ վաղուան սուրտուն ,  
 Յաղթութեան անիւնն սահեցնէրուն  
 Հընարք մրտածէ ու զՀայոց անուն :  
 Ի բոլոր աղբէն առաջնորդ ընարած  
 Յաջորդ քաջամարտ ըսպարապետաց ,  
 Պատասխանատու աղբին Հայկազանց ,  
 Զանոր բաղդըն յինքըն տեսնու կախուած •  
 Յխուն յաղթանակը շահած քրքրանքով  
 Անցնին ի մրտացըն մէկըզմէկով ,  
 Դէմ ինքեան կանգնին իւր փառքըն կարգով ,  
 Սիրան տանու եւ տայ մեծամեծ թընդով :  
 Երկայն նիզակոյն յանկարծ վաղէ դուրս  
 Զինչ կրակէ վըշապն ի յերկնից մըռուրս •  
 Ման դայ ու փըջէ զընդին Հայոց հուր ,  
 Վարդանն այն վառած ի սեր եւ ի սուր :  
 Նայի ընդ երկիր , նայի ընդ երկին ,  
 Չափէ չափքոփէ զբանակքն երկղբին ,  
 Քաշէ զմէկն ի վեր ի ծոց Գրիգորին ,  
 Թափէ զմէկն ի վայր սանդարավան •  
 Ի մեծ բարկութիւն կամ ի տարակոյս  
 Զաչկունքըն շքրջէ ի յայն եւ յայն կոյս •

\* Մեր Յարգողնն :

Կանչէ ի խորոց , թէ ո՞վ իմ հօգուոյս  
 Տացէ պատասխան յետին հարցուածոյս : ..  
 Բայց ի՛նչ , բայց ի՛նչ այդ տեղիւ յանկասկած  
 Քաջին Վարդանայ ելնէ ընդ առաջ .  
 Ի փոքրիկ բըլլակ դետոյն եզերաց  
 Հուր բոց վերանայ ի ծոց ելծերաց :  
 Կայծք անձրեւանման չորս զին հաւասար  
 Բոցեր յաջ ու ձախ , մէջն ըլլա պայծառ ,  
 Եւ ի մէջ լուսոյն ձերմակ վեհափառ  
 Մեկ մի երեւի տեսօք յոյժ անձառ .  
 Յուներն քաշեր սուր կամար կապեր  
 Հնոցի պէս կրակաւան զոյժ ահեղ աչեր .  
 Ամպի պէս լայնած երկայն բաղկըներ ,  
 Կարծես թէ հրեշտակ բաղդին է իջեր ,  
 Իջեր ի բանակն եւ ահեղ կըշուօք  
 Կըշուէ զՊարան ու Հայ , զբրէ աստեղօք .  
 Դառնայ ի Պարսիկն հայի արհաւիրօք ,  
 Դառնայ ի Հայն սեր կաթէ արտասուօք :  
 Ի բլուրն ի վեր քաջըն թրուցի Վարդան ,  
 Անպխտ անկասկած ձայնէ սիրական .  
 « Կոր Մովսէս , Կերսէս , քաջ մեր Մատաթեան » :  
 Ասա զինչ երկինք զըրեն բաղդ վաղուան » :  
 Յայնժամ բոցափայլն երեց Վանանբայ  
 Չաջն հրեղէն ձրգէ ի ձախտ նորայ ,  
 Կընքէ , ու զերկինքն առջեւն բանայ ,  
 Հայոց բանակին մասն հին երեւնայ :  
 Տեսաւ , հիացաւ Վարդանն ու կանչեց .  
 « Հայր , իսկի տեսիլդ մեզ չըստեց .  
 Վաղիւ տի կըտուինք քաջութեամբըս մեծ ,  
 Երիկունն հանդէմք ի դարպասն աստեղ » :

Ասաց ու առաւ զորհնութիւն ծերոյն ,  
 Թօթիկեց զաջն հրաթախ , փրկթաւ ի բըլլոյն .  
 Ըօժ տայր նիկակին փութայր դայր խակոյն ,  
 Փողեր ու կանգներ ըզգուճք քաջերուն :

Բ

Դեռ չէ արեգակն ըզգուճիւրն հանել ,  
 Երկու բանակներն ըզգաշուն են բըռնել .  
 Չէա ջուխտակ բերդեր դեմադեմ կանգնել  
 Յերար ուզեն դա՛լ փշթել ու փըշթել :  
 Կախանձափրփուր զբժոխոց սասան ,  
 ԸզՇապուհ ի ծոցն առած ու զՄասան .  
 Հոն թափել ուղէ օճու սէս դաժան  
 Սեւ ատելութիւն երկհարիւր տարուան :  
 Չերկհարիւր տարուան վըճ ահեղ ու մեծ  
 Հայաստանն եկել է խնդրել անկէց .  
 Խտարով ու Տըգաս , Արտաշէան այլ դէջ ,  
 Հայրենի պարտուց պահանջն ըզլեւը :  
 Ի մէկ մի վայրկեան ամենքն են պատրաստ ,  
 Փող կարծեն ըզձայն միմեանց անհանդարտ . . .  
 Ահա թոան գային զարնուեցան հըպարտ .  
 Չինչ երկու միշտաբ մեծ էրարասպատ .  
 Մեկ շարժուին ահեղ , մեկ ահեղ հոսան  
 ՉԱրտազն է բըռնէր թնդմամբ կայծական .  
 Ոչ ի պատերազմն թըշնամութեան  
 Այլ զտարեբն ամէն կարծես աւրել գան .  
 Տրոխէ տըրնուորն ու գաշարն թընտայ ,  
 Հեծելն դետին մոռցել յօդ զընայ .

Օղն առանց հողի զէնքերով ծրփայ,  
 Հողիսն հետ ձայնե, երկինք կու գուայ .  
 Հրգեհն է բրնձեր շարակի երթայ,  
 Գիւցազունքն այրե հողու հաւասար տայ,  
 Բոցեղէն ալէք զօրացնն ճօճայ  
 Դեմ այն բրնձուլթեանն ո՞վ կու դիմանայ .  
 Զինչ յաշխարհաւեր կրակէ լափիլզող  
 Յանկարծ կայծ ո՞վ ի վեր ցատքէ յահ ու գող,  
 Կամ ի գաշտաձեւ բոցէն գայ խանձող  
 Յանկարծ երեւցող ու յանկարծ ծածկող .  
 Հանց խառնն խրմբէն քաջ մի հեծեււոր  
 Բարձր երիվարի վերայ կանգնաւոր՝  
 Վեր վեր վազելով զինուրբ ճօճաւոր  
 Կետուի թըշնամեաց մէջ քանց գունտ հրաւոր .  
 Պրզննձ գըլխանոցն ու զրհհ երկրլիթի  
 Արեւուն շողէն կու փայլլալկրափի,  
 Ճերմակ փետուրներն ի սաղաւարափ .  
 Կարծես թըռոցներն ըզքաջ զայն մանկափի .  
 Նայիս սարապիւած սըրտիւ ալէկոծ  
 Թէ ո՞վ այն յանդուզն է քաջաց Հայոց,  
 Արդեօք Արշաւիրն յաղթող սուր թռչնոց  
 Թէ հրկայյաձեւ խորէննն մարտիոց .  
 ԶԱրտակ ու զՎահան պահ մի կու տեսնես  
 Իբր անխոնջ դարբինք վազեն հնոցն ի ներս .  
 Մեծամեծ ճայթմունք, տապըլմունք լըսես,  
 Ըզգէն ու զինուոր փրոտուած կու գրանես :  
 Երթալով երթան ձայնքնն զօրանան,  
 Շեշտակի շաչիւնք լըսուին աղեղան,  
 Ահեղ կոփկոփիւնք վահան ընդ վահան,  
 Կետք նիզակք թափին անձրեւի նրման .

Բըսաձեւ փրկաց ոտքերուն գորգափի՝  
 Աշտարակազարգ բըրգօք բերդակալ՝  
 Գաշտաց ու լեբանց արկանեն սարապի,  
 Երկիրն ի հիմանց տայ գըրդօք ու կափկափ .  
 Այլ քաջաձի Հայն անվախ համարձակ  
 Անձոռնի մարմնոցն ելնէ հակառակ .  
 Կորդուացին կռուէ ձողաչափ նիլակ,  
 Լեռան պէս փըլլի փիղն ու Պարսն յեր տակ .  
 Արձագանդք ամեն ձայն վերացնեն  
 Բանակներն ի հետ կրկնեն ու սարսեն,  
 Շըփոթ եւ աղմուկ նոր ախրէ անգէն .  
 Պատառտալին դուռքք յերար անոյնէլին :  
 Պարսից բանակէն հազարք են փրուած,  
 Ի Հայոց բանակէն հարիւր է ընկած .  
 Ձիակոխ ծաղկունքն յարին թաթաւած  
 Գըրգռեն ըզկատղած եռանդն զօրաց :  
 Ի Տըզմուտ գետոյն եզըբքնն պըղտոր  
 Ուր արդէն արին հեղեղ կապէ նոր,  
 Եռան ու զեռան բանակք մօտաւոր,  
 Մէկն անցնի, մէկն այլ չըլթողու անցուոր :  
 Բայց քաջ Գարեգին չընտրէ ջուր ցամաք,  
 Վարազդատանման ցատքէ զինչ փայլակ,  
 Զաւրի զարկածին գըլխնն իբրեւ գըլխակ  
 Ձըգէ իւր զօրաց՝ որ գան համարձակ .  
 Զէտ մըրըրկոտ ամպեր Հայք առնուն ձիան  
 Լողալով կըսուին ի դետոյն բերան,  
 Չըսան ու ծրփան, զալիքն առնուն տան,  
 Զըրով արեւնով հասնին յանդիման .  
 Ելնեն զինչ քաղցած զազան ծովային  
 Անխրափր դիմեն ում եւ պատահին ,



Ըստ զօրք զօրավարք վրեժնն ի գետին ,  
 Հեճեալ հեռեալի միտանդ պառկին .  
 Մըմբունս Պարսիկք զինչ ալիք վարած ,  
 Յետ գառնանն ի ձախ թեւ Հայոց քաջաց ,  
 Բնկնին բարկութեամբ տան ու անուռն հա-  
 Վէր ու վայր թըռչին հողիք հաղարաց : (րուած ,  
 Հոն յառաջադէմն ու քաջ Գարեգինն  
 Հայ զօրավարաց անուռ պատկ նախկին .  
 Հաղար խոցերով ի զրե՛հքս սրբոսն ,  
 Դեռ չուզեր անխոց լծուրդ լծընամսն .  
 Զհրեքերն կոտրած , մարմին կիսամեռ  
 Դեռ յուզարկաւոր հեանն ուզէ շատեր .  
 Բնկած դիականց մէջ՝ խնդրէ սուտեր ,  
 Կարծես յետ մահունն ալ կրուուիլ ուզեր :  
 Ա՛հ Գարեգին , մութ իջաւ յաշուիք խաճ .  
 Ես դեռ ձեռք շարժէ զսուրն ածել ի քարչ ,  
 Ըրունչն ի կէս վրզին կանչէ աղէխարչ ,  
 « Ե՛ղբարք մի թողուք զիս Պարսիցն այն գարչ » :  
 Յայն ձայնէն վազէն ըստաակ կայծակունք .  
 Հաւասար Գարեգինի հարազատք սիրունք .  
 Զէտ ի բարձրըր շոյն արձուիք սուրակունք  
 Պաշտպանել իջնան զլեւբեանց նոր ձագունք .  
 Աստի ու անտի կան զինչ երկու հրեշտակ ,  
 Դէմագէմ՝ վառին այսքնն կարմիրրակ ,  
 Ռոստոմ թուխաջուին եւ աղաւգիխակ ,  
 Վառնիկ վարդասէրն ու մարթով ճերմակ .  
 Մինչդեռ Գարեգին սողայ անբարբառ  
 Ընդ հողայն կրուուի մոռնալով զաշխարհ ,  
 Եղբարքն առ ոտիւք թափեն զօրս հաղար ,  
 Երգնուն հոն մեռնիլ քան թողուլ զերար :

Ո՛հ սրբապատառ վրեժմ՝ անասրան .  
 Հազիւ սուրբ երգմունքն կէլն ընդ բերան՝  
 Զուխտ մի նետ յերկնից կարծեմ՝ յանկարճ գան ,  
 Զի Պարսիկն այնքան պառույ չէր արժան .  
 Գան նետերն ու զոյգ զարնեն կարըճ՝ ուռն ,  
 Որ երկու ձեռքք կրուուէին ի բուն .  
 Զունէին վահան , բնչ պէտք քաջերուն  
 Որ միմեանց վերայ կուրծք դրբին սիրուն :  
 Եղբայր . . . կանչեցին , ճակատ ի ճակատ  
 Բնկան պատեցին զերրորդն հարազատ .  
 Երեքն այլ ի հետ բացին դաճք հանդարտ ,  
 Երեքն այլ ի հետ փակեցին զուարթ .  
 Թեւ ի թեւ ու վիզ վեղի սրբւրւած  
 Երեք կոկոն մէկ մանկաղով հրնձած ,  
 Բզկարմրիկ արեւնրն վարդ տարածած  
 Անհող կու քնանան ի մէջ բանակաց .  
 Երբ հոյն հիւսիսի շնչէ յուրաբերան՝  
 Ու հետ կոճկոճեալ ընկնին վարդ շուշան ,  
 Ո՞ր ծաղիկ չուզէ վրուուիլ ի մարտի այն  
 Ուր իշխանք ծաղիկանց դեմնաւտարած կան :  
 Ա՛հ . յայնժամ հատան քաղցր արեւքն Հայոց ,  
 Վարդեյան կրակէ շնչէր յերանձոց .  
 Վասնն քո ընկան աշխարհ իմ Հայոց ,  
 Վարընձք անըմանք վե՛հք հիւսիսայնոց .  
 Ոչ որ ի թիկանց էառ ըզհարուած ,  
 Ամենքն ըզՊարսիկն ունին իւրեանց բարձ .  
 Վարդապոյն արեւնք սրտերնէն բղկած  
 Ուժոյ եւ սիրոյ վրկայք անմոռաց : . . .  
 Այլ ո՞ր է Վարդան արտյեանն անյաղթ : —  
 Զինչ առիւծ ահեղ այժուց զիմամարտ

Ի թանձր անտառէ վազած անհանդարտ  
 Հազարով զրնէ զորսերն տապաստ,  
 Հանց հետ Արշաւրայ ու քաջ Հըրմայեակ  
 Ի ձախ թեւ Պարսից նետուած համարձակ,  
 Յարձըիէր կտորէր յըրուէր հասարակ,  
 Կարկառահար թափէր ըզմեծ զայն բանակ :  
 Այլ երբ տեսաւ զեւրն ըզձախ թեւաբեկ,  
 Մըռնչեց զինչ ծով, յունէր կանգնեց տեգ,  
 Փայլակնանըման հըրեց ձին հրաշեկ,  
 Քաջքն ի հետ ընկան զինչ յորձանուս գետք :  
 Աեւ զըեհօք ի սեւն հեծած երիվար  
 Գայր զինչ սաստկորոտ անդ մըրըրկավար -  
 Սուսերն ահագին զինչ կայծակ շողայր,  
 Քան զայն ահեղ մահն իսկ ոչ երեւար :  
 Զինչ հրգեհ բըռնած յանտառի ծայրէն  
 Չիղաղրի՛ մինչ փայտ չիլափե զամեն,  
 Վառուեցաւ ըզհետ թեւուն համօրէն :  
 Ըզհարուածքն համրեց Աստուած ի վերէն :  
 Անհուն հետեւակք զինչ չոր եղեգունք  
 Գետնակոխ արար ի ձիուն օտկունք :  
 Չիանք ու փըղանք զինչ մայրիք բարձունք  
 Մեկմեկէ առաջ թափին երազունք :  
 Յաջ ու ձախ զարներ փըւէր ու անցներ,  
 Զանտառ զօրքերուն յանապատ փոխէր -  
 Մինչ Պարսիկն յահէն զինչ ընել խորհէր,  
 Սուրըն վարդանայ ի մահ հրամայէր :  
 Ի փախ դարձան քաջք մընայեալ Պարսից,  
 Առ մեծ զօրավարն հաս ձայն բոթալից -  
 Գալըեցաւ Մուշկան զինչ օձ թիւնալից  
 Խաճատէր զմտանկեր երգմամբ անիծից :

Փողէր դարձըներ ըզփախուստ զօրաց,  
 Կանչէր Արաաշայ ի վերայ փըղաց :  
 « Փուժա գազաններն առ եկ ի հոս դարձ,  
 Զի վարդան մարէ զարեւ մեր Արեաց » :  
 Սարեց համօրէն բանակ սրարսկական  
 Փըղքք հեծելք զընդօքըն Մատան,  
 Թեւեւ եւ կոտորած՝ զեռ անթիւ խուժան  
 Միաբան զիմեն գէպ յարին վարդան :  
 Երկք քայլ ի յետ մէկ յառաջ քայլին,  
 Մէկ տային ու տանն հարուած սոնուին :  
 Հուրը բողբոջան հետուստ սպասեցին . . .  
 Մօտեցա՛ւ վայրկեան ահաւոր բազլին :  
 Երեւք սրարսաք գէմ քաջին կանգնել են,  
 Ռսնաւորք, հեծեալք եւ փիղք լեւնեղէն :  
 Մէկն ի մօտանց գայր, մեկայլն ի ձիէն  
 Հողպտով անցներ կրուուէր հետուէն :  
 Յետեւանց կառոզած գազանքն ահագին  
 Զանձունի քըլժերն քընթընեցնէին,  
 Բոմբիւնք ու զոռմուէր որոտանց տային,  
 Ըզբերդերն յուսոցն տատանէին :  
 Դեմ քաջին կարծեա քաղաքք եւ ամրոց  
 Զխուսած են ելեր մահ բերեր ի ծոց :  
 Ամէն Ասից ձայնք ժողովըրդոց  
 Միաբան վըրնլն ընդ զեւցալն հայոց :  
 Իսկ քաջն վարդան աչեց քաջերուն :  
 Կանգնեցաւ ի մէջ զընդիցն երկոցուն,  
 Ահեղ մի գոտաց, սարեր ձայն հառուն,  
 Հառ կապարձակիքը կանչեց մօտ ձիուն :  
 Զինչ գերանդազէն աներ չըրջանահ  
 Ման գայր ու զարներ սատ անդ սահ ընդ սահ ,

Չինչ գունան արեւու յողուն ճանապարհ  
 Չորս բոլոր սրբուէր ու տարածէր ահ .  
 Կամ զինչ լեւ հրաբուխ ի սեւ ծոցէն խոր  
 Ըզարասափ բնութեան հանէ նոգ սեւ որկոր ,  
 Բոցեղէն գեաեր վազընէ յորդոր ,  
 Բարինք կարկըտայ լնու զգալու ու ձոր .  
 Թէ ամպ թէ երկինք ճաթին ի վերէն՝  
 Ինքն ամենեւին չըզգայրի վարէն ,  
 Մինչ որ բոլոր կրակն հանէ յանդընդէն ,  
 Անթիւ մահէրով հանգչի յիւր սըրտէն .  
 Այսպէս անկումանն Հայոց զիւցաղանց  
 Կ'ամուռը ըզբետին վեճ իր հին հարանց .  
 Եւ վրկայեցին հողիք Հայկազանց  
 Թէ քաջութենէ նա չարար ինչ զանց : —  
 Արդ մինչ չորս բոլորն մարդով ընկած  
 Ըեղը շեղը ցորենոյ պէս տեսաւ հընձած ,  
 Հընձանահարի պէս զինքն այլ թաթխած  
 Մինչ ի կէս ձիոյն յարիւն կըրորձաց ,  
 Հայեցաւ յերկինք՝ տեսաւ զարեգակն  
 Որ զպիշած գեղնած օրաշուրջ գննտակն  
 Սահէր Սանատրուկ լերինն ի կըռնակ  
 Կամկար ոտօք դայր ժամին խաւարակ .  
 Բըթթեւ մի աչաց կեցաւ անըբտթ ,  
 Անկարծեղ քաղցր աչեր արւաւ յօգ .  
 Երկայն մի շնչեց հօգի երկնահոտ  
 Ատուծայ տեսայն սիրան էաւ կարօտ .  
 « Արշաւիր կանչեց , ահա ժամն եհաս .  
 Դու Հայոց շ իմ տանս առաջնորդ ըլլաս .  
 Պատմես Վահանայ զայս իմ յետին դաս .  
 Թէ դնանինքն ու զուրք հարբըզ չըմուռնաս » :

Մինչ զայս քաջն ասեր , ընկան յոտն անդէն  
 Արին այն Արտակ Պալուսնեայ աղբէն ,  
 Եւ հըսկայակերպ կորովին խորէն ,  
 Վարդան ձայնելով թըսան ի յանակնն :  
 Ձըգեց քաջերուն վրայ քաջն Վարդան  
 Ըզմակուեկածէ զիրեն մեծ վահանն ,  
 Ըզուր , սաղաւարտ ու զհամբոյր մահուան  
 Տըւաւ առ եղբայրն իւր Համադասպեան .  
 Եւ իբրեւ արծուին ի սարից քարանց  
 Սըացաւ ի գընդէ քաջանց Հայկազանց ,  
 Մեկիկ նկղակաւ ընդ Պարսից գունդն անց ,  
 Կէս էր որ թըսաւ թէ հուր փայլականց : . . .  
 Հոն ի մէջ երկուց գընդից զարհուրած  
 Ի վերայ զօրաց եւ զբաւարաց  
 Խաչածայր նկղակն ի յերկին ուղլած  
 Վարդանն Հայոց կայ հանդըստատարած :  
 Սոսկացան սրացան Պարսիկէն հասըշտաղ ,  
 Աչք քաջին սրիուէց նոցա սեւ սարասի ,  
 Գիշերրն խնեաւ իջաւ զինչ տարափ . . .  
 Լնու կացէք . . . Վարդան կայ հոս ի մըրափ . . .

Գ.

Ո՛վ էս գու՝ որ գաս շեշտ ի Եաւարչան ,  
 Թեւօք թըռչնորէն ոտիւք փայլական .  
 Գաս մօտիս մըմուռս ի դաշարն մահուան ,  
 Յաջ ու ձափ գանձաս ու կաս իբր արձան : —  
 Երկրորդ պահ էր այն ահեղ գիշերոյն .  
 Լուկ բարակ մըրմունջ զինչ ծովեղերոյն

Լըսուէր կիսամահ զորաց խոցերոյն  
 Յաւոց եւ մահուան ներգաշնակութիւն :  
 Յանկարծ քող բացաւ ըստնակն յերկրէն ,  
 Եւ սրբոտապատու ըզբուճեա համօրէն  
 Տեսաւ զինչ պատկեր սեւանըկարէն .  
 Հառաչեց ի հոն հասած Եղիշէն .  
 Եղիշէն՝ մեղու շքրթուռք , սրբոտի սէր ,  
 Որ ընդ Վարդանայ հոգևով էր կապուէր ,  
 Մինչ հասակակից առ Սահակ նստէր  
 Եւ զոյգ որդեպէս ի սրբբոյն զըզուէր :  
 Զարմանաց ձագունք , որ ի մի վանդակ  
 Միաթեւ մեծցած ի սնունդ հոգունակ ,  
 Երբ ժիր մանկութեանն բացաւ դրոնակ՝  
 Մէկն արծիւ թըռաւ , մէկայն ապանեակ .  
 Դաշտ , պատերազմ , սուր , զեհ , ձի , կրակ ու բոց՝  
 Էին սիրելէք Վարդանայ թեւոց .  
 Ընձայն անապատք , խաղաղ հովանոց  
 Այրու Եղիշեայ մասն էր ընդ զբոց .  
 Հաւելին հեզ երբեմն յարծւոյն թեւ սրանայր  
 Եւ ընդ զիւցաղնին այն զիւցաղնանայր ,  
 Երբեմն այլ արծիւն ըզթեւն ուրանայր ,  
 Զաղաւնոյն մընչնիկ լըներ՝ հեզանայր .  
 Զըզահիւս նաւակ ի քաղցր ի հովիկ  
 Զեղերբն առեր մէկն երթայր հանգարտիկ ,  
 Մէկայն ահեզ նաւ ի սլինդ պոլլատիկ  
 Ծաղրերթով խաղայր յանդուծող եւ յալլըր .  
 Եւ յլ նաւահանգիստ մէկ էր երկրցուն ,  
 Փառաց հայկազանց սրտերն էր սիրուն .  
 Մէկըն յաղթանակ կանգնել զիւր անուն ,  
 Մէկայն յաղթողաց սալ անմահութիւն :

Այսպէս երկրքն սոքա սիրելէք  
 Եղբարք անմեկն զինչ աւալ ու ալլըր .  
 Մէկըն մրտնէր , մէկըն կայր լըտիկ ,  
 Այլ սիրով տայն յիրար համբուրիկ :  
 Երբ ըզքաջութեան բացած առադաստ  
 Վարդանն յաղթութեամբ նաւէր ի ճակատ ,  
 Հայոց ւ Արմնաց վրայ համներ ըզգաստ ,  
 Կանգնէր յաղթանակ քան զտարիլըն շատ ,  
 Նաւակն Եղիշեայ ի Բիւզանդ յԱթէնս  
 Եւ յԱրքեսանդրեայ ուղղէր հեզաթեւս ,  
 Բանաւոր ծաղկանց մէջ շքրլէր թեթեւս ,  
 Ի միտք առնայր մեղր խնաստից պէտպէս .  
 Երբ դարձաւ յուսմանն ու տեսաւ զՎարդան ,  
 Զիւր թողած կորիւնն հիմ՝ յառիւծ նըման ,  
 Բնծայեց ըզմեղն ի քաջին բերան ,  
 Դրան երէց եղաւ տանըն Մանգունեան .  
 Անբաժ ի քաջէն շքրլէր Եղիշէ ,  
 Ի գաշառ այլ երթայր՝ ուր զէնք հրաւիրէ ,  
 Ի վրանն կարգայր ըզՏէր ի յերկնէ՝  
 Որ ըզսիրելին յաղթող դարձրնէ :  
 Բայց զառջն զիշերն որ գիտաց Վարդան  
 Թէ վաղին հասնի ժամ փառաց մահուան ,  
 Վախեց գաշարել զազկա սիրական ,  
 Խաբեց ու զըրկեց ի գեղ Շաւարշան : —  
 Հանց երկրորդ զիշերս որ ըզգաշան սուա ,  
 Հողին Եղիշեայ սրբոտէն գուրս թըռաւ .  
 Երբ ի բանակէն ուր ձաւորներ տեսաւ .  
 Վազէց ի գեղջէն ուր գաշորն մրտու .  
 Մըտաւ յարիւնտտ սահմանս Արտազայ ,  
 Վարդան որոտաց , պատասխան չըկայ .

Մահըն պատեցաւ ի սըրախն վըրայ ,  
 Եւ սուրբ վարդապետն ըսյր զինչ արղայ :  
 Լայր ու յառաջէր գայր խարխափելով ,  
 Ձինչ կոյր շօշափէր սաօք ու ձեռքով ,  
 Մինչեւ դեղընցած լուսին գըթալով  
 Ծագեց զիշերունս սաղ արաստունքով :  
 Ժամ մի Եղիշէ ժուս եկաւ լրտիկ ,  
 Տեսարանք տեսաւ ողորմ ու լալէք  
 Պաղեցաւ արաստունքն ու արիւնն ի սրտիկ .  
 Հագաւ ի չոզին պատիկեր սըղառիկ .  
 Եառ երերազին անցուղարձ արար .  
 Իբր ի կարկրաէ տեսաւ զիրուսար  
 Ըզմեծ բանակացն մանրած պատաս ,  
 Յորոց վերայ ըսյր լուսին դալկահար .  
 Ձինչ որթատերեւ ու կանաչ գընտակ  
 Գունադոյն ծաղկունք ու հասկ նորհասակ ,  
 Եւ ծառք հինարմատք եւ նոր բարունակք  
 Ի յերար անցած եւ ընկած խանարս .  
 Այսպէս ի արխուր դաշտին այն Արառղ  
 Խառնափընդորեւ խցին սա իրևարս  
 Դրօքք ընդ դրօշակեր , զօրք ընդ զօրավարս ,  
 Ձի ընդ հետեւակ , կարծիք ընդ արկարս .  
 Այն խրոխտ մըսդէն բըլուրն անկառի  
 Ընկել էր անշարժ զինչ կոճիլ անտառի ,  
 Այն հրաշունչ մըբըրկոտ վըրնշոտ ձին արի  
 Կարթակոտոր կայր ի տեանունն հեռի .  
 Այն քաջ մանկըտիք կայտատ ու զըւարթ  
 Որ դեռ աււըտուն փայլէին զինչ վարդ  
 Մայրամած զիմք , ս՛հ , ընկեր են արդ ,  
 Անդուսպ սիրան եւ աչքն այն ի՛նչպէս հանգարս :

Այն Զափուս բազուկք , այն լանջք զրահաղէն ,  
 Այն ճօճան ճակատք յամուր պըղընձէն  
 Որ փայլն զարնել զբանակն համօրէն՝  
 Հանց փրուտէր՝ որ ոչ զառւին ի դեանէն :  
 Եւ այն յորդորակ սպանուից բերան  
 Որ փողով ու անփող բիւրոց տայր հրաման ,  
 Կենաց եւ մահու կարծէր զինքն իշխան՝  
 Ձիւր խակ ջրպատմէ զըրպէսն մահճուան .  
 Եւ այն հին զէնքեր արիւնով մըլտած  
 Որ խոտանային դառնալ ի սունն հարց  
 Կորանոր արիւն լիզելով փայլած ,  
 Ահա կամ փշեր կամ գերի ընկած .  
 Եւ այն մտիրաշունչ Պարս կարըճուարայք  
 Որ քանց մուծն ըզլոյս սակին ըզհայք ,  
 Բնդ սողիք նոցին անկեալ անըզլայք  
 Պաղած ու դեղին քան բանտի ծառայք .  
 Եւ այն , ս՛հ , եւ այն հայոց նահատակք ,  
 Ո՛վ սուրբ հայրենիք , սուրբ եկեղեցեակք ,  
 Եւ այնք ընդ դարնան ծաղկանց դեղունակ  
 Եւ այնք հոն նընջեն քուն անմահունակ :  
 Ծերմակ ու կարմիր զինչ վարդ ու շուան  
 Ո՛հ , քանի՛ սողուր են ի Եաւարան  
 Գըլուխք ի խաչին եւ սոք յարուան  
 Մանկըտիքն հայոց՝ որ ի սուրբ քուն կան .  
 Բաջ քաջ կըտուեցան , սուրբ սուրբ մեռանին ,  
 Աչերն ընդ երկինք ու ի սունն հայրենին ,  
 Յիշեն ըզճընոգք ըզքազցր ամուսին ,  
 Մարեն զլոյս աչաց յարստունք սիրային .  
 Փոխան սիրէնաց ցուրտ հով զիշերոյն  
 Աղապատելով փարի այտերոյն .

Պատառտախ աչք դողող աստղերոյն ,  
 Յօղեկ կաթնաբուռ սեզան յամպերոյն :  
 Մատաղա չոգիք դեռ զբրթունքն համբուրեն  
 Ուսկից այդպէս շուտ ի դուրս ելանեն .  
 Պահ մի զվարսագեղ ճակատսն զիտեն  
 Եւ ըզմանկուծիանն յերկինք փոխադրեն : —  
 Այլ դու եկ դարձիր եղինկ Եղեշ ,  
 Թէ զՏոբիդ սիրես՝ քաղցր արեւէ յլեշ .  
 Ահա նօսր աղեք սրբախկ խըշխըշ ,  
 Մի՛թէ մահն ըզբեղ այլ մեզնից քըշ .  
 Մի՛ աչեր մի այն թոռամած դէմբերուն ,  
 Մի՛ զբաչեր մի այն ցուրտ մարմններուն .  
 Ահա զգլուխդ առեր թաթաւ ամպերուն ,  
 Զտոհունքդ է թացեր արինն քաջերուն :  
 Այլ Եղեշն , քաղցր սիրա Եղեշէն  
 Իսկն չեզագրի թափառիլ անդէն ,  
 Մէկ մէկ սրտն զքաջք հայոց զբնդէն ,  
 Համարէ զվեկայքն զոր երկինք համբեն :  
 Բանակն այն անշարժ՝ շարժի յեր սրբախ  
 Շըրթունքըն լուսիք մըտքին մէջ խօսին .  
 Քաջերն այն ընկած՝ հոգւոյն մէջ կանգնին ,  
 Մահ կենդանանայ , մեռնի կենդանին .  
 Ի սիրտն փափուկ մազ՝ քանց մեղք անոյշ  
 Թաղանթէ թաղանթ ծառալի քընքոյշ՝  
 Զերկայնուկ թարթիչ աւաջըն մեղքոյշ՝  
 Զորս բոլոր սծէ կամայ եւ ուշ ուշ .  
 Ըզթեան ընդ ուսով զարկած զինչ հաւիկ՝  
 Կարծես ախանջ տայ լուսիկ եւ մընքիկ  
 Զինչ ճայն կիսամեղքն արձրկին սրբախկ  
 Կեղ հառաւանթք եւ ընկուով յըրբախկ .

Խաղաղութեան զինքն կարծես հրեշտակ  
 Կամ թէ կուսական փողար ոլբերդակ ,  
 Կամ պատգամաւոր սիրելեաց դաղանեակ :  
 Տանիլ զեղբի ուխտն առ սիրա ըսպանեակ :  
 Եւ ահա տեսնու կուտակ մի մարմնն ,  
 Ահեղ զինչ կորեւիք , փայլունք քան լուսին ,  
 Զիրար թեւտամ՝ քանց որթ զուսենին ,  
 Թուխ Ռոստոմն ու վարդ Վրամն ու Գարեգին .  
 Աչկուէքն Եղեշեաց վտախն ի յայն տես  
 Կրակէ արտասուք թափէ ջըբի պէս .  
 « Պարծեյիլը , կանչէ , ծերունիդ՝ Կերսես ,  
 Ահա քաջորդիքդ ընկած քաջաց պէս » :  
 Բայց ի՛նչ է այդ կապն ի դօտի քաջաց  
 Ընդ մէջ Ռոստոմայ եւ Վրամկան կապած .  
 Բարէ քաջերուն , բարէ սիրելեաց ,  
 Ո՛վ սուրբ յեշտտակ՝ մընսս անմուռայ .  
 Մխարան ընկերք ի հայրենի տան  
 Մէկտեղ կեալ մեռնիլ իրարու երգուան .  
 Ասին զկապ հեւած սիրելեաց ընծայն  
 Զիրար կապեցին մընսլ անբաժան .  
 Այնու կապով մօտ եկան Գարեգինն ,  
 Ամահ սիրոյն զինքն այլ հազարդ ըրին : . . .  
 Ո՛վ այդքան սիրով հեւտուած կապ անդին ,  
 Բլքեզ աստեղաց մէջ կախեմ՝ յերկին : —  
 Հեռի տասըն քայլ ի քաջացս անդուդ  
 Վարդաախոյ Վրամկան նրման կայ մանուկ .  
 Երկաթ ահագինն ի կողն իւր փափուկ՝  
 Զաջ ուսոյն ի մէջ ծարկանց կայ պառուկ .  
 Հանց պայծառ ճերմակ երեւքըն շողան  
 Որ յերկնից ընկած կարծես նոր շուշան .

Անուղ ծընօտք, խաճ աչկուներ փալփրլան -  
 Զմահն ի քուն փոխեր է Գնուելին Աահան :  
 Մօտ ի նա ձեռօքն կիպ խաչազէն  
 Կայ երկուասարդ դորալար մ'անդէն ,  
 Ճակատն երկնազէտ ծըճէ զցօղ յամպէն ,  
 Ի կեանս եւ ի մահ՝ ցանկալին Արսէն :  
 Իսկ մեծահասակ ով են զիւցազուներ  
 Ար իբր անտառի եղեւինք բարձուեր  
 Ընկեր ու ծածկեր են հազար ծաղիւունք  
 Զխրենք այլ ծածկեն նեար սուրբ գեղարգունք .  
 Քրտամին գողգողայ վառուի Եղիշէ ,  
 Զահագին վահան Արգանայ զխե՛ ,  
 ԶԱրտակ եւ Խորէն նեքքեւ տեսանէ  
 Ահաւոր զիմօք՝ զինչ առիւժ քրնէ :  
 Հոն սարաւարունալ Պարս զըրավարայ  
 Տեանէ գըլուխներ ընդ սոխիք քաջայ ,  
 Եւ նիզակս Հայրոջ՝ որ զյոզ են շամիրած  
 Երկու նահատակ զնդին թըշնամեայ .  
 Հոն մեծ բազմութիւն զինչ փայտ ի յանտառ  
 Կամ աշնանաթափ տերու հողմավար  
 Ընկած ու խեղած սեն ու վերուվար .  
 Պաշարի մարմնովք ու Հայի շիւար :  
 Զանկարծ բըլրածէ զխականց դարէն  
 Փայլակ մի շողայ քան զայն որ յերկնէն ,  
 Երկայն ըստ ցոլայ ի զէն խաչազէն ,  
 Մէկ թընդմամբ սըրտի հոն դայ Եղիշէն . . .  
 Երկոյ սեւազրահ Պարս զըրավարայ  
 Վերայ տարածուած հանգէր ոմըն քաջ ,  
 Բզձախն էր ամեւ ի սըրտին զխնայ ,  
 Յաջն ունէր նիզակ մահուամբ ձանձրացած .

Զրեհըն սրղունձի ծակել են հազար ,  
 Ի ծակուցն ի դուրս շող ծաթէ պայծառ .  
 Ծոցին ու ձեռայ միջուկն արիւն վառ  
 Գընտաճէ զիզուէր վարդի հաւասար .  
 Բշտեւարանդուր մազն ի բայ շըրջէ  
 Ի յանաղաւարտ քաջին ճակատէ . . .  
 Խեղազնայ ընի գողայ Եղիշէ  
 Բզմեծն իւր Աարգան ի հոն ճանաչէ :  
 Լէզու քաջին լուս , խօսի ինքն ամէն ,  
 Այոքըն թըռալիւր եւ յնք կըրննձիէն .  
 Մահու իսկ կարծես հրաման յիւր մահէն  
 Տայ իշխանաբար՝ եւ ամէնք սարսէն .  
 Ի շըրթանցըն մէջ կայ ծայր նիզակին  
 Բառածայր թեւօք ոսկեզարդ խաչին ,  
 Զոր սպան իւր Մահակ ի ժամին յեալին  
 Յիշատակ երես քաջապանձ թուին :  
 Ընդ երես քաջին մահախտան անմահ  
 Զամբող գիշերոյն զերրորդն այն սահ  
 Հայի Եղիշէն ի զարմանս եւ յահ  
 Խորին լուռութեամբ լեզուն շըրջապահ .  
 Կըշտէ զգլուխ քաջին ձեռօքն երերուն  
 Ար զինքն ետ կըշտ իր ազգին սիրուն .  
 Համբուրէ զճակատն՝ ուր բաղին Հայկազուն  
 Զանդարձն էր գըրեր ապագայ դարուն .  
 Ընդ լայնադիր լանջքըն Հայի ուռած  
 Բաջ քաջ եւ վեհ վեհ սըրտից սոււն սիրած ,  
 Իբրեւ սրղունձի ամուր մի կանգնած  
 Պաշտպանել զորդիք թօրդոմայ ցաւած .  
 Ընդ գեղեցիկ ձեռքն հայի՝ ում հնազանդ  
 Կայր ամէն հրամանս եւ շատերուն բաղդ ,

Ուստից յաղթանակ եւ փառք մեծադարգ  
 Երեսուն տարի ելնէր անընդհատ :  
 Ո՛հ . չէր նա յնպէս վեհ երեւցած տեսօք  
 Երբ յիսուն անգամ դառնալով փառօք  
 Պրտակս յաղթութեանց բերէր սրփուէր լոկ  
 Հայրենի շերմաց ու մատրանց վրայօք ,  
 Կամ երբ արծուօրէն ընդ Կովկաս անցած  
 Թագաւորներ բռններ բարբարոս ազգաց  
 Իջեցնէր քըշէր տանէր տայր Արեւաց ,  
 Ինքն իբրեւ յորսէ գալով եղջերուաց ,  
 Ինչպէս հոն վերայ քաջացն յեցուի՝  
 Յետին յաղթանակ Հայոց անանցուի  
 Զինքն կանգնելով Պարսկին ընդ ոտիւք  
 Ինք զինքն գիտէր հօգույն նայեցիւք :  
 « Ո՛հ , ես ի ճակախդ վրայ երգնում՝ Վարդանն ,  
 Կանչեց Եղիշէ , որ ձեռքն աստուածեան  
 Ի հոն փոխարէն է գրեթ քո մահուան .  
 Թե՛ բիւր դաբբ անցնին՝ դու մընտա Վարդանն » :  
 Ասաց Եղիշէն , հեռ վերջին շքերին  
 Փախաւ ծածկեցաւ սիրաձայն հոգին : . . .  
 Պըրպուլն ի թրիէն սովբեցաւ զայն բան ,  
 Կանչէ դբուն գիշերըն Վարդանն Վարդանն : . . .  
 Կանչէ պըրպուլիկ , կանչէ յԱւարայր ,  
 Որ Վարդան հայի յերկնուց այլ է վայր ,  
 Յիշէ զՀայաստան ըզբերելին վայր ,  
 Հայաստան յիշէ զՎարդանն իւր յամայր :

ԱՆՈՏ ԵՐԿԱԹ

Ի ԾՈՎՈՒՆ ՍԵՒԱՆԱՅ

Յուրս ցուրտ ձրմունքը բրդան յարձակ հովերէն ,  
 Սիւստակ կարանք իջան լեռանց կողերէն .  
 Փրչեցին պինդ քամիներն , հոն , փրչեցին ,  
 Սասով ձիւնով ըզարան ու գձոր դուգեցին .  
 Վարդըն քափուր վատեցաւ ,  
 Երծղուն ծաղիկ ծածկեցաւ ,  
 Եւ Հայաստան սուգ մըտաւ :

Սուգ էր պատել մեր գեղեցիկ աշխարհին  
 Երբ գառնաշունչ հովըն փրչեց օտարին .  
 Երբ հայ իշխաններն քաշուեցան յամուր վայր ,  
 Աւանդ սամկին՝ որ մուրերը վեր ու վայր .  
 Տեսաւ որեւ՝ գեղընցաւ ,  
 Իռանակ ու ասպղիկ սեւացաւ ,  
 Եւ Կահապեան ամբնեցաւ :

Ո՞վ ան մասնիչք , ո՞վ այն դահլեճք , ո՞վ դազան՝  
 Որ առ այլազգ առ բրնուար ձայն կու տան .  
 Այդ ինչ քարէ սիրտ , ինչ սառէ շըրթուք էր  
 Որ հայրենեաց հողուն կարգաց սեւ օրեր : —  
 Անեճք տըւէք այն բերնին ,  
 Անեճք գրբին ու ձեռնին  
 Որ զՀայաստան մասնեցին : . . .



Ո՛ւր ես Աշոտ . ել եկ թագւոր , խրչճա՛ յիս ,  
 Սեւագունդ զօրք դան վերայ մեր ախարհին .  
 Ի Բաղաստայ գան , Մօսլայ գան , Շամայ գան ,  
 Խիա քանց մարտիս , սեւ քան զամպերա ի Սեւան .  
 Բանց ըզհովերն հասին սուր ,  
 Բոլորեցան ամեն ուր ,  
 Կու շողացնեն նեա ու թուր :

Հա՛ իմ թագւոր , արեկ Աշոտ , երեւցիր ,  
 Բաշէ՛ զերկաթդ , ըրէ զայդոնք ջիր ու ջիր . . .  
 Դադրեցէք գաշաք , ի դողալէդ թընտալէդ  
 Թագւորն հայոց ելաւ , ահա նա ձեր հետ .  
 Կու գայ նըման փայլակին ,  
 Կայծակ թափէ ի չորք զին .  
 Ա՛հ , չըկայ նիւթ իր կրակին :

Թագւորն եկեր աշարակներուն աչք ածէ ,  
 Արեւծաբար ձենէ , ոչ որ չի լըսէ . . .  
 Ա՛հ , սուրն երկաթ շողայ փայլէ ի մըթան ,  
 Թողու երթայ մըրմուսալով ի Սեւան .  
 Ի քարն ելնու բարձր ամուր ,  
 Չորս զին կապոյտ եռայ ջուր .  
 Սիրան ի վերայն հալած հուր :

Գիշերըն չորս դեհ քաշեր թանձրը մըրուր .  
 Ա՛հ , տըխուր այն երկինքն , երկիրն այն տըխուր .  
 Ծառեր փայտեր յիրար անցած կու կանչեն ,  
 Կու թուի թէ գհոն հայաստանի կու քանդեն .  
 Սեւ թըշնամին ծովուն մօտ

Բանց ծովն եւել մըրմուսա  
 Կու սպառէ ըյսն յառաւօտ :

Ի սեւ դարձաւ կապոյտ ծովակն ու ծըխայր ,  
 Հառչեց խորէն ու քարն ի վեր կու փրփրայր .  
 Ալին զալն զարկած , փրփուրն ըզփրփուր  
 Թագւորին յոտքն ցաաբըտեր բեր ու բեր .  
 Կա հայ ազգին արատւնն էր ,  
 Թագւորն լայ կու հաներ  
 Արդեօք իրեն ճար մ'աներ :

Բանց զիշեր մուծ սպառեց յաշկուր թագւորին .  
 Բանց ըզՍեւան ծով մեծ փըլաւ ի սըրտին .  
 Հանց որ յիշեց զեր հայրն ու զօրն երջանիկ՝  
 Արիւն ցառեց ծոցէն ի ծովն ու ցամբիկ .  
 Չաշերն ածեց ու ցորաց .  
 Փայլակն երկնուց կանկ առած  
 Մէջ ամպերուն սաղ մընաց :

Շարժեց ըզսեւ կամարն ահեղ յունկերուն ,  
 Ըզսեւ մագերն ի շուրջ ափուց ուսերուն ,  
 Բացաւ հընոց բերանն , հառաջ մ'արձըկեց .  
 Անդունդ ծովն սպառած՝ հառաջ մի կրկնեց .  
 Հրամէ մեղ քաջ մեր թագւոր ,  
 Ծովս ու ցամաքս հեռաւոր  
 Չէնիդ ծառայ ենք բոլոր :

Հանց որ զեր ձայնն ահեղ լըսեց քաջն Աշոտ ,  
 Հանց որ ըզգաց ըզլարի սըրտն կայծակաւ ,  
 Խընտայ թընտայ հոգին , լաղեց կուրծքն ի դուրս ,

Չեաներն երայ կ'ուզեն արեղս նեաս ու թուրս •  
 Կոխեց զնիւղանն ի բարին •  
 Հազար կայծեր ցատքեցին •  
 Հրամեց իր փորբըր գընդին •

« Չէն սուէք, ժիր կայէք ընկերք իմ սիրուն •  
 Հաւատարիմք ձեր թագաւորին ձեր հողուն •  
 Ի հազարաց մեկիկ մնացած դուք իմ հետ •  
 Կուք շատ էք, ձեզ է բաւեն հազար թուր ու նեա •  
 Թող աշխարհաց ըւր լինի՝  
 Որ քանի եւիք կենդանի  
 Հայաստան ո՛չ տի մեանի » : • • •

Հանց որ գիշերն ըզսեւ քօղերն ժողվէր  
 Եւ ծիրանին դամարց փեշերն վատեր •  
 Ելաւ ի բարձր բարին • դեա կեցաւ ըւս •  
 Լըսեց զօրաց ձիոց ալեաց բարկ մըքմուս •  
 Սիրարն նեասեց մինչ յերկին  
 Արատունք ի յաջն ետացին •  
 Շունչն մըրրկեր ի շքրթուին :

Իսկ երբ իջաւ սուսուտուն հօնն հանդարտ  
 Եւ կապուտակ ծովն խառնեց կարմիր վարդ •  
 Բզջորս բորբն առաւ պատեց այրազգին •  
 Ետայր ծովուն • ետայր արեւ ցամաքին •  
 Կատուած զօրաց ահեղ խուճք  
 Շուրջ կանդնեցաւ զինչ սեաւ թուճք •  
 Կիզակ • ալեղ • պարս ու սուճք :

« Ո՛ր ես • կանչեն • Աշտ • Հայոց Շահընշահ •  
 Յամբէն ի ծով • ծովեղ փախչել չունիս շահ •  
 Տես ո՛նց հազար որսորդ պատե գբո պարեխ  
 Մէջ թոռերուն տի՛ նինիս քան խեղճ մի տառեխ •  
 Աշտ • դու յի՛նչ ես լըստահ •  
 Գիտցիր • այլ չես Շահընշահ •  
 Գրողք հասաւ • քեզ չըկայ շահ » :

Պարտեց թագաւորն Հայոց • սպայտուն մի չերեա •  
 Զեօթանատուն կտրիճքն ի տան հանեց փետ •  
 Կիզակաւ կօփ տըւին քարին Սեւանայ •  
 Բշեցին զճօճան փայտերն հանդէպ Կեղամայ •  
 Ծովն զընծայր շքունչայր •  
 Գիտեք այլագին՝ արմընայր •  
 Հայն աներկիւլ յառաջ դայր :

Յայնժամ գոռաց հրամանց թագաւոր մեր Հայոց •  
 Եօթանատուն աղեղք թափեն կայծ հուր բոց •  
 Երայ երայ գառնան ի շուրջ ծովակին •  
 Յիրար անցած կու յիմարի լըշնամին •  
 Աշտ հրեղէն գընախ նման  
 Փետե ի փոշոյ ցատքըտան  
 Սիրտ սոյ քաջացն անըման :

Շարժին շքէն փատերըն մօտ ի ցամաք •  
 Չարնեն փշրեն ըզլըշը ու զսեւրն բանակ •  
 Կէսն ի ծովն կէսն ի ցամբին նեատահար •  
 Մէկն ի գետն կարած • մեկայլն ջրատար •  
 Կառնան մնացորդք ի փախուտ •

Գիտեն զլեւաններն ի հեռուստ  
Վըռազ կու տան ամենուս :

Կապուտ կանաչ ակը ծովուն գունտափն  
Յարին եւ մաղձ՝ զոր փսխէ ժանտ պլազգին .  
Ձրգուին ձրկունքն իջնուն յանդունդն զով վայր .  
Անդընդայինքն ի վեր վազէն յաւեաց ծայր .  
Անմիտ որտորդքն որսը որսոց  
Տարուբերին ծոցէ ծոց  
Ողորմ՝ պագեն զափն Հայոց :

Կարմիր արեւ Գեղամայ , ել ասնն ի վեր  
Կրակէ կըզակըզ դրրած շուրջ տար ու բեր .  
Սոթից \* հովիկն ի ծովդ աննու ման պրտոյտ  
Ոլոր ոլոր ունուն գոնդողքն կապոյտ ,  
Որորեւով գրբեւով  
Ծափ ըզծափի բերեւով  
Շուրջ դան զՀայոց թագւորով :

Հրամէ թագւոր , նետերդ բացին քեզ ճամբահ ,  
Ուր որ դիմես՝ դու ես Հայոց Շահընշահ .  
Խաղա՛ վազէ՛ ի դաշտ ու ի ձոր համարձակ ,  
Բըշընն փշտած կորուս զընաց անդարձակ :  
Երբ որ մըտար ի ծովն աստ՝  
Էկը Աշտ լուկ երկաթ ,  
Հիմ՝ որ էլնես՝ կուս պողվատ :

\* Գաւառ եւ անն յեղից հարաւոյ ծովակին , ուստի յաճախ շնչէ ի նման հողմն :

Հա՛ փայլեր , հա՛ սլացիր երկաթ ու պողվատ ,  
Հազրով բիւրով թափէ բոցեր անընդհատ .  
Շուրջ շոգացիր ծայրէ ի ծայր հայրենեաց  
Մանրէ՛ մտչէ՛ զգէնք մեր ամէն թըշնամեաց .  
Հայոց հողուս դու կեանք տուր ,  
Երկինք քեզ տայ հրաթափ թուր ,  
Կահապեափն՝ սերտ քանց հուր :

ԼՈՒՄՆԿԱՅՆ

ԳԵՐԵԶՄԱՆԱՅ ՀԱՅՈՑ

Այ իմ լուսնակ գեղեցիկ, աստուածավառ դու  
 լապտեր  
 Չոր առաջնորդ գիշերոյ դըրաւ յերկինս ինքն  
 Տէր •  
 Կոր մըթութեան աչք անխակ, սըրտիս այլ  
 դու աչք կու տաս  
 Երբ շողջողուն շղթայով կախուած շարժիս լիմ  
 վըրաս •  
 Բո թե՛ն՝ երկնից արծաթէն հիւսած, սատորոյդդ  
 ալ ոսկի,  
 Աղամանտէ կայծակներ փռես զասողերդ չորս  
 դի •  
 Եղի մեղրի նրման կաթ մը յամանէդ յիս թա-  
 փած  
 Կու խաղողէ կըրբերս զինչ արև ըճխ հանդար-  
 տած :  
 Ո՛հ, ո՛նց պայծառ էիր դուն կենացդ երկրորդ  
 գիշերին  
 Երբ նոր քաշուած Աստուծոյ ճախարակէն ընդ  
 երկին •  
 Ո՛հ, ո՛նց փայլուն էր քո լոյսն՝ երբ առաջին այն  
 անգամ  
 Գիշերազուարճ՝ սըլլպուլիկն ձրգեց ձայն երկ-  
 նահամ •

Հունչն պայծառ քեզ նրման հոխէ հովիտ կու  
 խաղայր •  
 Հեղիկ հովով թունդ ելած մաքուր առուակն  
 հեւայր •  
 Չրկայր ահանջ հողեղէն սր զայն լըսեր ու փառք  
 սայր  
 Միայն հրեշտակք լըսէին եւ շարժէին ըզքեզ  
 վայր •  
 Եւ դուն լըսիկ չափեցիր զանամոյ երկնից կէս  
 բուրբ,  
 Ծով՝ ու ցամբի վարագոյր բացիր, ներքեւ մը-  
 տար խոր,  
 Երբ արեգակն կու գայր հրեղէն սառն յօդս ի  
 վաղ  
 Չարշալուսոյ ցօղ սփռէր եւ զառաւօսն հըրա-  
 մաղ : ...  
 Կացիր արեւ, յես կացիր, մ՛կեներ յերկնիքըդ  
 կապոյտ  
 Թող լուսնեկիդ ի ման գալ գեռ ի մէջ թուխ ամ-  
 սերոյտ •  
 Կայց կայց լուսնակ դու յառաջ, լեւնէ ի լեւ  
 սարէ սար  
 Մէջ ձորերուս խորերուս անցիր յուշիկ հաւա-  
 սար •  
 Հեռ քեզ ունիմ էս զանդատ, քեզ նահապեան  
 ունի բան,  
 Սիրտըն յերկուս է ճըղքած, եւ ցաւերն, ո՛հ,  
 զանազան •  
 Պայծառ լուսնակ մի փախչիր թէ տրամութեան  
 լըսես ձայն,

Յաւած սրտի մխիթարանք եւ դու կանգնեւ լեր-  
կինքն այն .

Ման դաս յերկիրն Եդեմայ, բայց ոչ ի հինն այն  
գեւէր

Երբ երջանիկ էր դեռ մարդ, լոկ սեր ու դիեան-  
քըն յիշէր .

Ճերմակ ճաճանդդ յայնժամ տաք էր ջրերուն ու  
ծաղկանց ,

Ուր որ կաթեր քու շողիկ՝ կենդանութիւն էր  
անանց . . .

Դարձիր նայէ հիմ՝ ի վայր , նայէ ի փեշ տարե-  
րուս ,

Նայէ ի տափ սառնարիս , եւ ի հողունք գեղե-  
րուս . . .

Ա՛հ , գերեզմանքն են Հայոց , որ ոչ եւս են յաշ-  
խարհէ ,

Մաշած նըշխարք մեր հարանց՝ թաղուած ի խոր  
խաւարի :

Այն Հայկազունքն անուանի եւ մարդկութեան  
անդրանիկք

Որ զԱդամայ տունն իրենց վարձեցին տուն եր-  
ջանիկ ,

Այն մեծամեծ հըակներն՝ որ հըակայից յաղ-  
թեցին

Լեռնանըման կըտրիճէրն ի Չորն Հայոց թափե-  
ցին ,

Հեթանոսաց կուռքերուն յաղթող որդիքն այն  
Հայկայ՝

Ընկան անոնք այլ ի քուն ներքեւ ժայռիցն  
Հարբայ :

Հայկն որ ամէն Հայու սիրա պիտի կանգնէ դա-  
րուց դար ,

Հայկն այլ ի քուն է ահեղ , եւ ո՞վ գիտէ զիւր  
դադար .

Ո՞ր արդեօք սար կամ՝ բլըւր ծածկէ զհըակայն  
այն բարի՝

Որ փառք որդւոցն տըւաւ ու աղատութիւն  
աշխարհի :

Որ լեռն արդեօք է քո բարձ՝ բարձրագըլուի  
քաջդ Արամ ,

Որ ի Մարաց մինչ Մաժակ վաղէցիւր տէր յաղթ-  
անդամ .

Եւ դու Արայք գեղեցիկ , յո՞ր գաշա արդեօք յո՞ր  
հովիտ

Կարմիր գանգրովդ պըլլած ծածկեա ըզնոց ճա-  
կատիդ .

Եւ որ զահեղն Աժդահակ շամփրած ի ծայր նի-  
զակին

Ի ժութ քարայրս իջուցեր զվշտպաղունս սե-  
ւագին ,

Դու ոսկեծամ եւ խարտեաշ Տիգրան , դու յո՞ր  
կաս քարայր .

Եւ դու ծընունդ ծիրանի երկնից ու երկրի հրե-  
ղէն այր ,

Վէհաստեալ դու Վահագն՝ որ ընդ աստուածըս  
նըստար ,

Ծածկեց ըզքեղ սպառաժ , թէ հալէցաւ քան  
ըզսառ :

Երկհաղարեան տանուներք Հայոց հողուս հայ-  
կազունք

Արդեօք ի խորրա նորին դեռ կեցեր էք իրր հի-  
մունք .  
 Եւ ինչպէս որք ըլլալով զորք բռնաւորքն զար-  
կիք ,  
 Այդպէս զմեռեալ բռնաւորսն հողուն ներքեւ  
այլ դասիք ,  
 Որ սրղծեցին զուրբ երկիր մեր հարց հայոց  
սեփական ,  
 Կարծեցին ձեր քով նընջել , եւ ի գրժոխս ար-  
թընցան :  
 Դուք այլ պանդուխտ բարեկամք , Արշակունիք  
արնաշին  
 Որ զհայկազանց հին անունն հրաշակեցիք յազգս  
ամէն ,  
 Ի Կամակայ կամարէն խըրուած յանգուծ գե-  
րողաց  
 Եւ ի կորիճ տիրասեր մանկանցդ նորէն ազա-  
տած ,  
 Գըլուխ գլխի խառն ի քուն Աւագ Մասեաց մօտ  
վըհին ,  
 Արդեօք խորհուրդ ընելով դեռ կու յիշէք ըզ-  
վրէժն հին :  
 Դու այլ ո՛վ մեծդ հըսկայից եւ Թագւորաց ,  
սուրբ Տըրգատ ,  
 Որ զցանկալիս քո Թողած՝ զԵրեզ , Գառնի ու  
Արտաշատ ,  
 Զահեղ գըլուխդ վերուցիր եւ յեա մահուդ ա-  
հաւոր  
 Եւ ի հանգիստըն հողեաց վանաց ստիր քուն  
ո՛ւ այլ նոր ,

ԶԵփրատ Թողած՝ զորով վաղ սըւիր երագ ի  
մի քայլ  
 Բարածորան Տեգրիսի լըսես զխոտոջ այլեւայլ ,  
 Արդեօք հերկք քեզ տեղդ այդ , Թէ դարձեալ  
շարժ տաս քարանց  
 Եւ ի Սեպուհ կամ Մասիս վազէս՝ ըզմահն այլ  
սանձած :  
 Եւ դուք կարմիր Վարդանայ վարդանըման գուք  
ընկերք  
 Որ յԱրատազու դաշտերէն մինչ ի համէնն էք  
քընէր ,  
 Արդեօք ձեր սուրբ արեան գին աշխարհիդ  
բաղն յիշելով  
 Շարժէք դեռ զքթալ բազկընիդ հողիներուդ կը-  
րակով :  
 Բազրատունիք շինարարք , յԱրազաւորս եւ  
Բագրան  
 Կու վընարուէք զգաստակերտ ձեր ու զլեախն  
քընարան .  
 Եւ յաշտարակս քաղքիդ՝ յալնիւն Անի աչք  
ձըգած  
 Գըլուխ շարժէք , եւ երկիրս սասանի սարսա-  
ված .  
 Տաճար , դարպաս , վանք , խորան՝ սփոխն յեր-  
կիր աւերակ  
 Շէնք եւ անէնք դերեզման ընին հայոց բովան-  
գակ . . .  
 Խաւար վերայ խաւարի հագած կանգնի սեւ գի-  
շեր .  
 Կահապեախ սիրան այլ սեւ . Աստուած , զմեզ  
հարց մի յիշեր : . . .

Արդ իմ լուսնակ, փութձա՛ յամպերեդ  
 Ե՛լ փարատէ զմութձ Կահապետիս,  
 Սփռէ՛ յերկիր դեղձան վարսերեդ,  
 Հեռ քարերուս կապէ՛ զսին սրբախ,  
 Հանդարտ ու լուս է շուրջս բոլոր,  
 Երկիրս ի քուն երկինք լոկ արժուն.  
 Լուսնակ՛ վռռէ՛ զկանթեղդ կրքր  
 Ի գերեզմանս իմ՛ հարց Հայկազուն.  
 Ճերմակ թեւօք գրքիով երերուն  
 Երկրնցու զձահդ յամպերուդ միջն  
 Սարկց գըլխնն, յեսանց ծառերուն,  
 ՅԱրարատայ երկձիղ գագաթնն:  
 Սարն ի սարին զիղած տասըն տակ,  
 Ձիւնակոյտ սառն ի վերայն հինգ բարդ,  
 Ու սյլ ի վերայն քո լցան ըսպիտակ,  
 Ու սյլ ի վերայդ իմ՛ արտառնք հրազարդ.  
 Արդեօք հալէն արդեօք տի մաշէն  
 Ձ թանձր սրտանք գերեզմաններուս.  
 Արդեօք ի խորչն հասնին քարեղն  
 Լըսալ զանրաց ոսկերք հայրերուս: . . .  
 Ա՛հ, ո՛հ . . . լրաէք ոգիք Հայկազանց  
 Կահապետիս լրաէք հոռաշանք . . .  
 Լըսեմ՛ լրսեմ՛ ես ըզձայն հարանց,  
 Ահա շարժին բացուն զերեզմանք:  
 Բարեւ հանգիստ ձեզ հին Հայկազունք  
 Որ մշակեցիք զագարակ Նոյայ,  
 Եւ թէ երան ձեր դէմ՛ գիւցաղունք  
 Ընկան հընձոց պէս յարտիզ վերայ:  
 ՅԱզցից՝ ծոցէն կանգնած մըրմուշով  
 Թագապրսակ ահեղ ճակատներ,

Վարդանք Վահանք ըզվրեժդ սանըրով  
 Հարին զՍասան, հանգչեցէք դբուն ձեր:  
 Ո՛վ հայրապետք սուրբք, փառք աշխարհիս,  
 Որ նընթեցիք ի մատարանց ներքեւ,  
 Կայեցէք մեկ մ՛այլ վերայ երկրիս,  
 Որ յաչընուդ ծագէ նոր արեւ:  
 Եւ գուք կարի՞՞ սիրուն զըրականք  
 Կրակաթափ թուրք, մահացան բաղուկք,  
 Քաղցր հայրենեաց սարխաղք եւ պահանգք,  
 Ձեր քերտն ու արինն անմահ անմոռոցուկք.  
 Դարձիք ամէնքդ առեք հանգիստ քուն,  
 Կահապետ լայ դձեղ, յեշն ողղիք.  
 Ահա վեհայ լուսնակիս փայլուն,  
 Դարձիք առեք ըզքուն հանդարտիկ:  
 Իսկ գուք կայտառ ու կարմիր աղջւյք  
 Գրուք Գրիգորի, զինուորք Յխուսի,  
 Եկեղեցուց Հայոց զարդ վեհայք,  
 Ո՛վ կրակէ սիրտք յալժողք հեւսիս.  
 Մողորհաւատ ազգեր սեւակրոն  
 Հըրով թըրով եկան յիմ՛ աշխարհ,  
 Կ՛ստեն, վե՛րցուի պատրագ ու պաշտոն,  
 Լուսաւորչի լցան լընայ խաւար . . .  
 Ա՛յ անիծեալ օձք, սիրտք գազանի,  
 Չորնան լեղուդ ու անգուժ բազկերնիդ,  
 Թէ բունացայք հողուս հայրենի  
 Հողիս չ՛ինկնար ի չար ձեր ժամիդ.  
 Հայոց հաւատս է վրկիչն հաւատ,  
 Յաւաբեւոց բերած նսիրնծայ,  
 Լուսաւորչչն արնիկց հաստատ  
 Ու մեր արիւնքս ոտդէն ընայ.

Պարսիկք, փռւճ տեղ ատրուշանք վառին,  
 Փռւճ տեղ Հագար այրէ դբողքընիս -  
 Սուր Սըկիւթին եւ թուր թամարին  
 Փռւճ տեղ շողան՝ աղատ է հոգիս :  
 Կայէս կանչեն կարմիր կայտառ Հայք,  
 Կէ՛մ սուրերու կանգնին համարձակ,  
 Խաղան խնաման ընկնին նոր վրկայք,  
 Կանգնին փառօք, թրուչին լուսածագ :  
 Կարորածոցիկ զէտ հատից նրուանց,  
 Չէա հողմնահար խայծեալ խրնծորին,  
 Կրման սարինց արեան ալբըրանց՝  
 Թափին նըշխարք կարմիր կրտորին :  
 Հողն հայրենի ծըծէ զսուրբ արինւն,  
 Ծոցըն բանայ, ամուռ զիւր որդեակք,  
 Յանմարդաձայն յանծանօթ անկիւն  
 Կարմիր քընով նընջեն նահատակք :  
 Սըրտի հատոր հա՛ դան սիրելիք,  
 Հարցունք անեն ձորոց ու լեռանց,  
 Ո՛ւր մեր աղայքն, ո՛հ, ո՛ւր ծածկեցիք :  
 Սարեր ձորեր, սուէք մեզ նըշանց :  
 Սարերըն լուս, ձորերըն արխուր,  
 Հոյն հեւարով թեւերուն այդ դող,  
 Կարկըջելով ընդ քարն անցնի ջուր,  
 Տրամեալ տերեւք կաթեն անուշ ցոլ :  
 Ո՛վ մայր, ո՛վ հայր, ո՛վ եղբարք եւ քօքք,  
 Աչք տուք յերկին, անդ ձեր սիրելին :  
 Եւ ամէն քայլ որ կոխէ զայդ հողք  
 Ծածկէ զնըշխար Հայ նահատակին :  
 Սըփուէ՛ լուսնակ սրբուէ սուրբ լուսեր  
 Կարմիր կայտառ Հայոց մանկըտայն :

Հողս այս տաճար է, դու այլ լուսեր,  
 Կահապետն այլ է սուգ է սիրոյն : . . .  
 Եւ դուք ամէն Հայ սիրոց վըշտահար  
 Որ նախ քան զմահ մեռայք ցաւերով,  
 Չոր հալածանք կամ սուրն անդադար  
 Եւ կամ զիսուածք բերին չար ժամով,  
 Որ զինք էրաղ անցեք յաշխարհէս :  
 Պահ մի սիրով լըցուած սուրբ ամուսնք,  
 Յանկարծ ընկայք կտարած կուժի պէս,  
 Շուտով խելցին ըզձեզ գերեզմանք :  
 Գըլուկը կանգունք զէտ բարձր սարի,  
 Մազերդի է ման ճաճանջից նրման,  
 Բազկունք ամուր եւ կուրծքեր արի,  
 Ծոցեր ծաղկած ցօղալից շուշան,  
 Պայծառ աչկունք ջուխտակ արեգունք  
 Որ կաթէիք գուժ, սեր ու խընտում :  
 Բանի՛ շուտով անցան ձեր ճրագունք,  
 Եւ դագբեցաւ սըրտիդ վերվերում :  
 Կերբեւ ճակտիս, ներբեւ այս քարիս  
 Յամբած սրտեր տերեւի նրման,  
 Ձեր սիրելեաց շունչն յորդոց յորդիս  
 Ահա հատեր՝ հընչէ յիմ բերան :  
 Ո՛վ հարք, եղբարք, որդեք Հայ հողու՛  
 Անլայք անսուգք եւ անիշատակք,  
 Ձեր սիրելեացն եմ ես արտասուս,  
 Հին հառաչանք, հայրենի կըրակ :  
 Սեւ աւերակք դուք, դուք Սեւ հողեր,  
 Թըրով թախած արչաս հունձք եւ սունկք,  
 Ի գազանաց ոտնակոխ ճըղեր  
 Ո՛հ, ծաղկեցեք դուք այլ յիմ արտասուք :



Կարմիր կոկոն դուռններ , վեր կայէք ,  
 Լուսակաթ աչք , մեկիկ մի բացիք ,  
 Մեզոտ շրթունք , մեկ մի ձենեցէք ,  
 Բսէք թե հաշտ եմք , ու ի քուն դարձիք .  
 Քամեցէք հարբ ըզճակախիբ բըրտինս ,  
 Զխարտեաշ մաղերդ թօթիւցէք տըլայք ,  
 Տըւէք այգոց մարբ զլեռին ըտախս ,  
 Հալալ արէք , եւ բարեաւ երթայք :  
 Մուրաստատուր մեր սուրբբըն վըկայ ,  
 Հալալ արի ես ալ ձեր հողուն ,  
 Դարձիք ի քունս . ըունսկս այլ վըկայ  
 Որ անմուաց էք ի հայ սիրուն : . . .

Այլ դու ըունսկ ահա կու նուալիս ,  
 Քաշես ճաճանջի ի ծոցըդ ձերմակ  
 Զէտ արծըթի ախիէ կու թաւիս  
 Մէջ ամպերուն թուխ ու կապուտակ .  
 Վայց , մեկ վայրկեան մ'այ կայ իմ սիրոյս .  
 Մէկ քար մ'այլ կայ յԱնձանսօ թ հովախի ,  
 Գընս հոն կաթէ զվերջին քո լոյս ,  
 Այն Գերեզմանն է Կահապետին :

Հ Ա Յ Ր Ո Ւ Ն Ի

ՅԱՆԿ

Ի բամբինն Հայկազնի . . . . .	5
Հարմներդ առադատուի նախածնողացն . . . . .	15
Վարդրուր կամ մասն Աբելե . . . . .	56
Ի նախագահն Մասխ . . . . .	59
Վտակն Ակոուլ . . . . .	44
Հանդես տապանին . . . . .	46
Ատոն Հայկին . . . . .	48
Գարունք Հայոց . . . . .	50
Հարբ . . . . .	54
Ի Հայկն եւ ի բաստ հայկազանց . . . . .	65
Երկհազարեակն արշակունաց . . . . .	67
Արտաշէս Բ տամարաղիր . . . . .	69
Ի սուրբ Սուքիասանս . . . . .	71
Փոխուն Լուսաուրշի . . . . .	75
Գոչումն ի սուրբ վերապն . . . . .	77
Ի նահատակն Վասնեան դաշտին . . . . .	78
Ի սուրբ Հռոփսիմէ . . . . .	80
Ի մահ Տրդատայ ահեղագորն արքայի Հայոց . . . . .	82
Ճակատամարտ Ջիրաւայ եւ քաջակորովն Մուշեղ . . . . .	98
ՅԱռանձար սեպուհ ամատունի . . . . .	102
Սեպուհն Վասակ . . . . .	106
Երթ ու գնացք զօրացն Հայոց ընդ Վահանայ մամիկ . . . . .	111
Վրվայր ի յետին գիշեր այրարատեան . . . . .	117
Դատաստան Վասակայ մատնի . . . . .	125
Կահատակութիւն սրբոց Ղեւնդեանց . . . . .	140
Ի սուրբ Ղեւնդ . . . . .	146

Արբաճամ խոստովանող . . . . .	148
Յեաթն կացութից Յովհաննու սուկերերան հայրապետի .	149
Ջայնարկութիւն բանակի Աշտոյ Բ . . . . .	153
Հառաչումն Գագկայ վերջնոյ . . . . .	155
Բանք վաճարման պահլաւտնոյ ի պաշարման Անոյ .	136
Ողբը Հեթմնոյ ի վերայ որդւոցն . . . . .	161
Ոգին Հայաստանեայց . . . . .	164
Մամունջը ընդ հայցուածս Մխիթարայ . . . . .	170
Ի հարիւրեմեակ Լուսանորդն Մխիթարայ . . . . .	172
Ի գիւտ եւ ի ձոյլ մեսրովպեան տառից . . . . .	178
Երգ Հայրենի . . . . .	183
Մահաբնոյ հայկազնոյ . . . . .	183
Յարձան շիրմի Յ. Սարկուազայ . . . . .	189
Առ սուրբ Սիմէոն Հայկազն յեղբ Պարոտի . . . . .	190
Ի ծովակէ Բենակայ առ ծովակն Գեղամայ . . . . .	195
Հովհան Գեորգիւս . . . . .	195
Ա. Կենցաղ հովուաց եւ քաղաքայնոց . . . . .	197
Բ. Լսն երկինք ձայնի առաքինի մանկանց . . . . .	205
Գ. Երախտեաց ծառատունկք . . . . .	210
ԵՍՀԱՊԵՏ . . . . .	217
Հայոց աշխարհիկ . . . . .	223
Հայ Հայրենիք . . . . .	229
Ողբամ դրեզ Հայոց աշխարհ . . . . .	258
Մախառ սարերն . . . . .	246
Հրազդան . . . . .	248
Շուշանն Շաւարշանայ . . . . .	258
Պլպուշն Աւարայրի . . . . .	281
Առտ Երկաթ . . . . .	288
Լուսնկայն Գերեզմանաց Հայոց . . . . .	288

էջ .	տող	Սխալ	Ուղիղ
419	9	նշանակել	նշանակել
425	19	այրիանա	այրիանայ
435	14	են գինդք	եւ գինդք
435	40	մղձեալ	մղձկեալ



պոստ

Ա 2-1

ԲՄԿ-Գ

№ 1 MAR 2013

1516

Հայաստանի Ազգային գրադարան



NL0445889

